

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
փետրվարի 23-ի նիստի N 8
արձանագրային որոշման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
«ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 2017-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՊԼԱՆԻ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՄՆ ՄԶԳ- Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԱՊ – Ազգային պարկ
ԲՀՀ – Բնության համաշխարհային հիմնադրամ
ԲՆ – Բնապահպանության նախարարություն
ԲՊՄՄ – Բնության պահպանության միջազգային միություն
ԴԱՊ – «Դիլիջան» ազգային պարկ
ԵՄ- Եվրոպական Միություն
ԿԲՀ – Կովկասի բնության հիմնադրամ
ԿՊ – «Դիլիջան» ազգային պարկի Կառավարման պլան
ՀԿ – Հասարակական կազմակերպություն
ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
ՄԱԲ - Միացյալ աշխարհի քուլտուրա
ՊՏ – Պահպանվող տարածք
ՊՈԱԿ - Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՈԻԹՀՍ վերլուծություն – Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների ու սպառնալիքների վերլուծություն
ՓԲԸ- Փակ բաժնետիրական ընկերություն
2006 ՀՀ օրենքը - ՀՀ օրենքը Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006)

ՆԱԽԱԲԱՆ

«Դիլիջան» ազգային պարկ պետական ոչ առևտրային կազմակերպության նախորդ կառավարման պլանն ընդգրկում էր 2007-2011 թվականները: Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ և Կովկասի բնության հիմնադրամի ֆինանսական և տեխնիկական աջակցությամբ մշակվեց սույն կառավարման պլանը, որն ընդգրկում է 2017-2026 թվականները: 2021 թվականին կիրականացվի միջանկյալ գնահատում և կկազմվի միայն 2022-2026 թվականների գործողությունների ծրագիր /գործունեության պլան/:

Կառավարման պլանի մշակման գործընթացում կիրառվել է մասնակցային մոտեցում (նույն սեղանի շուրջ համախմբելով շահագրգիռ կողմերին՝ հասարակական կազմակերպություններին, ազգային պարկի ղեկավարներին, բնապահպանության նախարարության և համայնքների ներկայացուցիչներին ու փորձագետներին), ինչպես նաև ամբողջական վերլուծության մեթոդաբանություն՝ անդրադառնալով ԴԱՊ-ի ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկություններին, ներկայիս իրավիճակին, ազգային և տարածաշրջանային ռազմավարական ծրագրերին, ազգային օրենսդրությանը, միջազգային նորմերին և ուղեցույցներին, առկա տնտեսական ներուժին ու ԴԱՊ-ի գործունեության համար կարևոր՝ ֆինանսավորման հնարավորություններին:

Վերլուծությունների հիման վրա սահմանվել են ազգային պարկի գերակայությունները և զարգացմանն ուղղված միջոցառումները: Կառավարման պլանի նախագիծը և առաջնահերթ գործողությունները քննարկվել են տեղի համայնքների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


1. «Դիլիջան» ազգային պարկի նկարագրությունը և դրա բնական ու մշակութային առանձնահատկությունները

1) «Դիլիջան» ազգային պարկը գտնվում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) հյուսիս-արևելքում: Հայաստանի Հանրապետության տարածքը ներառում է լանդշաֆտային յոթ հիմնական գոտիներ՝ անապատային, կիսաանապատային, չոր տափաստանային, տափաստանային, անտառային, ենթաալպյան և ալպյան, որոնք ներառում են բարձր լեռնային գագաթներ, բերրի հովիտներ, անտառներ և գեղատեսիլ գոյացություններ:

2) Հանրապետությունում հոսում են ավելի քան 200 գետ և գետակ՝ ձևավորելով ջրվեժներ և սահանքներ, իսկ 200-ից ավելի հանքային աղբյուրներն ունեն տարբեր ջերմաստիճան և բազմապիսի բաղադրություն՝ աչքի ընկնելով իրենց բուժիչ հատկություններով:

3) «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունն ունի 33765 հա տարածք և հիմնականում դբաղեցնում է ՀՀ Տավուշի մարզը, փոքր հատվածներով նաև՝ Լոռու և Գեղարքունիքի մարզերը: Այն տարածվում է մի քանի լեռնաշղթաների լանջերին՝ 1070մ - 2900մ բարձրությունների վրա: Այն ունի նաև 8167 հա բուֆերային գոտի:

Քարտեզ 1. «Դիլիջան» ազգային պարկ, Հայաստան



4) Ազգային պարկը վաղուց հայտնի է իր անտառային լանդշաֆտով, բուժիչ հանքային ջրերի աղբյուրներով, ինչպես նաև բնական և պատմաճարտարապետական հուշարձաններով: Գլոբալ համատեքստում այն գտնվում է «Կովկասյան կիզակետում», որը ԲՀՀ-ի ու Կենսաբազմազանության միջազգային պահպանության (Conservation International) կազմակերպության կողմից կենսաբազմազանության առումով ճանաչվել է աշխարհի կարևորագույն վայրերից մեկը: Տարածաշրջանային, ազգային և տեղական տիրույթում այն ունի դեռևս չօգտագործված, սակայն զարգացման մեծ տնտեսական ներուժ, որի կիրառումը

կնպաստի գյուղական համայնքների տնտեսության խթանմանը, իսկ ազգային պարկի բրենդավորումը այն կարող է դարձնել որպես նշանակալի զբոսաշրջային վայր:

5) Ազգային պարկի և հարակից համայնքների առանձնահատուկ արժեքներն են.


N	Արժեքներ
1.	Հարուստ կենսաբազմազանությունը
2.	Բնական անտառները
3.	Բնական ջրատարածքները (լճեր, լեռնային գետեր, ջրվեժներ)
4.	Լանդշաֆտային բազմազանությունը (ֆիզիկական միջավայր)
5.	Հանքային ջրի աղբյուրները
6.	Տեսարժան վայրերը (պատմամշակութային արժեքները)
7.	Համեմատաբար տաք և խոնավ կլիման՝ առանձնահատուկ միկրոկլիմայով
8.	Բերրի հողերը, բնական գյուղատնտեսությունը (ագրոէկոհամակարգեր)

6) Բարձրությունների մեծ տատանումները, լավ արտահայտված ուղղահայաց գոտիավորումը, տարբեր լանջային փովածքները և խիստ մասնատված տեղանքը պարկի տարածքն օժտել են բնական պայմանների բացառիկ բազմազանությամբ: 1200-1800մ բարձրության վրա գտնվող լեռնային միջին գոտին հիմնականում ծածկված է կաղնու և հաճարենու անտառներով: Բարձր լեռնային գոտուն բնորոշ են նոսր անտառները և բարձր խոտաբույսերը՝ փոված 1900մ բարձրության վրա: Տարածքն աչքի է ընկնում բարենպաստ կլիմայական պայմաններով և ռեկրեացիոն ռեսուրսներով: Պարկը հանդիսանում է 1150 տեսակի անոթավոր բույսերի (այդ թվում նաև յոթ էնդեմիկ տեսակների), ինչպես նաև 286 տեսակի ողնաշարավոր կենդանիների կենսամիջավայր: Բնության ժառանգության տարածքներ են համարվում Աղավնավանքի կենու պուրակը, Հաղարծնի հաճարենու և Խաչարձանի կաղնու անտառները, Պարզ և Գոշի (Տգրկա) լճերը:

7) Այստեղ են գտնվում նաև մի շարք մշակութային հուշարձաններ և այլ մշակութային արժեքներ, որոնցից կարևորվում են Հաղարծնի վանքը (10-13 դար), Գոշավանքը (12-13 դար), Ջուխտակվանքը (11-13 դար), Մաթոսավանքը (10-13 դար), Աղավնավանքը (11 դար):

8) Ազգային պարկի հողային ծածկույթը՝ ըստ անտառների, արոտավայրերի, խոտհարքների, ժայռերի և քարքարոտ տարածքների (որոնք կարևոր են անգղերի, արծիվների և այլ թռչունների բնադրման և բնակության համար), թփուտների, վարելահողերի, լճերի, գետերի և բնությունից օտարված հողերի (հիմնականում վերաբերվում է ճանապարհներին) ներկայացված է ստորև.

Քարտեզ 2. ԴԱՊ-ի հողային ծածկույթը




2. «Դիլիջան» ազգային պարկի իրավական կարգավիճակը և նպատակը

1) Ազգային պարկը պետական ոչ առևտրային կազմակերպություն է և ստեղծվել է 2002 թվականին (փոխարինելով 1958 թ-ին հիմնադրված պետական արգելոցին), նպատակ հետապնդելով ապահովել լանդշաֆտների և կենսաբազմազանության պահպանումը, համահունչ տնտեսական զարգացումը, ինչպես նաև պատմամշակութային ժառանգության պահպանությունն Աղստև և Գետիկ գետերի ավազաններում: Ազգային պարկը հիմնելիս նախկին արգելոցի 28000 հա տարածքն ավելացել է՝ հասնելով 33765 հա-ի:

2) Ազգային պարկը տարածված է Դիլիջան քաղաքի և 9 գյուղական համայնքների վարչական սահմաններում: Դիլիջան քաղաքը և հինգ գյուղական բնակավայրեր (Թեղուտ, Հաղարծին, Գոշ, Խաչարձան և Աղավնավանք) գործնականում գտնվում են ԴԱՊ-ի սահմաններում: Չորս բնակավայրեր տեղակայված են պահպանվող տարածքի շրջակայքում՝ Ֆիլիտսովոն՝ արևմուտքից, Հովքը՝ հյուսիս-արևելքից, Սեմյոնովկան և Ծովագյուղը՝ հարավից:

Քարտեզ 3. ԴԱՊ—ի զբաղեցրած տարածքն ըստ համայնքների



3) Ազգային պարկն ունի լավ հնարավորություններ էկոտուրիզմի և բնապահպանական կրթության զարգացման, ինչպես նաև ժամանցի (ռեկրեացիայի) կազմակերպման համար:

4) Վաղ քրիստոնեական ժամանակաշրջանի բազմաթիվ պատմամշակութային հուշարձանները առանձնահատուկ գրավչություն են տալիս պարկին, իսկ Հաղարծին և Գոշավանք վանքերը տարածաշրջանի հայտնի պատմաճարտապետական հարստության բացառիկ օրինակներ են:

5) Ազգային պարկի գործառույթներն առաջիկայում պետք է ուղղորդվեն պարկի եզակի անտառների, լանդշաֆտների և կենսաբազմազանության, ինչպես նաև բնական և մշակութային հուշարձանների պահպանության արդյունավետության բարձրացմանը՝ ի շահ բնության և բնակչության:

3. Գոտիավորումը

1) «Դիլիջան» ազգային պարկի գոտիավորումը, սահմանները, սահմանների նկարագրությունը, զբոսաշրջային երթուղիները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի «Դիլիջան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին» N 204-Ն որոշմամբ:

4. Սոցիալ-տնտեսական բնութագիրը

1) Համայնքների բնակչությունը: Ազգային պարկի հարակից բուֆերային գոտում տեղակայված 10 բնակավայրերը (Դիլիջան քաղաքը և 9 գյուղական բնակավայրերը) տեղաբաշխված են երեք տարբեր մարզերում, ինչը որոշակի խնդիրներ է առաջացնում տեղական իշխանությունների և ազգային պարկի միջև փոխհարաբերություններում: Ազգային պարկի կառավարման պլանում հաշվի է առնվել այս հանգամանքը՝ թե հնարավորությունների ընձեռնման, և թե խոչընդոտների հարուցման տեսանկյունից: Ստորև ներկայացված է ազգային պարկին հարակից բնակավայրերի բնակչության վերաբերյալ տեղեկատվությունը: Ազգային պարկին հարակից բնակավայրերի բնակչությունն ըստ 2011 թվականի մարդահամարի տվյալների

ՀՀ 2011թ-ի մարդահամարի արդյունքները		
Բնակավայր	Փաստացի բնակ.	Մշտական բնակ.
Տավուշի մարզ		
Դիլիջան	13518	17712
Գոշ	882	1.115
Թեղուտ	1.208	1.342
Հաղարծին	3.281	3.791
Աղավնավանք	298	337
Խաչարձան	331	360
Հովք	422	435
Լոռու մարզ		
Ֆիոլետովո	1 178	1 325
Գեղարքունիքի մարզ		
Սեմյոնովկա	233	253
Ծովագյուղ	3.624	3.943
Ընդամենը	23797	29288

2) Տնտեսական ենթակառուցվածքները:

ա. Դիլիջանի ջրամատակարարումն իրականացվում է մակերևութային ջրերից: Զրամատակարարման համակարգի մատակարարումն իրականացվում է «Գոլովինո», «Բլրան» և «Ֆրոլովո» գոտիներից: Գետերի ջրերը մաքրվում են մաքրման կայանում, բացի Շամախյան գետից, որի ջրերը հոսում են դեպի բաշխման ցանց՝ առանց նախնական մշակման: Մակերևութային ջրերը բնութագրվում են թեթև հանքայնացմամբ, չափավոր կոշտությամբ և բարձր ազրեսիվությամբ: Ստորերկրյա ջրերի ավազանը հարուստ է բարձրորակ խմելու ջրով՝ հանդիսանալով ջրամատակարարման աղբյուր: Մակերևութային ջրերն ունեն սելավների ձևավորման թույլ պոտենցիալ և միջին ակտիվացում (3-10 տարին մեկ): Գարնանային հալքի ժամանակ ջրի աղտոտման ռիսկը բարձր է, քանի որ Դիլիջան քաղաքի ջրի մաքրման կայանը վերանորոգման և արդիակայացման կարիք ունի:

բ. Դիլիջան քաղաքը և հարևան բնակավայրերը (ազգային պարկի տարբեր հատվածները ներառյալ) էլեկտրաէներգիա են ստանում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Աղստև» մասնաճյուղից: Ազգային պարկի տարածքում և դրա բուֆերային գոտում

գործող մի քանի հյուրանոցներում և հյուրատներում առկա են արևային ջրատաքացուցիչներ: Ազգային պարկի տարածքով անցնում է էլեկտրաէներգիայի բարձրավոլտ գիծ:

գ. Ազգային պարկի հարակից համայնքներից գազաֆիկացված են Դիլիջան, Հաղարծին, Թեղուտ, Ծովագյուղ, Սեմյոնովկա, Ֆիոլետովո բնակավայրերը: Գոշ, Աղավնավանք, Հովք և Խաչարձան բնակավայրերում ընթանում են գազաֆիկացման աշխատանքներ: Ազգային պարկի որոշ հատվածներով անցնում են բարձր ճնշմամբ գազատարներ:

դ. Թափոնների հեռացումը Դիլիջանում իրականացվում է պայմանագրային հիմունքերով, թեև ֆինանսական ռեսուրսների սղության պատճառով այս ծառայությունը լիարժեք չի իրականացվում քաղաքի ամբողջ տարածքում: Թափոնների հավաքման գործընթացում ամենամեծ խնդիրը քաղաքում աղբավայրի սահմանափակ կարողություններն են և դրանց տեղակայվածությունը գետից 50-60մ հեռավորության վրա:

ե. Տրանսպորտային ցանցը լավ է զարգացած, իսկ Երևան-Սևան-Իջևան ճանապարհն անցնում է Դիլիջան քաղաքի և ազգային պարկի միջով: Երևանից Դիլիջան հեռավորությունը 96 կմ է, ճանապարհը՝ համեմատաբար բարձր որակի: Դիլիջանից Իջևան՝ ՀՀ Տավուշի մարզկենտրոն, հեռավորությունը 40 կմ է: Դիլիջան քաղաքի կենտրոնից ձգվում է մեկ այլ ճանապարհ Դիլիջան-Վանաձոր ուղղությամբ: Հեռավորությունը Վանաձորից՝ ՀՀ Լոռու մարզկենտրոնից, ևս 40 կմ է: Երկու ճանապարհներն էլ Երևանը միացնում են Թբիլիսիի հետ (260 կմ):

զ. 1986թ-ից Դիլիջանը երկաթուղային ցանցի կարևոր բաղադրիչ է հանդիսանում (Երևան-Դիլիջան, 144 կմ): Ազգային պարկի տարածքով անցնող ճանապարհներից ասֆալտապատ է միայն 15 կմ-ը (դեպի Հաղարծին եկեղեցական համալիր և մասնակիորեն՝ դեպի Պարզ լիճ տանող ճանապարհները):

3) Սոցիալ-տնտեսական նախագծերը:

ա. ՀՀ վարչապետի 2013 թվականի նոյեմբերի 22-ի «ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի զարգացման միջոցառումների ծրագիր հաստատելու մասին» N1075-Ա որոշում: Դիլիջանի քաղաքային համայնքի զարգացման միջոցառումների ծրագիրը ներառում է 46 բազմաբնույթ միջոցառումներ՝ ընդգրկելով քաղաքաշինության, զբոսաշրջության, առևտրի և սպասարկումների, մշակույթի, կրթության և սպորտի, արվեստի, առողջապահության, կապի և տրանսպորտի, բնապահպանության և ենթակառուցվածքների զարգացման ոլորտները: Ազգային պարկին ուղղակիորեն առնչվում են հետևյալ միջոցառումները՝ Դիլիջան քաղաքի գլխավոր հատակագծի մշակում՝ ներառյալ գոտիավորման վերաձևավորում (2014-2015թթ.), ՀՀ Տավուշի մարզի տարածքային հատակագծման նախագծի մշակում՝ ներառյալ Դիլիջան, Գոշ, Աղավնավանք, Թեղուտ, Խաչարձան և Հաղարծին համայնքները (2015-2016թթ.), Դիլիջան քաղաքի սողանքային տարածքների նախագծահետազոտական աշխատանքների կատարում, ինչպես նաև հակասողանքային միջոցառումների իրականացում (2014-2016թթ.), Մարզ և քաղաք մուտքերի բարելավում, տարբեր լեզուներով ցուցանակների տեղադրում (2014-2015թթ.), Առևտրի և ծառայությունների մատուցման ոլորտում մասնագիտական գիտելիքների և փորձառության բարելավում (2014-2015թթ.), Դիլիջանում այցելուների տեղեկատվական կենտրոնի ստեղծում և զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների համակարգին ինտեգրում (2014-2017թթ.), Դիլիջանի հարակից համայնքների գյուղացիական տնտեսությունների համար դասընթացների կազմակերպում (մինչև 2016թ.), Մշակութային փառատոնների կազմակերպում (2014-2017թթ.), Միջազգային

կրթահամալիրի կառուցում (2014թ.), ֆինանսների նախարարության ուսումնական կենտրոնի հիմնում (2013-2015թթ.), Դիլիջանի կենտրոնական դպրոցի կառուցում (2014թ.), Դիլիջանի քաղաքային փողոցների և պատմամշակութային հուշարձանների, Պարզ լիճ տանող ճանապարհների վերանորոգում, հեծանվային արահետների կառուցում, Երկաթուղային ճեպընթաց էլեկտրագնացքով Երևան-Դիլիջան ուղևորափոխադրումների կազմակերպման իրագործելիության ուսումնասիրություն (2014-2015թթ.), Փողոցային լուսավորության համակարգի բարելավում (2014-2017թթ), փողոցային նշանների տեղադրում և այլն (2014թ), Ծառատունկ Դիլիջան քաղաքում, ներառյալ սողանքների գոտում (2013-2015թթ.), «Դիլիջան» ազգային պարկի կառավարման պլանի մշակում (2013-2015թթ.), Նոր աղբավայրի տարածքի ընտրություն, ինժեներակառուցական հետազոտություն և նախագծի մշակում, գործող աղբավայրի կոնսերվացման նախագծի մշակում (նոր աղբավայրը ծառայելու է Դիլիջան քաղաքին և ՀՀ Տավուշի մարզի այլ համայնքներին) (2014-2015թթ.), Փողոցների մաքրության և սանիտարական վիճակի բարելավում, կանաչ քաղաք կենսակերպի գովազդում (2014-2017թթ.), Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերանորոգում (2013-2014թթ.), Մաքրման կայանի կառուցում (2013-2014թթ.), Քաղաքային ջրավազանների, լճակների, գետերի հունների մաքրում (2014-2015թթ.):

բ. «IDeA» հիմնադրամի կողմից առաջարկված «Դիլիջանի զարգացման ծրագիրը»: «IDeA» հիմնադրամի Դիլիջանի զարգացման ծրագիրը հիմնված է «կառուցել բնակելի քաղաք՝ տրամադրելով հասանելի և մատչելի ենթակառուցվածքներ և ծառայություններ, նպաստել քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացմանը» տեսլականի վրա: Նախատեսվում է Դիլիջանը դարձնել կրթական, մշակութային և զբոսաշրջության կենտրոն: 2014 թվականին հիմնադրվեց Դիլիջանի միջազգային դպրոցը, որն առաջին միջազգային քոլեջն է Հայաստանում և հանդիսանում է Միացյալ Աշխարհի Քոլեջներ (ՄԱՔ) շարժման անդամ (ՄԱՔ 14 քոլեջներից մեկն աշխարհում): Նախատեսված մի շարք գործողությունների արդյունքում ակնկալվում են բազմապիսի ներդրումային ծրագրեր: Դրանց շարքում ամենագրավիչ գաղափարներից է արկածային կենտրոնի ստեղծումը, որը կարող է բազմապատկել զբոսաշրջիկների հոսքը քաղաք և ազգային պարկ:

4) Տնտեսական գործունեություն: Ընդհանուր առմամբ, ռեկրեացիոն և տնտեսական գոտիներից 2006-2015թթ.-ին շուրջ 150 հա հողատարածքներ տրամադրվել են տնտեսվարող սուբյեկտներին՝ հողի կոնցեսիոն պայմանագրերի միջոցով: Կնքվել են 53 պայմանագրեր, որոնցից ամենախոշոր վարձակալները, ընդհանուր առմամբ, զբաղեցնում են 114 հա տարածք:

ա. «Քեմփ Վենչուր» ՓԲԸ (67 հա): Տարածքը հարում է Դիլիջանի միջազգային դպրոցին և զբաղեցնում է տարածքներ ազգային պարկի ռեկրեացիոն (հիմնական հատվածը) և տնտեսական գոտիներից: Ըստ բիզնես պլանի, այն պարսպապատվելու է և օգտագործվելու է որպես Դիլիջանի միջազգային դպրոցի սպասարկման տարածք՝ տնակներով, զրուցարաններով, ճեմնուղիներով, պտղատու ծառերով և այլն:

բ. ՀՀ ֆինանսների նախարարություն (22.54 հա): Տարածքը հարում է նախարարության ուսումնական կենտրոնին, որի շինարարական աշխատանքներն ընթանում են: Այն ցանկապատվելու է և օգտագործվելու որպես կենտրոնի սպասարկման տարածք:

գ. «Արքայանիստ» ՍՊԸ (11.8 հա): Ըստ պայմանագրի, տարածքն օգտագործվելու է ռեկրեացիոն գործունեության կազմակերպման համար, սակայն շինարարական աշխատանքները դեռևս չեն սկսվել:

դ. ՀՀ Կենտրոնական բանկ (6.63 հա): Տարածքը գտնվում է բանկի նորակառույց ուսումնական կենտրոնի հարևանությամբ: Այն հանդիսանում է կենտրոնի պահպանման տարածք:

ե. «Մեծ Տիրան» ՍՊԸ (6 հա): Տարածքն ընկած է Հաղարծին համալիր տանող ճանապարհի հարևանությամբ: Որևէ գործունեություն դեռևս չի իրականացվել:

զ. Պարզ լճի տարածքը, որը համարվում է էկոլոգոսաշրջության ամենակարևոր ուղղություններից մեկը, ևս 25 տարով փոխանցվել է մասնավոր կառավարման՝ 2006թ. հողի կոնցեսիայի պայմանագրով (վարձակալը «Օպելա» ՍՊԸ-ն է): Տարածքում կառուցվել են ավտոկայանատեղի, ռեստորան, փոքր հյուրատնակներ և այլ պարզ ենթակառուցվածքներ:

է. Մյուս վարձակալված տարածքները փոքր են և ցրված պարկի տարբեր հատվածներում:

ը. Ներկայումս, հողերի վարձավճարներից փաստացի եկամուտը կազմում է 31 միլիոն դրամ, թեև տարբեր վարձակալներ ունեն էական չափերի հասնող պարտքեր, (ստորև ներկայացված են կնքված պայմանագրերի թիվն ու դրանցից ստացված եկամուտը՝ 2010-2014թթ.):

Հողերի վարձակալության պայմանագրերի թիվը և եկամուտները՝ 2010-2014 թթ.

	2010	2011	2012	2013	2014
Պայմանագրերի քանակը	44	46	47	53	53
Գումարը, միլիոն դրամ	10.5	25.2	26.7	27.2	30.8

* Ներառված չէ 01.01.2015թ.-ի դրությամբ 23.1 միլիոն դրամ չվճարված վարձավճարները:

թ. Տեղի բնակչությունը վառելիքայտը պատմականորեն ձեռք է բերել ազգային պարկի տարածքից, և վառելիքայտի օգտագործման ծավալը յուրաքանչյուր տնային տնտեսության կողմից տարեկան կազմում է 10մ³-30մ³ (պայմանավորված բնակարանի տեսակով և տվյալ բնակավայրի գազամատակարարման հանգամանքով): Այնուամենայնիվ ազգային պարկին հարող համայնքներում բարձր են օգտագործման ծավալները, ինչի հետևանքով ազգային պարկի տարածքում հաճախ են արձանագրվում անտառահատման դեպքեր:

ժ. Այնուամենայնիվ ազգային պարկի աշխատակազմի կողմից իրականացվող պատշաճ վերահսկողության արդյունքում քչացել են ապօրինի հատումները և փայտի հիմնական մասն իրացվում է օրինական ճանապարհով՝ ԴԱՊ աշխատակազմի վերահսկողության ներքո: Նախկինում ազգային պարկի տնտեսական գոտում օրինական հատումների իրավունքը պատվիրակվում էր հարակից համայնքների բնակիչներին՝ վաճառելով կոնկրետ տարածքի կամ ծառերի որոշակի խմբի հատման իրավունքը տեղացի անտառահատներին (վառելիքայտի դեպքում՝ ուղղակի տեղի բնակիչներին):

ժա. 2014թ-ից ազգային պարկի տարածքում խնամքի ու սանիտարական հատումները դադարեցվեցին և ներկայումս պարկի աշխատակազմը վաճառում է միայն տնտեսական և ռեկրեացիոն գոտիներում տապալված ծառերի փայտանյութը և վառելիքայտը: Նման

գործելաոճը լիովին համապատասխանում է ազգային պարկի նպատակներին՝ նկատի ունենալով նաև տնտեսական գոտու տարածքի կրճատման տեսլականը:

Ժբ. Ստորև ներկայացվում է փայտանյութի վաճառքի ծավալները և ստացված եկամուտները 2010-2014թթ. ընթացքում:

Փայտանյութի վաճառքը ԴԱՊ ՊՈԱԿ-ի կողմից 2010-2014թթ

Աղբյուրը և օգտագործումը	2010		2011		2012		2013		2014	
	Ծավալը մ ³	հազար դրամ	Ծավալը մ ³	հազար դրամ	Ծավալը մ ³	հազար դրամ	Ծավալը մ ³	հազար դրամ	Ծավալը մ ³	հազար դրամ
Քամատապալ և ծյունակոտոր										
Վառելափայտ	1,549	3,093	1,549	3,093	937	4,668	904	4,422	3,186	15,982
Շինափայտ	61	1,868	61	1,868	22	614	71	2,275	2	48
Ընդամենը	1,610	4,961	1,610	4,961	959	5,282	975	6,697	3,188	16,030
Տնտեսական գոտում հատում										
Վառելափայտ	1,399	6,850	1,399	6,850	1,533	7,396	2,165	10,429	-	-
Շինափայտ	260	7,333	260	7,333	370	10,617	503	13,864	-	-
Ընդամենը	1,659	14,183	1,659	14,183	1,903	18,013	2,668	24,293	-	-
Ընդհանուրը	3,269	19,144	3,269	19,144	2,861	23,295	3,643	30,990	3,188	16,030

Ժգ. Ազգային պարկի տարածքից հավաքված սունկը, ընկույզը և մասուրը հիմնական կողմնարդյունքերն են, ինչը եկամտի հավելյալ աղբյուր է տեղի բնակչության համար: Բացի սնկի հավաքից, հատապտուղների, ուտելի բույսերի և դեղաբույսերի հավաքը կատարվում է տարերայնորեն և ազգային պարկի կողմից համապատասխան քայլեր են ձեռնարկվում դրանք համակարգելու ուղղությամբ:

Ժդ. Ազգային պարկն ունի 1745 հա խոտհարքներ և 5463 հա արոտավայրեր, որոնք լիարժեք չեն օգտագործվել: Սա չօգտագործված ներուժ է և պետք է հաշվի առնել ազգային պարկի հետագա տնտեսական գործունեության ընթացքում:

5. Զբոսաշրջություն և ռեկրեացիա

1) Զբոսաշրջությունը 1990–ական թվականներից Հայաստանի տնտեսության առանցքային ոլորտերից է և ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության տվյալների, զբոսաշրջիկների մեծ մասը գալիս է Ռուսաստանի Դաշնությունից, Վրաստանի Հանրապետությունից, Եվրամիության երկրներից և Իրանի Իսլամական Հանրապետությունից:

2) Ըստ ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության զեկույցի (2014թ.)՝ 2012 թվականին Հայաստան է այցելել 843.000 զբոսաշրջիկ, որոնց 24 տոկոսը՝ հանգստի նպատակով: Սփյուռքահայերի թիվը կազմել է այցելուների ավելի քան 65%-ը: Ըստ զեկույցի՝ ՀՀ Տավուշի մարզի զբոսաշրջիկների թիվը տարեկան կազմում է 28.000 այցելու: Դիլիջան քաղաքի գիշերակացի հնարավորությունները գնահատվում են շուրջ 1000 մահճակալ/օր, ներառյալ ընտանեկան հյուրատները:

3) ՀՀ Տավուշի մարզի զբոսաշրջային հիմնական կենտրոնը շուրջ 20.000 բնակչություն ունեցող Դիլիջան քաղաքն է, որը գտնվում է 1500 մ բարձրության վրա և ունի ավելի քան 100 տարվա «զբոսաշրջության պատմություն»: 19-րդ դարի վերջին Դիլիջանը ձևավորվեց որպես առողջարանային քաղաք՝ իր մշակութային օջախներով: Խորհրդային տարիներին Դիլիջանում առկա էին ռազմարդյունաբերության մատակարարման ձեռնարկություններ, որոնք ներկայումս չեն գործում:


4) Ազգային պարկի կարևոր առավելություններից մեկը Դիլիջանի հյուրընկալելու հնարավորությունն է, որը բնութագրվում է հյուրատներից մինչև թանկարժեք հյուրանոցներում համապատասխան ծառայությունների մատուցմամբ: Կանոնավոր այցելուների հոսքը ամառային արձակուրդներին և հանգստյան օրերին թեև համարվում է ազգային պարկի ներկայիս հնարավորությունը, այնուամենայնիվ ազգային պարկը դեռևս լիովին չի իրացրել իր զբոսաշրջային հնարավորությունները և ունի զգալի ներուժ՝ ներքին այցելուներին և օտարերկրացի զբոսաշրջիկներին հյուրընկալելու առումով: Բացի հիմնական հյուրանոցներից, Դիլիջան քաղաքի շատ ենթակառուցվածքներ ակտիվ են միայն հիմնական զբոսաշրջային ժամանակահատվածում: Որոշ օթևանատներ և սննդի կետեր ժամանակավոր կառույցներ և կրպակներ են, մինչդեռ մի քանի հյուրանոցներ և հյուրատներ գործում են շուրջ տարի:

5) Զբոսաշրջության հիմնական ժամանակաշրջանն ամառն է, երբ նկատվում է այցելուների զգալի հոսք ազգային պարկի որոշ տարածքներ՝ առավելապես դեպի Հաղարծին, Գոշավանք, Պարզ և Գոշի լճեր: Տարվա մյուս ամիսներին այցելուների թիվը նվազում է:

6) Ազգային պարկի այցելուների վերաբերյալ համակարգված վերլուծության բացակայության պատճառով հաճախելիության վերաբերյալ հիմք են ընդունվում միայն մուտքի կտրոնները գնած և այցելուների կենտրոնում գրանցված այցելուների տվյալները: 2015 թվականին ազգային պարկ այցելած զբոսաշրջիկներից գանձվել է ընդամենը 810 հազար դրամ (մեկ անձի համար՝ 500 դրամ), մինչդեռ կոնցեսիոն պայմանագրի ներքո գործող Պարզ լճում ամառային ամիսներին օրական այցելում են մի քանի հարյուր այցելու: Ըստ վերլուծությունների, այցելուների շուրջ 90%-ը Հայաստանի քաղաքացիներ են, իսկ 20%-ն այցելում են 1 օրով: Զբոսաշրջիկների 10%-ը օտարերկրացի են: Հատկանշական է, որ արևմտաեվրոպացի և ամերիկացի այցելուները հիմնականում 50 տարեկանից բարձր հասակի են, մինչդեռ

արևելաեվրոպացի և ռուս այցելուների տարիքն առավելապես 25-40 տարեկանի սահմաններում է: Օտարերկրացիների համար Դիլիջանը հարմար զբոսաշրջային վայր է Հայաստան այցելության, ինչպես նաև Վրաստանի և Հայաստանի միջև ճանապարհորդության ընթացքում և կարևոր համալրում կարող է հանդիսանալ իրենց ուղևորությունը բազմազան դարձնելու համար (հատկապես դիտարժան բնության և Հայաստանի մյուս հատվածներից տարբերվող լանդշաֆտի առումով): Ընդհանուր առմամբ, ազգային պարկի տարածքում կան ավելի քան 220 պատմական, հնագիտական և մշակութային վայրեր, որոնց մեծ մասը ընդգրկված չէ զբոսաշրջային առաջարկներում՝ իրենց հեռավորության պատճառով: Վերջիններիս զբոսաշրջության տիրույթ ընդգրկելու նպատակով առաջիկայում անհրաժեշտ է համապատասխան քայլեր ձեռնարկել դրանք պահպանելու վերականգնելու և արժևորելու ուղղությամբ: Վերջին տարիներին ազգային պարկի տարածքում կազմակերպվել են մի քանի էկոտուրիստական երթուղիներ և դրանց համապատասխան ձևավորվել ենթակառուցվածքներ, որոնք ներկայացված են 3-րդ քարտեզում.

Քարտեզ 3. ԴԱԴ-ի ներկայիս էկոտուրիստական երթուղիները



7) Դիլիջան ազգային պարկի հիմնական թիրախ խումբը միջին խավի ընտանիքներն են և ընկերներով խմբերը: Այցելուների թվում դեռևս սակավաթիվ են սփյուռքահայերը, որոնց անհարաժեշտ է դիտարկել որպես կարևոր թիրախային խումբ, քանզի նրանք ունեն բավարար ֆինանսական միջոցներ և կարող են նպաստել դրական միտումների ձևավորմանը: Օտարերկրացիներից հիմնականում թիրախային խմբում են ընդգրկվում անհատ և խմբակային զբոսաշրջիկները, որոնք Հարավային Կովկասում ճանապարհորդում են պատմական, մշակութային և բնության տեսարժան վայրեր այցելելու նպատակով:

8) Ազգային պարկի տարածքում չկանոնակարգված զբոսաշրջության հետևանքով էկոտուրիստական երթուղիների և ջրային մակերեսների շրջակայքում կարելի է հանդիպել կենցաղային թափոնների, ինչը հանդիսանում է զբոսաշրջությանը խոչընդոտող գործոն:

9) Ազգային պարկի սահմաններում կարող են կազմակերպվել նաև գիտակրթական այցելությունները: Մասնավորապես՝ կենին (Taxus baccata), որը մեծ գիտական նշանակություն ունեցող փշատերև ռելիկտային տեսակ է և գերիշխում է Աղավնավանքի կենու պուրակում: Այս տեսակի ծառերը հայտնի են ուշ-պալեոգեն/վաղ-նեոգեն դարաշրջաններից: Այս պուրակում կարող են կազմակերպվել կրթական այցեր, որի ընթացքում դպրոցականները, ուսանողները և այլ այցելուներ կարող են կարծիք կազմել Հայաստանի դենդրոաշխարհի բազմապիսի ներկայացուցիչների վերաբերյալ:

6. ԴԱՊ-ի էկոհամակարգերի և կենսաբազմազանության սպառնալիքները

1) ԴԱՊ էկոհամակարգերի և կենսաբազմազանության հիմնական սպառնալիքներն են.

- ա. ենթակառուցվածքների ոչ համաչափ զարգացումը,
- բ. ապօրինի ծառահատումները,
- գ. կենդանիների արածեցումը,
- դ. չկարգավորված զբոսաշրջությունը և ռեկրեացիան,
- ե. աղտոտումը,
- զ. որսագողությունը և անօրինական ձկնորսությունը,
- է. բույսերի չհամակարգված հավաքը,
- ը. սողանքները (այդ թվում՝ քարաթափումները),
- թ. օտարածին (ինվազիվ) տեսակները և հիվանդությունները,
- ժ. հրդեհները,
- ժա. կլիմայի փոփոխությունը:

2) Ենթակառուցվածքների անհամաչափ զարգացումը կանխելու նպատակով առաջարկվում է խստորեն վերահսկել առկա և նոր կոնցեսիոն պայմանագրերում նախատեսված պարտավորությունների կատարման գործընթացը:

3) Ապօրինի ծառահատումները կանխելու նպատակով առաջարկվում է ուժեղացնել անտառների վերահսկողությունը՝ ներդնելով ազգային պարկի տարածք ելումուտ անող բոլոր բեռնատարների և փայտի տեղափոխման գործընթացում ներգրավված այլ տեխնիկական միջոցների հսկման համակարգ:

4) Անհրաժեշտ է խիստ վերահսկողություն սահմանել ազգային պարկի տարածքում կենդանիների արածեցման նկատմամբ և արածեցումը կանոնակարգելու և արոտների կառավարման այլ գործիքակազմ կիրառելու շնորհիվ էականորեն կնվազի ապօրինի արածեցումից սպառնացող վտանգը:

5) Զբոսաշրջությունը և ռեկրեացիոն գործունեությունը պետք է կարգավորվեն բացառապես ազգային պարկի կառավարման պլանով նախատեսված չափանիշներին և տարածքի գոտիավորման սխեմաներին համապատասխան, ինչը կնպաստի ճիշտ ենթակառուցվածքների ձևավորմանը և տեսակների ու էկոհամակարգերի պահպանմանը: Ազգային պարկի գրավչության բարձրացմանն ուղղված հաջողված լուծումներ կարող են հանդիսանալ տեսանյութերը, բացիկները, գրքույկները, հուշանվերները: Զբոսաշրջության խթանման գործոններ կարող են հանդիսանալ նաև տարբեր գիտահանրամատչելի և

մշտադիտարկման բազմաբնույթ ծրագրերի իրականացումը և հարակից համայնքների ազգաբնակչության իրազեկվածության բարձրացումը: Ներկայումս ռեկրեացիոն գործունեության բացասական ազդեցությունը վառ արտահայտված է միայն Պարզ լճի հարևանությամբ, Հաղարծնի ձորում, առողջարանների և հանգստյան գոտիների շրջակայքում, ինչպես նաև Դիլիջան քաղաքի մերձակայքում: Չկանոնակարգված զբոսաշրջությունը ազգային պարկի առանձին հատվածներում հանգեցնում է էկոհամակարգերի աղտոտմանը, ինչին նպաստում է նաև հարակից համայնքներում գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ օդակաթիլային եղանակով թունաքիմիկատների օգտագործումը: Վերջինիս բացառումը բուֆերային գոտում էականորեն կնպաստի ազգային պարկի էկոհամակարգերի պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը: Ազգային պարկի առանցքային հատվածներում ուղեփակոցների տեղադրումը կնվազեցնի չկանոնակարգված զբոսաշրջության, ապօրինի ծառահատումների, որսագողության և այլ ապօրինի գործունեության դեպքերը:


6) Սողանքները կանխելու նպատակով երկրաբանների ներգրավմամբ անհրաժեշտ է հայտնաբերել, քարտեզագրել վտանգավոր հատվածները և այդ վայրերում իրականացնել հակաէրոզիոն հատկանիշներով օժտված բույսերի (օրինակ, չիչխան և այլն) ծառատունկ:

7) Ազգային պարկի տարածքում անհրաժեշտ է ուժեղացնել հրդեհավտանգ տեղամասերի հսկողությունը և զարգացնել արտակարգ իրավիճակներում արագ արձագանքող հակահրդեհային միջոցառումներ իրականացնելու կարողությունը:

7. ԴԱՊ-ի կառավարումը

1) Ազգային պարկի կառավարման մարմինը «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունն է (ԴԱՊ ՊՈԱԿ), որի գործունեությունը կարգավորվում է կանոնադրությամբ: ԴԱՊ ՊՈԱԿ-ը իր գործունեության վերաբերյալ պարբերաբար հաշվետվություններ է ներկայացնում ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և ազգային վիճակագրական ծառայություն:

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառուցվածքը



2) ԴԱՊ ՊՈԱԿ-ը ղեկավարում է տնօրենը, որին նշանակում է ՀՀ քննապահպանության նախարարը: ՊՈԱԿ-ի կազմում ընդգրկված են չորս կառուցվածքային ստորբաժանում և շուրջ 90 աշխատակից: Տնօրենի անմիջական ենթակայության տակ են գտնվում փոխտնօրենները, գլխավոր հաշվապահը, վարչակազմի ղեկավարը, իրավաբանը և տնօրենի օգնականը: Պահպանության գծով փոխտնօրենը համակարգում է ազգային պարկի բոլոր մասնաճյուղերի ղեկավարների գործունեությունը, գիտության գծով փոխտնօրենը՝ գիտական և մոնիթորինգի աշխատանքներն, իսկ ռեկրեացիայի գծով փոխտնօրենը՝ էկոտուրիզմին և ռեկրեացիային առնչվող գործառույթները:

3) Ազգային պարկի գլխամասային շենքը կառուցվել է դեռևս խորհրդային տարիներին, և ունի բավարար տարածք, թեև կա որոշակի բարեկարգման կարիք: Այցելուների շենքը կառուցվել է հինգ տարի առաջ, որտեղ տեղակայված են նաև գիտական աշխատանքների ու ռեկրեացիայի ստորաբաժանումները: Գլխամասային շենքի հարևանությամբ կան ավտոտնակներ, պահեստներ և տնտեսական նշանակություն ունեցող այլ օժանդակ շինություններ, որոնց վերանորոգումը կնպաստի դրանց երկարատև նպատակային օգտագործմանը:

4) «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի վարչական հարցերի և ֆինանսատնտեսական ստորաբաժանման աշխատակազմը ներառում է 15 աշխատակից՝ իրականացնելով ազգային պարկի վարչատնտեսական և ֆինանսական գործառույթները: Ազգային պարկի պահպանության ստորաբաժանումը ամենաընդարձակ ստորաբաժանումն է (ունի 66 աշխատակից) և ղեկավարվում է տնօրենի տեղակալի կողմից: Վերջինս համակարգում է պարկի հինգ մասնաճյուղերը, որոնցից յուրաքանչյուրն ունի ղեկավար, ղեկավարի օգնական և մի քանի տեսուչներ: Յուրաքանչյուր տեսուչ միջին հաշվով վերահսկում է 703 հեկտար տարածք և լրացուցիչ աշխատակազմի անհրաժեշտություն կա միայն Աղավնավանքի տեղամասում: Ազգային պարկի պահպանությունն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է սահմանել շուրջօրյա հսկողություն, քանզի երեկոյան ժամը 6:00-ից մինչև առավոտյան 9:00-ը պարկը չի հսկվում, ինչն էլ ապօրինի գործողությունների (ծառահատումներ, որսագողություն և այլն) հնարավորություններ է ստեղծում: Մինչդեռ ներկայումս գործող երկու օպերատիվ խմբերի վերակազմավորման արդյունքում հնարավորություն կընձեռնվի իրականացնել 24 ժամյա պարեկային ծառայություն, իսկ ռոտացիոն սկզբունքով տեսուչների գիշերային հերթապահության համակարգի ներդրումը, սահմանազատիչ, նախազգուշացնող և ուղղորդող ցուցանակների տեղադրումը, ինչպես նաև ճանապարհներին տեսախցիկների տեղադրումը թույլ կտա կտրուկ բարձրացնել պահպանության արդյունավետությունը: Էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժինը համակարգվում է ռեկրեացիայի գծով փոխտնօրենի կողմից: Բաժինը, ունենալով սահմանափակ հաստիքներ, թեև մշակել է մի քանի զբոսաշրջային երթուղիներ, այնուամենայնիվ դրանց հնարավորությունները լիարժեք չեն օգտագործվում և դրանցից ստացված հասույթն աննշան է: Գիտության գծով փոխտնօրենը համակարգում է գիտության ստորաբաժանման աշխատանքները: Թեև գիտության բաժնի աշխատակիցների թիվը բավարար է, այնուամենայնիվ կենսաբազմազանության մշտադիտարկման ուղղությամբ նրանք վերապատրաստման կարիք ունեն, քանի որ աշխատակիցները մշտապես չեն իրականացնում մշտադիտարկման աշխատանքներ և չկա մշտադիտարկման համար անհրաժեշտ տեխնիկա: Բաժնի կառուցվածքում գործում է լաբորատորիա, սակայն վերջինիս հնարավորությունները լիարժեք չեն օգտագործվում:

5) Սարքավորումները շատ հին են և պետք է փոխարինվեն: Մեքենան չի կարող օգտագործվել դաշտում և առանձնապես արժեք չի ներկայացնում: Դրական հանգամանքն այն

է, որ աշխատակազմի կազմում կա աշխարհագրական տեղեկատվության համակարգի մասնագետ և համապատասխան GIS ծրագրեր:

8. Բյուջեն և ֆինանսավորման աղբյուրները

1) 2010-2015թթ. ընթացքում ազգային պարկը ֆինանսավորվել է ՀՀ պետական բյուջեից, հողերի վարձավճարներից և վառելափայտի ու փայտանյութի վաճառքից ստացված հասույթից: Միջազգային կազմակերպությունները, մասնավորապես՝ Կովկասի բնության հիմնադրամը (CNF) և քարտուղարությունը (TJS) ազգային պարկին տրամադրել են խիստ սահմանափակ աջակցություն: Էկոտուրիզմի ներուժը առայժմ պատշաճ չի օգտագործվում և գրեթե եկամուտներ չի ստացվել զբոսաշրջությունից: ՀՀ պետական բյուջեից ազգային պարկի ֆինանսավորումը 2014թ. էականորեն աճել է (54%), մինչդեռ փայտանյութի և վառելափայտի իրացումից ստացված հասույթը նվազել է, ինչը պայմանավորված է անտառահատման գործընթացում իրականացված փոփոխություններով: Որպես կանոն, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվում են պարկի բազային ծախսերը՝ աշխատավարձը և մասամբ, այլ ընթացիկ ծախսերը: Ընթացիկ ծախսերի մի մասը, ինչպես նաև կապիտալ ծախսերն իրականացվում են սեփական միջոցների և միջազգային աջակցության շնորհիվ: Ընդհանուր առմամբ ազգային պարկի բյուջեի ավելի քան 80%-ն ուղղվում է ընթացիկ ծախսերին (որի կեսից ավելին կազմում է աշխատավարձը) և ֆինանսական միջոցները չեն բավարարում ենթակառուցվածքների և սարքավորումների պատշաճ մակարդակով պահպանման, ինչպես նաև զբոսաշրջության զարգացման և մշտադիտարկման բարելավման համար: ՀՀ պետական բյուջեից, հողի վարձավճարներից և փայտանյութի իրացումից ստացվող ֆինանսական միջոցները առաջիկա տարիներին ևս կհանդիսանան ազգային պարկի ֆինանսավորման հիմնական աղբյուրները: Զբոսաշրջության եկամուտները կարող են աճել, իսկ խոտհարքների և արոտավայրերի ներուժը՝ լիարժեք օգտագործվել: Ակնկալվում է նաև միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսական աջակցության որոշակի աճ: ՀՀ պետական բյուջեից ազգային պարկի հատկացումները 2017 թվականին կազմել են 107,7 մլն դրամ: ՀՀ պետական բյուջեից Ազգային պարկի ֆինանսավորումը 2018-2021 թթ. չի փոխվի, ինչը նշանակում է, որ ազգային պարկը պետք է վարի համապարփակ ֆոնդահայթայթման ռազմավարություն՝ իր ֆինանսական կայունության պահպանման և զարգացման նպատակով ներդրումներ իրականացնելու համար:

ԴԱՊ-ի ֆինանսավորման աղբյուրները (2010-2014թթ.)

	2010	2011	2012	2013	2014
	Հազար ՀՀ դրամ				
Պետական բյուջեից ֆինանսավորում	76,634	76,634	84,482	78,428	121,493
Հողերի վարձակալություններ	10,467	25,241	26,700	27,191	30,843
Հատումներ (փայտանյութի և վառելափայտի վաճառք)	19,144	19,144	23,295	32,851	16,030
Էկո-տուրիզմ	0	0	21	20	0

Ընդամենը սեփական եկամուտներ	29,611	44,38 5	50,016	60,062	46,873
Միջազգային դոնորներ	0	0	0	0	23,706 *
Ընդամենը	106,24 5	121,01 9	134,49 9	138,49 0	192,07 2
Ընդամենը, յուրաքանչյուր հա- ի հաշվով, հազ. դրամ	3.1	3.6	4.0	4.1	5.7
Ընդամենը, յուրաքանչյուր հա-ի հաշվով, Եվրո **	6.3	6.9	7.7	7.5	10.3

*Որից TJS-ը տրամադրել է 4,576 հազար ՀՀ դրամ, իսկ ԿԲՀ-ն՝ 19,130 հազար ՀՀ դրամ:

**Ըստ յուրաքանչյուր տարվա համար Կենտրոնական բանկի պաշտոնական փոխարժեքի:

2) WWF Հայաստան, ԿԲՀ, Օրանժ Հայաստան և HSBC բանկ կազմակերպությունները նույնպես աջակցել են ԴԱՊ-ին՝ 2015 և 2016թթ.-ին մասամբ ֆինանսավորելով ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագիրը, որի ընդհանուր բյուջեն կազմում է 125575 Եվրո: Բնապահպանական խնդիրներ լուծելուն զուգահեռ ծրագիրը կնպաստի նաև էկոտուրիզմի զարգացմանը: 2016-2018թթ.-ին ԿԲՀ-ը նախատեսում է սկսել երկարաժամկետ համագործակցություն ԴԱՊ-ի հետ՝ համաֆինանսավորելով ազգային պարկի ընթացիկ ծախսերը և երեք տարվա ընթացքում ակնկալվում է շուրջ 500 հազար Եվրոյի չափով ներդրումներ իրականացնել:

3) Ազգային պարկի ֆինանսավորման հնարավոր աղբյուրների վերաբերյալ մանրամասն վերլուծությունները ներկայացված են սույն որոշման «IX. Հիմնական կարիքների ներդրումային պլան» գլխում:

9. Դիվիզան ազգային պարկի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների ու սպառնալիքների (ՈԻԹՀՍ) վերլուծությունը

1) Այս վերլուծությունը պլանավորման համակարգված մեթոդ է, որն օգտագործվում է որևէ ծրագրի կամ բիզնես նախաձեռնության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները ներքոհիշյալ սկզբունքների հիման վրա գնահատելու համար:

2) Կառավարման պլանի մշակման ընթացքում կայացած մի քանի աշխատաժողովների, ինչպես նաև մանրամասն վերլուծությունների արդյունքում բացահայտվել են ազգային պարկի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները, որոնք ներկայացված են ստորև.

Դիվիզան ազգային պարկի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծությունը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Բուսական և կենդանական աշխարհի	Ոչ բավարար ենթակառուցվածքներ և

<p>հարուստ բազմազանություն, եզակի մշակութային ժառանգություն, ավանդական գյուղատնտեսության, օրգանական մթերքների արտադրություն, եզակի աշխարհագրական դիրք, նպաստավոր կլիմայական պայմաններ:</p>	<p>սարքավորումներ, սեզոնային գործունեություն (տուրիզմով կարելի է զբաղվել միայն ամռանը), չկանոնակարգված աղբահանություն և կառուցապատում, տարածքների և ջրի աղտոտվածություն, անխնամ մշակութային հուշարձաններ, Դիլիջան քաղաքի կենտրոնացում, Մշտադիտարկման կարողությունների բացակայություն:</p>
<p>Հնարավորություններ</p>	<p>Սպառնալիքներ</p>
<p>Էկոտուրիզմի ընդլայնում,որը կնպաստի գյուղական զարգացմանը և կարող է ունենալ տնտեսական զարգացման մուլտիպլիկատիվ ազդեցություն, տեղական տարբերանշանով հուշանվերների արտադրության միջոցով տեղի բնակչության համար նոր աշխատատեղերի ստեղծում, երիտասարդ գիտնականների համար տարբեր կրթաթոշակների հնարավորություններ , աջակցող ծրագրեր՝ գյուղական և էկո- զբոսաշրջության, ինչպես նաև տեղի արտադրանքի բրենդավորման համար, հետաքրքրասերների խմբեր/զբոսաշրջության հատուկ առաջարկներ/մշակույթ, թոչնադիտումներ, արշավներ և այլն, միջազգային դոնորների աջակցություն՝ էկո-զարգացմանը և բնության պահպանմանը:</p>	<p>Անբավարար տեղական նախաձեռնություններ, ապօրինի ծառահատում և որսագողություն, ոչ բնապահպանական ենթակառուցվածքի զարգացում (ՓՀԵԿ- եր, շենքեր):</p>

II. «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

1. «Դիլիջան» ազգային պարկի հեռանկարը

1) Ստորև ներկայացված տեսլականը մշակվել է հիմնական շահագրգիռ կողմերի հետ սերտ համագործակցությամբ և ներկայացնում է ազգային պարկի և դրա բուֆերային գոտու երկարաժամկետ հեռանկարը: Կառավարման պլանը ներառում է մինչև 2026 թվականը, մինչդեռ տեսլականի հեռանկարը ընդգրկում է մինչև 2031 թվականը:

Ըստ այդ տեսլականի ակնկալվում է, որ մինչև 2031թ.-ը, «Դիլիջան» ազգային պարկը կլինի որպես ճանաչված բնության հատուկ պահպանվող տարածք և լիովին կհամապատասխանի ԲՊՄՄ Կատեգորիա II-ի պահանջներին և հաջողությամբ կպահպանվի կազմակերպության աշխատակիցների և բուֆերային գոտու համայնքների համատեղ կառավարման միջոցով:

«Դիլիջան» ազգային պարկը և դրա բուֆերային գոտին կընդլայնեն նաև տնտեսական հնարավորությունները՝ հողերի կայուն օգտագործման և էկոլոգիապես անվնաս արդյունաբերության շնորհիվ: Զբոսաշրջությունը հիմնականում կզարգանա՝ կենտրոնանալով տարածաշրջանի բազմաթիվ բնության և մշակութային/պատմական տեսարժան վայրերի վրա, և զբոսաշրջության ոլորտում նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով կնպաստի կենսամակարդակի աճին:

«Դիլիջան» ազգային պարկը և մերձակա համայնքները կծառայեն որպես բնապահպանությունը և կայուն հողօգտագործումը համատեղող մոդել Հայաստանի Հանրապետությունում:

III. «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՎԵՐԱԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

1. «Դիլիջան» ազգային պարկի վերագոտիավորման նպատակը

1) Սույն կառավարման պլանի գերակա նպատակն է ազգային պարկի գոտիավորումը առավելագույնս համապատասխանեցնել Բնության պահպանության միջազգային միության կողմից 2-րդ կատեգորիայի համար սահմանված չափորոշիչներին՝

2) «պահպանել բնական կենսաբազմազանությունը՝ իր հիմքում ընկած էկոլոգիական կառուցվածքի և նպաստող բնապահպանական գործընթացների հետ միասին և խթանել կրթությունն ու հանգիստը»,

3) կառավարել տարածքը, որպեսզի հնարավորինս բնական վիճակում հարատևեն ֆիզիկա-աշխարհագրական շրջանների, բիոտիկ համայնքների, գենետիկ ռեսուրսների և կուսական բնական գործընթացների տիպիկ օրինակները,

4) պահպանել բնիկ տեսակների կենսունակ և էկոլոգիապես ֆունկցիոնալ այնքան տարատեսակներ ու խմբեր, որքան անհրաժեշտ է էկոհամակարգի երկարաժամկետ ամբողջականությունը և կայունությունը պահպանելու համար,

5) նպաստել հատկապես խոշոր կենդանատեսակների միգրացիայի ուղիների և տարածաշրջանային էկոլոգիական գործընթացների պահպանությանը,

6) օգտագործել զբոսաշրջության հնարավորությունները ոգեշնչման, կրթական, մշակութային և հանգստի նպատակներով այնպես, որ դրանք չհանգեցնեն բնական ռեսուրսների էական կենսաբանական կամ էկոլոգիական դեգրադացիայի,

7) հաշվի առնել տեղի բնակիչների և տեղական համայնքների կարիքները (այդ թվում՝ ռեսուրսների առկա օգտագործումը) այնքանով, որքանով այն բացասաբար չի ազդի հիմնական կառավարման խնդիրների վրա,

8) նպաստել տեղական տնտեսության զարգացմանը՝ զբոսաշրջության միջոցով:

2. Արգելոցային գոտի

1) Ազգային պարկի ներկայիս արգելոցային գոտին միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով առաջարկվում է առավել հոծ անտառային հատվածներ ընդգրկելու միջոցով միավորել մասնատված տարածքները՝ ստեղծելով «կրկնակի բուֆերավորմամբ» չընդհատվող միասնական կենսամիջավայր, ինչը նվազագույնի կհասցնի այդտեղ բնակվող կենդանատեսակներին, հատկապես խոշոր կաթնասուններին (գորշ արջ, լուսան, գայլ, այծյամ, վարազ և այլն), սպառնացող գործոնների ազդեցությունը և հնարավոր կործանի ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագրի հաջող իրականացումը: Ազգային պարկի արգելոցային գոտու վերագոտիավորման գործընթացը պետք է իրականացվի փուլ առ փուլ, իսկ ներառվելիք տարածքները ընտրելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ չափանիշները.

ա. գտնվելու վայրը. տարածքներ, որոնք ուղղակիորեն սահմանակից են արգելոցային գոտուն,

բ. կենսաբազմազանությունը. տարածքներ, որոնք գտնվում են արգելոցային գոտուց դուրս, սակայն սահմանվել են որպես կենսաբազմազանության պահպանության առումով կարևոր վայրեր,


գ. կտրուկ լանջեր. տարածքներ, որտեղ ցանկացած տնտեսական գործունեություն արգելված է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքով և այլ կանոնակարգերով (օրինակ՝ անտառապատ տարածքներ, որտեղ գերակշռում են ավելի քան 30° թեքությամբ լանջերը),

դ. կտրուկ լանջեր ոչ անտառածածկ տարածքներում. ոչ անտառածածկ լանջեր, որոնք շատ ավելի զգայուն են մարդկային գործունեության ազդեցության, այդ թվում՝ հողի մշակության, ընտանի կենդանիների արածեցման նկատմամբ և այլն: Այս սահմանափակումը կբացառի հողերի էրոզիան և դեգրադացումը և կմեղմացնի վնասակար էկոլոգիական գործընթացները, ինչպիսիք են սողանքներն ու ձնահոսքերը:

3. Ռեկրեացիոն կամ այցելուների գոտի

1) «Դիլիջան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտու ներկայիս տարածքի զգալի հատվածը պետք է աստիճանաբար փոխանցվի այլ գոտիներին և ձևավորվի նոր ռեկրեացիոն (այցելուների) գոտի, որը կունենա պատշաճ կերպով պաշտպանված և ազգային պարկի հիմնական նպատակների հետ համատեղելի սահմանազատում: «Դիլիջան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտու վերագոտիավորման համար առաջարկվող նոր սահմանները ներկայացված են 4-րդ քարտեզում:

Քարտեզ 4. Ռեկրեացիոն գոտու առաջարկվող նոր սահմանները



4. Տնտեսական գոտի

1) Համաձայն Բնության պահպանության միջազգային միության 2-րդ կատեգորիայի պահանջների, «տնտեսական ուղղվածություն» ունեցող գոտու ընդհանուր մակերեսը չպետք է գերազանցի ագգային պարկի ընդհանուր մակերեսի 25-30%-ը, ինչից հետևում է, որ ագգային պարկի տնտեսական գոտու տարածքը պետք է զգալիորեն կրճատվի: Այնուամենայնիվ կա մի կարևոր գործոն, որը պետք է հաշվի առնել ագգային պարկի տնտեսական գոտու վերագոտիավորման ռազմավարությունը մշակելիս: Այսօր գոտում իրականացվող տնտեսական գործունեությունը (հիմնականում լիզինգային/կոնցեսիոն պայմանագրերով) ագգային պարկի եկամտի հիմնական աղբյուրն է հանդիսանում: Այս պարագայում, պետք է հաշվի առնել երկու գործոն.

ա. ամենաբարձր եկամտաբերություն ապահովող տարածքները չպետք է դուրս մղվեն տնտեսական գոտուց,

բ. տնտեսական գոտու տարածքների կրճատումը պետք է իրականացվի աստիճանաբար՝ երեք փուլերով, ինչը հնարավորություն կտա ագգային պարկին ժամանակի

ընթացքում ձևավորել եկամտի այլընտրանքային աղբյուրներ (զբոսաշրջություն, դոնորներ և այլն):

2) Վերագոտիավորման առաջին փուլը նպատակահարմար է իրականացնել մինչև 2021 թ., իսկ երկրորդը՝ մինչև 2026թ.-ը:

3) 2026թ-ին հաջորդող ժամանակահատվածում՝ մինչև 2031թ.-ը, երբ ազգային պարկը կհայթայթի եկամտի այլընտրանքային աղբյուրներ, կիրագործվի տնտեսական գոտու տարածքների կրճատման երրորդ փուլը:

4) Տնտեսական գոտու տարածքները այլ գոտիներում ներառելու արդյունքում ակնկալվում է, որ 2021 թվականին այն կնվազի և կկազմի ազգային պարկի մինչև 50%-ը, իսկ 2026 թվականին՝ մինչև 30%-ը: Դրա շնորհիվ, ազգային պարկի ընդհանուր տարածքի առնվազն 50%-ը կհամապատասխանի ԲՊՄՄ 2-րդ կատեգորիայի պահանջներին, իսկ 2026 թվականին այս ցուցանիշը կկազմի առնվազն 70%:

5. Ազգային պարկի վերագոտիավորման սկզբունքները


1) «Դիլիջան» ազգային պարկի ներկայիս տարածքում բացակայում է արգելավայրային գոտին, մինչդեռ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքում ամրագրված է ազգային պարկերում արգելավայրային գոտի ունենալու դրույթը: Մինևույն ժամանակ, արգելավայրային գոտին լիովին համապատասխանում է ԲՊՄՄ 4-րդ կատեգորիայի պահանջներին: Հաշվի առնելով այս հանգամանքը, նպատակահարմար է «Դիլիջան» ազգային պարկի տնտեսական գոտու տարածքի կրճատման հաշվին ձևավորել արգելավայրային գոտի: Արգելավայրային գոտու ստեղծումը թույլ կտա կարգավորել նաև ազգային պարկի արգելոցային գոտու սահմանազատումը՝ տարածքի որոշ հատվածներ արգելավայրային գոտի փոխանցելու միջոցով: Ազգային պարկում արգելավայրային գոտի ստեղծելու մեկ այլ կարևոր պատճառ է հանդիսանում ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագրի իրականացումը, քանզի անհրաժեշտ է ներառել այնպիսի տարածքներ, որոնք հայտնի են որպես ազնվացեղ եղջերուների կարևոր ապրելավայրեր (օրինակ՝ վերանտառային և ենթալայան մարգագետինները, բացատները, անտառազերծ և անտառին հարակից տարածքները):

2) «Դիլիջան» ազգային պարկի որոշ հատվածներում նպատակահարմար է ստեղծել վերականգնվող տարածքներ՝ այն տարածքների վերականգնման գործընթացը կազմակերպելու համար, որոնք փոփոխվել են մարդու գործունեության արդյունքում՝ հանգեցնելով էկոլոգիական դեգրադացիայի: Ցանկալի է, որ վերականգնման գործընթացը տեղի ունենա առանց մարդու միջամտության, ինչը բնական զարգացման հնարավորություն կտա՝ մինչև ինքնակարգավորումը: Ակտիվ միջամտությունը նույնպես հնարավոր է, եթե պահանջվում է կասեցնել էրոզիան կամ կանխել շրջակա միջավայրի հետագա դեգրադացիան: Սովորաբար վերականգնվող տարածքները մատչելի չեն հանրության, այդ թվում, տեղական համայնքների համար, բացառությամբ՝ ազգային պարկի աշխատողների: Ազգային պարկում, խիստ դեգրադացված անտառային տարածքները վերականգնելու նպատակով առաջարկվում է ստեղծել փոքր վերականգնվող տարածք Դիլիջան քաղաքի մոտ, Աղստև գետի աջ կողմում՝ 5, 6, 7, 8, 9 և 10 քառակուսիներում, որոնք գտնվում են հիմնականում տնտեսական գոտում և մասամբ՝ ռեկրեացիոն գոտում: Ակնկալվում է, որ 7-8 տարիների ընթացքում վերականգնման գործընթացը բավականաչափ կայուն կընթանա և այդ տարածքները հետագայում կներառվեն

արգելոցային գոտում՝ առավել երկարաժամկետ և հաջող ինքնավերականգնում ապահովելու նպատակով:

3) «Դիլիջան» ազգային պարկին հարակից հատվածում նպատակահարմար է ձևավորել բուֆերային գոտի, որը չպետք է լինի մասնատված և որի սահմանները, հնարավորության դեպքում, պետք է համընկնեն բնական սահմանների հետ (օրինակ՝ ջրբաժաններ, գետերի կիրճեր կամ հուններ և այլն): Բուֆերային գոտիները պետք է ձևավորվեն այն հատվածներում, որոնք ինտենսիվ ռեսուրսների օգտագործման և զարգացման ճնշման գոտիներ են և անհրաժեշտություն է առաջացել կարգավորել դրանց կայուն օգտագործումը: Բուֆերային գոտու տարածական վերափոխումը պետք է իրականացվի ազգային պարկի և հողի սեփականատերերի փոխադարձ համաձայնությամբ և իրագործվի քայլ առ քայլ, տարածք առ տարածք՝ հաշվի առնելով առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը: Բուֆերային գոտիները զարգացած երկրներում սկզբնական շրջանում սահմանվում էին մարդկանց և նրանց բերքը անտառներում և պահպանվող տարածքներում ապրող կենդանիներից պաշտպանելու նպատակով, հետագայում բուֆերային գոտիները ստեղծվում էին պահպանվող տարածքները մարդու բացասական ազդեցությունից պաշտպանելու նպատակով, իսկ ներկայումս բուֆերային գոտիները ձևավորվում են՝ պահպանվող գոտիներում մարդու ազդեցությունը նվազագույնի հասցնելու և ազդակիր բնակչության (պահպանվող տարածքների ռեսուրսների նախկին օգտագործողների) սոցիալ-տնտեսական կարիքները բավարարելու համար: Բուֆերային գոտին ներկայումս անվանվում է նաև պահպանվող գոտի, որը սահմանակից է պահպանվող տարածքին և հանդիսանում է համայնքային կամ մասնավոր սեփականություն հանդիսացող հող: Թեև որևէ հատուկ կանոն չի սահմանվում պահպանվող գոտու առնչությամբ, այնուամենայնիվ նպատակահարմար է այդ գոտում ներառել այն բոլոր համայնքները, որոնք ընդհանուր սահման ունեն պահպանվող տարածքի հետ և ավանդաբար օգտագործել են տարածքի ռեսուրսները: «Պահպանվող գոտի» եզրույթը ենթադրում է աջակցություն, որը պետք է տրամադրվի պահպանվող տարածքների հարևանությամբ գտնվող համայնքներին և ազգաբնակչությանը՝ որպես փոխհատուցում նման տարածքները ավանդաբար օգտագործելու իրավունքի հնարավոր սահմանափակման դիմաց: Եզրույթը նաև ենթադրում է աջակցություն, որը պարկի հարևան համայնքները պետք է ստանան պահպանվող տարածքի կայուն պաշտպանության դիմաց: Այս առումով պահպանվող գոտու գործունեությունը պետք է ուղղորդվի կայուն տնտեսական զարգացմանը, որպեսզի այն համատեղելի լինի համապատասխան պահպանվող տարածքի ընդհանուր պահպանության խնդիրների հետ: Զարգացման գործողությունները պետք է ուղղված լինեն առաջնահերթ միջամտություններին՝ ապրուստի կայունացման և համայնքային զարգացման շեշտադրմամբ: Պահպանվող գոտու տարածք կարող է համարվել սահմանամերձ համայնքներին պատկանող կամ նրանց կողմից օգտագործվող բոլոր հողերը կամ ազգային պարկը շրջապատող տարածքը՝ մինչև 5 կմ հեռավորության վրա: Ըստ էության, «պահպանվող գոտու» տարածքի սահմանումը ավելի շատ կոնցեպտուալ է, քան կենսաբազմազանության պահպանման կամ պահպանվող տարածքների նախագծման ֆորմալ գործիք: Ըստ այդմ, բուֆերային գոտին «պահպանվող գոտու» վերափոխման առաջնային նպատակը իրավական ձևակերպումը կամ քարտեզագրումը չէ: Այն առավելապես պահպանվող գոտին կառավարելու ծրագրեր մշակելուն և դրանք արդյունավետ իրականացնելուն ուղղված կառավարման խնդիր է: Հետևաբար, ազգային պարկին հարակից 10 համայնքների արտաքին սահմանները կարելի է տեսականորեն դիտարկել որպես պահպանվող գոտու պայմանական սահման, իսկ այդ համայնքների հողերը կկազմեն այդ գոտու տարածքը:

Քարտեզ 5. Պահպանվող (բուֆերային) գոտու առաջարկվող սահմաններն ու տարածքը



4) Տեղի ազգաբնակչության մոտ դժգոհություններ չառաջացնելու և նախատեսվող փոփոխություններին հարմարվելու համար բավարար ժամանակ ընձեռնելու նպատակով արգելոցային գոտու աստիճանական ընդլայնումը և արգելավայրային գոտու ձևավորումը նպատակահարմար է իրականացնել՝ հաշվի առնելով պահպանման թիրախում գտնվող հողերի բարձրադիրությունն ու մատչելիությունը: Առաջին փուլում (2021թ.) կվերափոխվեն բարձրադիր տարածքները, որտեղ ավելի դժվար է մուտք գործել, իսկ երկրորդ փուլում (մինչև 2026թ.)՝ մնացած հատվածները: Նախատեսվող փոփոխությունները հնարավորություն կտան կրճատել տնտեսական գոտու տարածքը՝ ներմուծելով արգելավայրային գոտին, ընդլայնել և բարելավել արգելոցային գոտին, կատարելագործել ռեկրեացիոն գոտու տարածքը՝ ըստ «այցելուների գոտի» հասկացության ձևավորել պահպանվող բուֆերային գոտի:

5) Նախատեսվող փոփոխությունների աղյուսակը և առաջարկվող վերագոտիավորման քարտեզները սահմանված են ՀՀ կառավարության 2017 թվականի --- «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին» N____-Ն որոշմամբ:

ա. Առաջին փուլում (մինչև 2021թ) նախատեսվում է բարելավել արգելոցային գոտին, ներդնել և լիովին հիմնել արգելավայրային գոտի, որը կզբաղեցնի ազգային պարկի շուրջ 25%-ը, ժամանակավորապես ձևավորել փոքր վերականգնվող տարածքներ, բարելավել ռեկրեացիոն գոտին՝ կրճատելով դրա ընդհանուր մակերեսը, համապատասխանաբար նվազեցնել

տնտեսական գոտու տարածքը, ձևավորել պահպանվող (բուֆերային) գոտու սահմանները՝ այն ընդլայնելով 10.753 հեկտարով:

բ. Երկրորդ փուլում (մինչև 2026թ.) զգալիորեն կընդլայնվի արգելոցային գոտին, կկրճատվի տնտեսական գոտին, կավարտվի վերականգնվող տարածքների վերականգնման գործընթացը և դրանք կներառվեն համապատասխան գոտու սահմաններում:

6) Արդյունքում, մինչև 2026 թվականը հնարավոր է հասնել հիմնական թիրախին՝ ազգային պարկի առկա գոտիավորման խելամիտ վերագոտիավորմանը, ինչի շնորհիվ արգելոցային գոտու տարածքն այլևս ուղղակիորեն սահմանակից չի լինի բուֆերային գոտուն կամ պահպանություն չունեցող տարածքներին և կհանդիսանա համապարփակ հատված: Լիովին ձևափոխված կլինի արգելավայրային գոտին, որը հիմնականում կընդգրկրկի ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման և պահպանության համար նպաստավոր տարածքները: Զգալիորեն կկրճատվի տնտեսական գոտին, իսկ ռեկրեացիոն գոտու սահմանները կհամապատասխանեցվեն «այցելուների գոտու» պահանջների համաձայն:

IV. «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Ծրագրերն ու նպատակները

1) «Դիլիջան» ազգային պարկի ներկայիս վիճակի մանրամասն վերլուծությունների արդյունքում առավել նպատակահարմար է գտնվել իրականացնել ներքոհիշյալ ծրագրերը՝ Վարչական (հավելված 2), Պահպանության (հավելված 3), Մոնիթորինգի և գիտական աշխատանքների (հավելված 4), Ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման (հավելված 5), Այցելուների (հավելված 6), Կրթության և հանրային իրազեկման (հավելված 7):

ա. Վարչական ծրագիր՝ շարունակվելու է իրականացվել երկու հիմնական գործառնությունները՝ ընդհանուր վարչարարությունը և ֆինանսների կառավարումը: Վարչական ծրագրի ընդհանուր նպատակներն են մարդկային ռեսուրսների արհեստավարժ կառավարումը, ԲՊՄՄ 2-րդ կատգորիային համապատասխան ազգային պարկի տարածքի գոտիավորումը, աշխատակազմի կարողությունների հզորացումը, ֆինանսական կառավարման կատարելագործումը և ԴԱՊ-ի կառավարման արդյունավետության բարձրացումը:

բ. Պահպանության ծրագիր՝ նպատակն է նվազագույնի հասցնել անօրինական գործողությունները, վերականգնել դեգրադացված անտառային տարածքները, նվազագույնի հասցնել անտառային հրդեհների ռիսկերը և նախաձեռնել քաղցրահամ ջրերի էկոհամակարգերի կայուն կառավարման գործընթաց, ԴԱՊ-ի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության աջակցումը ՀՀ մշակույթի նախարարության հետ համատեղ:

գ. Մոնիթորինգի և գիտական աշխատանքների ծրագիր՝ լինելով ուղղորդված և բազմաբնույթ, ենթադրում է սերտ համագործակցություն գիտական և ուսումնական հաստատությունների (ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, համալսարաններ) և հասարակական կազմակերպությունների հետ: «Դիլիջան» ազգային պարկի աշխատակազմը պետք է շփվի գիտնականների և հետազոտողների հետ և նրանց օգնություն ու կազմակերպչական աջակցություն տրամադրի դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում: «Դիլիջան» ազգային պարկի գործունեությունը, գիտական աշխատանքների և հետազոտության առումով, պետք է սահմանափակվի ազգային պարկի կառավարման համար կարևոր հետազոտությունների հիմնական ուղղությունների մատնանշմամբ և

առաջնահերթությունների սահմանմամբ՝ ներգրավելով այն հետազոտողներին, որոնք շահագրգռված են այդպիսի հետազոտությունների իրականացմամբ: Ի տարբերություն հետազոտությունների և զուտ գիտական աշխատանքի՝ մոնիթորինգը աշխատակազմի անմիջական պատասխանատվության ոլորտն է: Որոշ դիտարկումներ կարող են իրականացվել գիտահետազոտական ինստիտուտների ու հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ, իսկ մոնիթորինգի աշխատանքները պետք է համակարգվեն և իրագործվեն հատուկ վերապատրաստումներ անցած աշխատակիցների կողմից՝ անտառապահների աջակցությամբ: Մոնիթորինգի ամենակարևոր գործողությունները պետք է հասցեավորեն կենսաբազմազանության և բնական պաշարների իրավիճակի միտումները, այդ թվում՝ այցելուների ծրագրի շրջանակներում այն բոլոր գործողությունները, որոնք կարող են հավանական վտանգ ներկայացնել էկոհամակարգի ամբողջականությանը: Հաշվի առնելով վերը նշվածը, առաջարկվում է ներկայիս գիտության բաժինն անվանել մոնիթորինգի և գիտական աշխատանքների բաժին՝ կարևորելով նաև մոնիթորինգի գործառույթները: Այդ բաժնի գործունեությունը պետք է ուղղորդվի նաև ազգային պարկի կենսաբազմազանության մոնիթորինգային բազմաֆունկցիոնալ համակարգի ձևավորմանը, ինչպես նաև կլիմայի փոփոխությանը էկոհամակարգերի հարմարվողականությանն ուղղված ուսումնասիրությունների իրականացմանը:

դ. Ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագիր՝ «Դիլիջան» ազգային պարկը նախաձեռնել է առաջիկա 7-10 տարիների ընթացքում վերաներմուծել ազնվացեղ եղջերուն ազգային պարկում և Հայաստանում: Ծրագրի նպատակն է սկսել Կովկասյան ազնվացեղ եղջերուի պոպուլյացիայի վերականգնումը՝ դրա բազմացման կենտրոնի հիմնադրման և կենդանիների գլխաքանակի ավելացման համար նպաստավոր պայմանների ստեղծման միջոցով:

ե. Այցելուների ծրագիր՝ համաձայն միջազգային փորձի, ռեկրեացիոն գոտին վերանվանվում է այցելուների գոտու և դրան համապատասխան կազմվում այցելուների ծրագիր: Այցելուների ծրագրի հիմնական նպատակն է աշխատակազմի և ուղեկցորդների ունակությունների (հատկապես լեզվական) հզորացումը և տեխնիկական վերազինումը, նոր տուրիստական ծառայությունների միջոցով ազգային պարկն առավել գրավիչ դարձնելը, մարքեթինգի կատարելագործումը և եկամուտների ավելացումը, ինչպես նաև այցելուների բացասական ազդեցությունները կանխարգելելու և, համայնքների հետ համատեղ, պարկի կայուն զարգացմանը նպաստող մեխանիզմներ մշակելու միջոցով ազգային պարկի ամբողջականության պահպանումը:

զ. Կրթության և հանրային իրազեկման ծրագիր՝ կրթությունը և հանրային իրազեկումը նոր գործառույթ է ազգային պարկի համար: Այս ուղղությամբ իրականացվող ծրագիրը թույլ կտա բարձրացնել համայնքների բնակիչների իրազեկվածությունը՝ ազգային պարկից ակնկալվող օգուտների վերաբերյալ, համապատասխան տեղեկատվություն տրամադրել ազգային պարկի կենսաբանական և սոցիալ-տնտեսական կարևորության մասին՝ տեղական, տարածաշրջանային, ազգային և միջազգային մակարդակներով, գործընկերություն հաստատել տեղի բնակչության, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև կրթական և գիտական կազմակերպությունների հետ:

Վ. «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 2017-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Ծրագիրը սահմանվում է աղյուսակ 1-ով:

Աղյուսակ 1

«ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 2017-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

N	Միջոցառման անվանումը	Նպատակը	Խնդիրը	Իրականացվելիք միջոցառման նկարագիրը	Պատրաստանալու մարմինը	Կատարման ժամկետները	Ֆինանսավորման աղբյուրը (ֆինանսավորող մարմին), ֆինանսական միջոցների չափի հաշվարկը	Միջոցառման կատարման վերստուգելի չափանիշը	Ակնկալվող վերջնական արդյունքը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	Ազգային պարկի վարչական ծրագիր	1) Մասնագիտակա ն, վարչական և ֆինանսական արդյունավետության բարձրացում	ա. Վերապատրաստման կազմակերպում և սարքավորումներով ապահովում, բ. մարդկային ռեսուրսների կառավարման մեխանիզմների կատարելագործում , գ. ֆինանսական կառավարման բարելավում , դ. ԴԱՊ-ի ֆինանսական և կառավարման արդյունավետության գնահատում	Համաձայն «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանի միջոցառումների ծրագրի հավելված 2-ի	ՀՀ բնապահպանության նախարարություն	2017թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	«Դիլիջան» ազգային պարկի՝ Բնության պահպանության միջազգային միության կատեգորիա 2-ին համապատասխանեցում	Կառավարման նոր կառուցվածք, վերապատրաստված աշխատակիցներ պատշաճ ֆինանսական և վարչական փաստաթղթերի, ընթացակարգերի և պլանավորման առկայություն խորախոսման համակարգի կիրառում METT միավորի աճ վարձակալական եկամուտների աճ
		2) ԲՊՄՄ II	ՀՀ			2017թ.	ՀՀ պետական		Վերագոտիավոր

		կատեգորիային համապատասխան գոտիավորում	կառավարության 2017 թվականի — «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին» N—Ն որոշման Հավելվածի համաձայն վերագոտիավորում				բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ		ված տարածք, պետական գրանցում ստացած իրավունքներ
		3) Տեղական համայնքների հետ շփումների բարելավում	Բնակչության հետ երկխոսության հաստատում, պահպանության գործընթացի բարելավում			2017թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ		Գործող և ակտիվ Խորհրդատվական խորհրդի առկայություն, բնակչության հետ ակտիվ շփումներ, ապօրինի ծառահատումների նվազում
2.	Ազգային պարկի պահպանության ծրագիր	1) Բարձրացնել ծրագրի արդյունավետությունն ու նվազագույնի հասցնել անօրինական գործողությունները՝ հնարավորությունների ստեղծման և տեղի բնակչության հետ համագործակցության արդյունքում:	ա. Պահպանություն, անձնակազմի տեխնիկական վերագինում և կարողությունների հզորացում, բ. ԴԱՊ-ի սահմանների սահմանագծում, գ. Պահպանության ենթակառուցվածքի ձևավորում, դ. Պարեկային համակարգի ներդրում ե. ՊՏ կառավարմանը	Համաձայն «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանի միջոցառումների ծրագրի հավելված 3-ի	ՀՀ բնապահպանության նախարարություն	2017թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	«Դիլիջան» ազգային պարկի՝ Բնության պահպանության միջազգային միության կատեգորիա 2-ին համապատասխանեցում	Տրամադրված սարքավորումներ, վերապատրաստված աշխատակիցներ ԴԱՊ-ի սահմանագծված տարածքներ, ենթակառուցվածքների կառուցում, Շուրջօրյա պարեկային համակարգի ներդրում, Տեղի

			տեղի բնակչությանը ներգրավելուն ուղղված մեխանիզմների մշակում						բնակչության ներգրավման մեխանիզմների մշակում, Պահպանության տարրերի METT գնահատական
		2) Դեգրա դացված անտառների վերականգ նում	Մշակել և իրագործել դեգրադացված անտառների վերականգնման մանրամասն պլան		ՀՀ բնապահպանութ յան նախարարությու ն	2017թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ		Վերականգնված տարածք
		3) Կրճատել հրդեհների ոփակերը՝ հասցնելով նվազագույնի	Մշակել և իրագործել անտառային հրդեհների վերահսկման պլան			2017թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ		Անտառներում հրդեհների նվազում
		4) Նախա ծեռնել քաղցրահամ ջրերի էկոհամակարգերի կայուն կառավարում	ա.Մշակել կառավարման պլան և իրականացնել սահմանված միջոցառումներ (ներառյալ, ձկնային ռեսուրսների կայուն օգտագործումը), բ.Պարբերաբար մոնիթորինգի ենթարկել Խաչարձան գետի փոքր ՀԷԿ-երի բնապահպանակա ն հոսքը			2018թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ		Քաղցրահամ ջրերի էկոհամակարգե րի կառավարման գործող համակարգ
3	Ազգային պարկի մոնիթորինգի և գիտական	1) Կառավար ման պլանին համապատասխա	Ընթացակարգերի սահմանում, ծրագրային	Համաձայն «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026	ՀՀ բնապահպանութ յան	2018թ.	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ	«Դիլիջան» ազգային պարկի՝	Հաստատվել է ծրագիրը Տրամադրվել են

	աշխատանքների ծրագիր	ն ծրագրային դրույթների մշակում	գործիքների տրամադրում, աշխատակազմի կարողությունների զարգացում	թվականների կառավարման պլանի միջոցառումների ծրագրի հավելված 4-ի	նախարարություն		միջոցներ	Բնության պահպանության միջազգային միության կատեգորիա 2-ին համապատասխանեցում	անհրաժեշտ գործիքներ՝ ըստ Կառավարման պլանի Վերապատրաստված աշխատակիցներ
		2) Ազգային պարկի կենսաբազմազանության մոնիթորինգի բազմագործառույթային համակարգի մշակում	<p>ա. Իտոշոր կաթնասունների մոնիթորինգ (ազնվացեղ եղջերու, գորշ արջ, այծյամ, լուսան, գայլ)</p> <p>բ. Վտանգված թռչնատեսակների մոնիթորինգ (անգղեր, մարեհավ, վայրի հնդկահավ)</p> <p>գ. Բուսատեսակների և անտառային աճելավայրերի վիճակի մոնիթորինգ</p> <p>դ. Քաղցրահամ ջրային էկոհամակարգերի վիճակի մոնիթորինգի (գետեր, լճեր, ճահիճներ)</p> <p>ե. Զբոսաշրջության ազդեցության մոնիթորինգ</p>			2018թ.	<p>ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ</p> <p>ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ</p> <p>ՀՀ պետական</p>		Ցուցանիշների միտումները՝ Իտոշոր կաթնասունների թվաքանակը, ընտրված թռչունների կարգավիճակը, անտառային աճելավայրերը, ՓՀԷԿ-ում բնապահպանական հոսքը, ջրի որակը (Պարզ և Գոշ լճերում), գետերի օրգանական աղտոտումը, զբոսաշրջության ազդեցությունը, ԴԱՊ-ում աճող բուսականությունը, p1 և p2 մասերում թվարկված ֆիզիկական, բիոտիկ և զբոսաշրջության ցուցանիշները ամբողջական

			գ. GIS տվյալների բազա՝ վերոնշյալ բոլոր ցուցանիշների համար				բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ		տվյալների բազայի առկայություն
		3) Կլիմայի փոփոխության ազդեցության մոդելավորումը և ադապտացիոն պլանի մշակումը էկոհամակարգերի հարմարեցմանն ուղղված միջոցառումների մշակման և իրականացման համար ռազմաստրատեգիայի ներքին իրականացում	Ուսումնասիրել և մոդելավորել կլիմայի փոփոխության հնարավոր ազդեցությունը և մշակել ադապտացիոն պլան			2018թ.	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ		Մշակված ադապտացիոն պլան և դրա իրականացման ռեսուրսներ
4.	Ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագիր	1) Կովկասյան Ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոնի հիմնումը և այդ կենդանիների խմբի ձևավորումը	ա. 10 հա տարածքի ցանկապատում և ենթակառուցվածքների ձևավորումը և բ. Բազմացման կենտրոնի սարքավորումներով ապահովումը և կահավորումը, գ. Բազմացման կենտրոնի անձնակազմի վերապատրաստումը, դ. 15 ազնվացեղ եղջերուի ձեռքբերում և բազմացում, ե. Բազմա	Համաձայն «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանի միջոցառումների ծրագրի հավելված 5-ի	ՀՀ բնապահպանության նախարարություն	2017թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	« Դիլիջան » ազգային պարկի՝ Բնության պահպանության միջազգային միության կատեգորիա 2-ին համապատասխանեցում	Ցանկապատված տարածք և ձևավորված ենթակառուցվածքներ (պահակակետ, տնակ, կերի պահեստ), Սարքավորումներ (ամենագնաց ավտոմեքենա, GSM տեսախցիկներ, համակարգիչներ և այլն), վերապատրաստված աշխատակիցներ

			ցված կենդանիների բնակեցումը պարկի տարածքում և մոնիթորինգի իրականացում:				ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ		, 15 ազնվացեղ եղջերու, Ազատ պայմաններում եղջերուների առկայություն, Հաջողությամբ գործող ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոն
5.	Ազգային պարկի այցելուների ծրագիր	1) Աշխատակիցների ու զբոսավարների կարողությունների զարգացում, սարքավորումներով ապահովում	Մշակել մոդուլներ, կազմակերպել դասընթացներ և տրամադրել սարքավորումներ	Համաձայն «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանի միջոցառումների ծրագրի հավելված 6-ի	ՀՀ բնապահպանության նախարարություն	2017թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	« Դիլիջան » ազգային պարկի՝ Բնության պահպանության միջազգային միության կատեգորիա 2-ին համապատասխանեցում	Վերապատրաստված աշխատակազմ առկա սարքավորումներ
		2)Նոր զբոսաշրջային արտադրանքի ստեղծում ու ծառայությունների բարելավման միջոցով ԴԱԴ-ի գրավչության բարձրացում	Ստեղծել նոր արտադրանք ու ծառայություններ և բարելավել առկա ծառայությունները (ցուցանմուշներ ու թեմատիկ երթուղիներ, բնապահպանական կրթություն, ինչպես նաև արկածային առաջարկներ (արշավներ,			2017թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ		Բազմաբնույթ ծառայությունների առկայություն

			թոշունների դիտում, ձիարշավ, լեռնային հեծանվարշավ և այլն)						
		3) ԴԱՊ-ի ճանաչելիության ընդարձակում	ա. Բարելավել տեղեկատվությունը , բ.Ստեղծել տեղեկատվական կենտրոն			2017թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ		Տեսանելի տեղեկատվության և տեղեկատվական կենտրոնի առկայություն
		4) Զբոսաշրջիկների ու տուր օպերատորների համար տեղեկատվության և մարքեթինգային ուղիների մշակում	ա. Մշակել ճանաչելիությունն ապահովող միջոցներ (եզակի բրենդավորում, որը ճանաչելի կլինի բոլոր պրոդուկտների վրա, ինչպիսիք են. տեղեկատվական կենտրոններ, վեբկայք, նշաններ, տեղեկատվական վահանակներ և գոտու սահմանների ֆիզիկական սահմանագծում բ. Մշակել ԴԱՊ-ի վեբկայքի զբոսաշրջության բաժինը, գ. Մշակել պատշաճ մարքեթինգային պրոդուկտներ			2017թ.	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ		Մարքեթինգային պրոդուկտների առկայություն, մարքեթինգին ուղղված միջոցառումներ
		5) Այցելուների բացասական ազդեցության	Բարեն պատ միջավայրի ապահովում			2017թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ		Կիրարկման առկա քաղաքականությ

		կանխման արդյունքում պարկի ամբողջականության պահպանում և շրջակա համայնքների զարգացմանը նպաստող միջավայրի ստեղծում:					միջոցներ		ուն Զարգացող համայնքներ
		6) Նոր գբոսաշրջային առաջարկությունների և առկա ծառայությունների բարելավման արդյունքում պարկի եկամուտների ավելացում	ա. Գործարկել մուտքի և այլ վճարների հավաքման թափանցիկ համակարգ, բ. Բարձր կարգ ծառայությունների վրա հիմնված եկամուտների գոյացում			2017թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ		Մուտքի և այլ վճարների գանձման հստակ գործող համակարգ Այցելուներից ստացվող եկամտի աճ
6.	Կրթության և հանրային իրազեկման ծրագիր	1) Աշխատակիցների կարողությունների զարգացում և սարքավորումներով ապահովում	Մշակել մոդելներ և կազմակերպել դասընթացներ ապահովել սարքավորումներով	Համաձայն ՀՀ կառավարության «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանը և առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին « որոշման հավելվածի աղյուսակ 11-ի	ՀՀ բնապահպանության նախարարություն	2017թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	«Դիլիջան» ազգային պարկի՝ Բնության պահպանության միջազգային միության կատեգորիա 2-ին համապատասխանեցում	Համապատասխան աշխատակազմի բարձր որակավորումը


		2) Տեղական համայնքներին պարկի առավելությունների պարզաբանում	Փաստագրել պարկի տնտեսական և էկոհամակարգային առավելությունները՝ համայնքային օգուտների շուրջ երկխոսության նպատակով			2017- 2018թ	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ		Զբոսաշրջության և Էկոհամակարգային ցուցանիշներ
		3) Իրագրվածության բարձրացման նպատակով ԴԱՊ-ի կենսաբանական և սոցիալ-տնտեսական կարևորության մասին տեղեկատվության տարածում	ա. Մշակել տեղեկատվական նյութեր և տարածել թիրախ լսարաններում բ. Կազմա կերպել միջոցառումներ՝ ներգրավելով առկա և հնարավոր շահագրգիռ կողմերին և աջակիցներին			2017թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ		Բնակչության տարբեր խմբերի իրագրվածության բարձր մակարդակ
		4) ՀԿ-ների, դպրոցների, համալսարանների և տեղի բնակչության հետ գործընկերության հաստատում	ա. Համագործակցել դպրոցների, համալսարանների, հետազոտական հաստատությունների և ՀԿ-ների հետ բ.Տեղի բնակչության ներգրավման մեխանիզմների մշակում և կիրառում			2017թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ		Մեծ թվով ներգրավված կազմակերպություններ և անհատներ
7.	«Դիլիջան» ազգային պարկի սահմանների և գոտիների	1) ԴԱՊ-ի սահմանների և գործառնական գոտիների	Ազգային պարկի գոտիավորումը առավելագույնս Բնության	ա. դաշտային աշխատանքներ բ. Յուրաքանչյուր գոտու սահմանների	ՀՀ բնապահպանության նախարարություն	Մինչև 2021թ.	ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	«Դիլիջան» ազգային պարկի՝ Բնության	Հստակ սահմանազատված գոտիավորման

	<p>հստակեցում և համապատասխան իրավական ակտերում դրանց ամրագրում</p>	<p>հստակեցում</p>	<p>պահպանության միջազգային միության կողմից 2-րդ կատեգորիայի համար սահմանված չափորոշիչներին համապատասխան եցում</p>	<p>հստակեցում գ. Համապատասխան իրավական ակտերում դրանց ամրագրում դ. Սահմանազատման աշխատանքների իրականացում (նշանների տեղադրում) ե. Համապատասխան քարտեզների տպագրում</p>	<p>ն</p>		<p>ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ</p>	<p>պահպանության միջազգային կատեգորիա 2-ին համապատասխանեցում</p> <p>առկայություն, Յուրաքանչյուր գոտու զբաղեցրած տարածքների չափերը՝ ըստ հեկտարների, Սահմանազատման աշխատանքների առկայություն, Տեղադրված նշաններ, Իրավական ակտերի առկայություն</p>
		<p>2) Պահպանական աշխատանքների արդյունավետության բարձրացում</p>		<p>ա. Յուրաքանչյուր գոտուն պահպանության ռեժիմին համապատասխան պահպանության քայլերի իրականացում</p>			<p>ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ</p>	<p>Կենսաբազմազանության, էկոհամակարգերի արդյունավետ պահպանություն, բարելավում և կայուն օգտագործում</p>

VI. «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

1. Զարգացման միտումները, ռազմավարությունը և մարտավարությունը

1) «Դիլիջան» ազգային պարկի զարգացման միտումները, միջազգային չափորոշիչներին համապատասխանելուն ուղղված ռազմավարությունը և դրա իրականացման մարտավարությունը անհրաժեշտություն են դարձնում կառավարման ժամանակակից մեթոդների ներդրումը, ինչը ենթադրում է գործառույթների ճիշտ տեղաբաշխում աշխատակիցների միջև՝ գործողությունների հստակ նկարագրմամբ և աշխատակիցների վերապատրաստման և ունակությունների զարգացման վրա հատուկ շեշտադրմամբ: Դա իր հերթին ենթադրում է կառուցվածքային փոփոխություններ: «Դիլիջան» ազգային պարկի արդյունավետ կառավարումն իրականացնելու նպատակով առաջարկվում է կառավարման ներքոհիշյալ սխեման.



2) Առաջարկվող հիմնական փոփոխությունները հետևյալն են.

- ազգային պարկի տարածքում շուրջօրյա հսկողություն սահմանելու նպատակով առաջարկվում է ներդնել «հատուկ ջրկատների» ինստիտուտը, ինչի շնորհիվ հնարավորություն կընձեռնվի սահմանել հերթափոխային պահպանություն,
- առաջիկա տարիներին նախատեսվում է զարգացնել ազգային պարկի տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքները և դրանց լիարժեք ձևավորման դեպքում անհրաժեշտություն կառաջանա հիմնել նաև համապատասխան հաստիք,
- ազնվացեղ եղջերուների վերաբնակեցման ծրագրի իրականացման նպատակով կհիմնվի կառուցվածքային նոր միավոր՝ ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն, որում կներառվեն նոր հաստիքներ,

- ներկայիս գիտության ու էկոտորիզմի և ռեկրեացիայի բաժինները կվերաձևակերպվեն գիտության, մոնիտորինգի, այցելուների, կրթության և հանրային իրազեկման բաժնի:

VII. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1. Ներդրումային կարիքները

1) Ըստ Համաշխարհային բանկի, մոլորակի ամենաշատ, բայց թերի գնահատված բնական ակտիվները թերևս գտնվում են զարգացող երկրների ազգային պարկերում, որոնց ճիշտ գնահատումը և առևտրայնացումը հնարավորություն է տալիս վերանայել դրանց կարևոր տնտեսական արժեքը: Պետություն-մասնավոր հատված համագործակցությունը կարող է կարևոր դեր խաղալ այս գործում, քանզի այն առաջարկում է քաղաքականության հզոր գործիք՝ բարելավել պարկերի տնտեսական կայունությունը և ծառայությունների որակը, ներգրավել արդյունավետ ներդրումներ և դրա միջոցով նպաստել կենսաբազմազանության պահպանման հիմնական գործառույթի իրագործմանը:

2) Արդյունավետ կառավարվող բազմաթիվ պահպանվող տարածքներ կարողանում են ստանալ բավարար եկամուտներ և ծածկել իրենց շահագործման և պահպանման ծախսերը, իսկ որոշ պարկեր ծախսերի պետական սուբսիդավորման կարիք ընդհանրապես չունեն: Սակայն այն պարկերը, որոնցում դեգրադացված է բուսական և կենդանական աշխարհը, պահանջում են զգալի նախնական ներդրումներ՝ բնության և պարկի բազային ենթակառուցվածքները վերականգնելու համար: Էկոտորիզմի ներկայիս շուկան խիստ մրցակցային է և ազգային պարկերը հաջողության հասնելու համար պետք է առաջարկեն բարձր որակի ծառայություններ կամ եզակի բնապահպանական արժեքներ: Նախնական ներդրումները ֆինանսավորելու համար անհրաժեշտ են առավելապես դրամաշնորհներ:

3) Զբոսաշրջության շուկան այն պարկերի առաջնային եկամտի աղբյուրն է, որոնք ձգտում են ստեղծել իրենց սեփական եկամուտները: Զբոսաշրջության մեջ անկայուն այցելություններից առաջացող խոցելիությունը կարելի է մեղմել՝ ձևավորելով այսպես կոչված «եկամտի հավելյալ աղբյուրների զամբյուղ» ստեղծելով անհրաժեշտ պահուստներ և ապահովելով «վերջին օգնության խնդրանքի» ֆինանսավորման աղբյուրների երաշխավորված հասանելիություն:

4) Կառավարման պլանի տեսլականին հասնելու և նախատեսված ծրագրերն ու ռազմավարական քայլերն իրականացնելու համար «Դիլիջան» ազգային պարկում անհրաժեշտ է իրականացնել զգալի ֆինանսական ներդրումներ:

5) Ազգային պարկի կառավարման առանձին ոլորտների համար մշակվել են ներդրումային ծրագրեր, որոնք ներառում են այն առանցքային ներդրումները, որոնք անհրաժեշտ կլինեն այդ ծրագրերը բազային մակարդակում իրականացնելու համար: Դրանք համառոտ ներկայացված են ստորև, իսկ ներդրումային պլանի մանրամասն նկարագիրը՝ «IX. Հիմնական կարիքների ներդրումային պլան» գլխում: Հարկ է նշել, որ ներդրումային պլանում ներառված ծախսերը պլանավորվել են՝ հիմք ընդունելով ՀՀ 2017-2019թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերով նախատեսված բյուջետային ֆինանսավորման ծավալների չափաքանակները: Այդ ծախսերը ենթակա են ճշգրտման՝ հաշվի առնելով որոշ ծախսերի ինդեքսավորման անհրաժեշտությունը (աշխատավարձ, էլեկտրաէներգիա, գազամատակարարում և այլն):

ա. «Վարչական ծրագրի» ներդրումային պլանով (կապիտալ ներդրումներ և ծրագրերի մշակում) նախատեսված գումարը 2017-2021թթ. հնգամյա ժամանակահատվածի համար կազմում է 125 մլն. դրամ (236 000 եվրո): Այս ծրագրի իրականացման համար պահանջվող հիմնական ներդրումներն են՝ վարչական և այլ շինությունների կառուցման և վերանորոգման աշխատանքները, դասընթացների կազմակերպումը, ինչպես նաև սարքավորումների և կահույքի ձեռքբերումը (այդ թվում տրանսպորտային միջոցներ, համակարգիչներ և հնարավորության սահմաններում պարկի տնտեսական գոտուց հավաքված քամատապալ և թափուկներից վառելիքային խորանարդիկների (բրիկետներ) արտադրման հոսքագիծ):

բ. «Պահպանության ծրագրի» համար առաջարկվող ներդրումային պլանով (կապիտալ ներդրումներ և ծրագրերի մշակում) նախատեսված գումարը 2017-2021թթ. հնգամյա ժամանակահատվածի համար կազմում է 262 մլն. դրամ (500 000 եվրո): Ներդրումների հիմնական մասն ուղղվելու է անտառապահների տնակների կառուցմանը: Էական մաս են կազմում նաև «Աղավնավանք» մասնաճյուղի տեղամասային գրասենյակի և տրանսպորտային միջոցների համար նախատեսված գումարները: Որոշ ներդրումներ (օրինակ՝ անտառապահների տնակների կառուցումը և տրանսպորտային միջոցների գնումը) կարող են կատարվել ԿԲՀ-ի տարեկան դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

գ. «Մոնիթորինգի և գիտական աշխատանքների ծրագրի» համար առաջարկվող ներդրումային պլանով (կապիտալ ներդրումներ և ծրագրերի մշակում) նախատեսված գումարը 2017-2021թթ. հնգամյա ժամանակահատվածի համար կազմում է 25 մլն. դրամ (50000 եվրո), որի զգալի մասը կօգտագործվի սարքավորումների ձեռքբերման համար (այդ թվում՝ ավտոմեքենա և տարբեր դաշտային սարքավորումներ, ներառյալ՝ տեսագրող սարքեր): Փոքր ներդրում է նախատեսված նաև դասընթացների համար:

դ. «Ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոնի» կառուցման համար նախատեսված ներդրումային ծախսերը կազմում են 78 մլն. դրամ (150000 եվրո): Ծրագրի մեկնարկն արդեն տրված է, իսկ ֆինանսավորումը՝ հաստատված:

ե. «Այցելուների ծրագրի» համար անհրաժեշտ ներդրումային ծախսերը զգալի են՝ գրեթե 124 մլն. դրամ (235000 եվրո) և կպահանջվի արտաքին ֆինանսավորում: Նախատեսված ներդրումները ներառում են երթուղիների կազմակերպումը, ցուցանակների տեղադրումը և տեղեկատվական կետի հիմնումը՝ սանիտարական հարմարություններով, ինչպես նաև Հաղարծնի ճանապարհին գտնվող տեղամասային գրասենյակի վերակառուցումը սրճարանի: Առաջարկներից է նաև Դիլիջան քաղաքում «Արկածային կենտրոնի» (“Discovery” center) կառուցումը, որը այս ֆինանսավորման ծրագրից դուրս է:

զ. «Կրթության և հանրային իրազեկման ծրագրի» համար առաջարկվող ներդրումային ծախսերը (կապիտալ ներդրումներ և ծրագրերի մշակում) կազմում են մոտ 8.7 մլն. դրամ (17000 եվրո):

2. Ակնկալվող ֆինանսական ռեսուրսները (5 տարվա կտրվածքով) և անհրաժեշտ ներդրումների իրականացման համար պահանջվող բյուջեն

1) Վերլուծությունները ցույց են տալիս, որ ՀՀ պետական բյուջեից և ԴԱՊ-ի սեփական աղբյուրներից ստացվող ֆինանսական միջոցների մեծ մասն ուղղվում է աշխատավարձին և այլ գործառնական ծախսերին (կոմունալ ծախսեր, պահպանություն և այլն) և մնացած գումարը բավարար չէ ներդրումներ կատարելու համար: Ակնկալվում է, որ ԿԲՀ-ի կողմից նախատեսված ֆինանսավորման շարունակականությունը և ավելացումը, ինչպես նաև զբոսաշրջային գործունեության խթանման արդյունքում սեփական եկամուտների աճը զգալիորեն կբարելավի ազգային պարկի ֆինանսական վիճակը:

2) «Դիլիջան» ազգային պարկի եկամուտների և ծախսերի ակնկալվող ծավալները 2017-2021թթ. ներկայացվում է ստորև.

«ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ևՎ ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐԸ

(2017-2021թթ.)

Եկամուտներ						(Հազ. դրամ)
Տարի	2017	2018	2019	2020	2021	Ընդամենը
Պետական բյուջե	107 691,7	107 691,7	107 691,7	107 691,7	107 691,7	538 458,5
Սեփական եկամուտներ	50 575,0	62 275,0	67 275,0	77 275,0	87 275,0	344 675,0
1. Հողի վարձավճարներ	31 275,0	31 275,0	31 275,0	31 275,0	31 275,0	156 375,0
2. Փայտանյութի վաճառք	18 300,0	16 000,0	16 000,0	16 000,0	16 000,0	82 300,0
3. Էկոտուրիզմ	1 000,0	15 000,0	20 000,0	30 000,0	40 000,0	106 000,0
Դոնորներ	108 934,0	92 600,0	86 700,0	86 700,0	86 700,0	461 634,0
1. ԿԲՀ	86 700,0	86 700,0	86 700,0	86 700,0	86 700,0	433 500,0
2. WWF Հայաստան	22 234,0	5 900,0				28 134,0
Ընդամենը (Հազ. դրամ)	267 200,7	262 566,7	261 666,7	271 666,7	281 666,7	1 344 767,5
Ընդամենը (Եվրո)	504,152	495,409	493,711	512,579	531,447	2 537,297
Ծախսեր						(Հազ. դրամ)
Տարի	2017	2018	2019	2020	2021	Ընդամենը
Ընթացիկ ծախսեր						
1. Աշխատավարձի ծախսեր	163 860,0	178 200,0	178 200,0	178 200,0	178 200,0	876 660,0
2. Ապրանքների գնման ու ծառայությունների վճարման ծախսեր	49 827,6	50 878,1	53 902,7	54 076,0	54 026,0	262 710,4
Ընդամենը ընթացիկ ծախսեր	213 687,6	229 078,1	232 102,7	232 276,0	232 226,0	1 139 370,4
Ներդրումների և ծրագրերի համար հասանելի գումարը (հազ. դրամ)	53513,0	33573,0	29648,0	39475,0	49525,0	205734,0
Ներդրումների և ծրագրերի համար հասանելի գումարը (Եվրո)	100,967.38	63,344.72	55,939.81	74,480.75	93,443.58	388,178.13

3) Ակնկալվում է, որ առաջիկա հինգ տարիների ընթացքում եկամուտները կլինեն համեմատաբար կայուն, իսկ ՀՀ պետական բյուջեից եկամուտների էական ավելացում չի նախատեսվում, սակայն ֆինանսավորման ծավալները ենթակա են ճշգրտման՝ համաձայն ամեն տարվա համար նախատեսվող բյուջեի: Թեև կառավարման պլանով ազգային պարկի տնտեսական գործառույթներից ձևավորվող սեփական եկամուտների զգալի աճ չի նախատեսվում, այնուամենայնիվ ակնկալվում է էկոտուրիզմից ստացվող եկամուտների աստիճանական աճ, որը ենթադրվում է ստանալ ազնվացեղ եղջերուների բազմացման նոր ստեղծվելիք կենտրոնի գործունեության արդյունքում:

4) «Դիլիջան» ազգային պարկում առաջիկա 5 տարիների ընթացքում նախատեսվող ներդրումների համար անհրաժեշտ ծախսերը և դրանք կյանքի կոչելու համար ակնկալվող գումարները ներկայացված են ստորև.

Ներդրումային ծրագրերի կառուցվածքային դեֆիցիտը (հազ.դրամ)						
Տարիները	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	Ընդամենը
Ներդրումների և ծրագրերի համար հասանելի գումարը	53,513	33,573	29,648	39,475	49,525	205,734
Առաջարկվող ներդրումները ծրագրերի իրականացման համար						
1. Վարչական ծրագրի համար	49250,0	33325,0	14750,0	14575,0	13500,0	125400,0
2. Պահպանության ծրագրի համար	50925,0	68525,0	80725,0	42350,0	19950,0	262475,0
3. Մոնիթորինգի և գիտական աշխատանքների ծրագրի համար	8395,0	12925,0	2000,0	1000,0	575,0	24895,0
4. Ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագրի համար	61500,0	16500,0	0,0	0,0	0,0	78000,0
5. Այցելուների ծրագրի համար	22500,0	28950,0	16750,0	28000,0	28000,0	124200,0
6. Կրթության և հանրային կապերի ծրագրի համար	750,0	4650,0	600,0	400,0	2350,0	8750,0
Ընդամենը (հազ.դրամ)	193320,0	164875,0	114825,0	86325,0	64375,0	623720,0
Ընդամենը (եվրո)	364,755	311,085	216,651	162,877	121,462	1,176,830

Դեֆիցիտ (հազ դրամ)	(139,807)	(131,302)	(85,177)	(46,850)	(14,850)	(417,986)
Դեֆիցիտ (եվրո)	(263,787)	(247,740)	(160,711)	(88,397)	(28,019)	(788,652)

5) Թեև ազգային պարկում իրականացվող ներդրումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ակնկալվող եկամուտների շարժը կազմվել է իրատեսական հաշվարկների հիման վրա, այնուամենայնիվ ներդրումները գերազանցում են ակնկալվող եկամուտների ծավալներին և 5 տարվա կտրվածքով գոյանում է շուրջ 418 մլն. դրամի չափով դեֆիցիտ: Ներդրումների համար բավարար ֆինանսական միջոցների անհասանելիության դեպքում կվերանայվեն ծախսերը և կմշակվի փոխզիջումային ներդրումային պլան, որը կկենտրոնանա ամենակարևոր կարիքների վրա՝ հետաձգելով մի շարք միջոցառումների իրականացումը:

6) Ազգային պարկի առաջիկա 5 տարվա ներդրումների պլանը ներկայացված է «IX.Հիմնական կարիքների ներդրումային պլան» գլխում՝ ներառելով գործողությունների ծրագիրը և բյուջեները: Անհրաժեշտության դեպքում կվերանայվեն տարեկան բյուջեները՝ համապատասխանեցնելով այն ֆինանսական ռեսուրսներին, որոնք իրականում հասանելի են ազգային պարկին և համահունչ են արդեն իսկ իրականացված գործողություններին: Այնուամենայնիվ ակնհայտ է, որ ներդրումային ծրագրերը լիարժեք իրականացնելու նպատակով ազգային պարկը պետք է աջակցություն ստանա միջազգային և այլ կազմակերպությունների կողմից, ինչպես նաև ակտիվորեն զբաղվի միջոցների ներգրավմամբ (ֆոնդայզինգով)՝ պոտենցիալ դոնորների շրջանում:

3. Եկամտի հավանական լրացուցիչ աղբյուրներ

1) Քանի որ ներդրումային պլանը իրականացնելու համար ազգային պարկը չունի բավարար ֆինանսական միջոցներ, ապա խիստ անհրաժեշտություն է առաջանում գործընկերային հարաբերություններ զարգացնել տարբեր կազմակերպությունների հետ և ձեռք բերել լրացուցիչ ֆինանսավորում: «Դիլիջան» ազգային պարկի նախատեսվող ծրագրերի իրականացման համար պահանջվող ներդրումների մի մասը կարող է հատկացվել տեղական ՀԿ-ների, գործարար հատվածի կողմից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

2) Վահանակների և ցուցատախտակների ծախսերը հոգալու համար ազգային պարկը հավանական կորպորատիվ գործընկերներ ձեռք բերելու նպատակով պետք է դիմի գործարար հատվածին, որոնց կարող է հետաքրքրել գովազդելու իրենց լոգոները դրանց միջոցով: Հավանական հովանավորներ կարող են լինել. «Գրանդ Քենդի», «ՎիվաՍել ՄՏՍ», «ԱրմենՏել», «HSBC բանկ Հայաստան», «Կոկա-Կոլա», «ՊրոԿրեդիտ բանկ», «ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ», «ՎՏԲ-Հայաստան», «Դիլիջանի հանքային ջրերի գործարան» և այլ կազմակերպություններ:

3) ԴԱՊ-ը պետք է սերտորեն համագործակցի գիտական հաստատությունների և համալսարանների հետ: Բույսերի տեսակներն ուսումնասիրելու համար ազգային պարկը պետք է համագործակցի Բուսաբանության ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի հետ, որոնք կարող են օգնել տեսակների հավաքման և նույնականացման, հերբարիումի պահման, տվյալների բազայի ստեղծման և տվյալների վերլուծության հարցերում: ԴԱՊ-ը պետք է գործընկերություն հաստատի նաև Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, Երևանի պետական համալսարանի և ԲՀՀ-ի հայաստանյան ներկայացուցչության հետ, որոնք կարող են օգնել դաշտային աշխատանքներում՝ կենդանիների տեսակների նույնականացման, տվյալների բազայի ստեղծման և տվյալների վերլուծության հարցում: Մոնիթորինգի և գիտական աշխատանքների ծրագիրը կարող է աջակցություն ստանալ մի շարք միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների կողմից:

4) Անտառային վերականգնողական միջոցառումներ իրականացնելու համար ազգային պարկը պետք է գործընկերություն հաստատի տարբեր գիտական հաստատությունների,

միջազգային կազմակերպությունների և ՀԿ-ների հետ, որոնք զբաղվում են անտառապատման և անտառավերականգնման հարցերով: Դրանք կարող են օգնել ազգային պարկին՝ տրամադրելով մարդկային և ֆինանսական ռեսուրսներ, ստեղծելով տնկարան և ապահովելով տնկման աշխատանքների տեխնիկական սպասարկումն ու աշխատուժի ծախսերը: Այս դեպքում որոշ կազմակերպություններ, ինչպիսիք են «Հայաստան Ծառատունկ ծրագիր» բարեգործական հիմադրամը (ATP) և այլ ՀԿ-ներ, կարող են համապատասխան աջակցություն ցուցաբերել և անտառային վերականգնողական նախագծեր իրականացնել:

5) Կովկասյան ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոն ստեղծելու համար անհրաժեշտ ներդրումն արդեն ֆինանսավորվել է ԲՀՀ-ի, ԿԲՀ-ի, TJS-ի, «Օրանժ Հայաստան»-ի և «HSBC-բանկ Հայաստան»-ի կողմից, ինչը մեկ նպատակի իրականացման համար մի քանի կազմակերպությունների շահագրգռվածության և միջոցների համախմբմանն ու համատեղ ուղղորդման լավագույն օրինակ է:

VIII. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. Մոնիթորինգ և Գնահատում

1) Կառավարման պլանի իրականացման ընթացքն անհրաժեշտ է պարբերաբար մշտադիտարկել: Ազգային պարկը ՀՀ բնապահպանության նախարարությանը պետք է հաշվետու «IX.Հիմնական կարիքների ներդրումային պլան» գլխում ներառված հնգամյա պլանի իրականացման համար: Քանի դեռ ԿԲՀ-ն աջակցում է ազգային պարկին՝ օպերացիոն ֆոնդերի միջոցով, ապա այդ կազմակերպությունը կգնահատի ազգային պարկի զեկույցները և իր առաջարկությունները կներկայացնի ՀՀ բնապահպանության նախարարությանը: Դրան զուգահեռ, 2020թ-ին կամ 2021թ-ին կիրականացվի միջանկյալ վերլուծություն (կառավարման պլանի իրականացման չորրորդ կամ հինգերորդ տարում)՝ համակարգված կերպով գնահատելու առաջընթացը, ինչը թույլ կտա պարզել ազգային պարկի ընդհանուր ռազմավարության իրականացմանն ուղղված կառավարման պլանում էական ճշգրտումներ կատարելու անհրաժեշտությունը՝ կառավարման պլանի միջանկյալ գնահատման արդյունքում կմշակվի նոր օպերացիոն պլան հաջորդ 5 տարիների՝ 2022-2026 թվականների համար:

**«ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ,
ԳՈՏԻԱՎՈՐՈՒՄԸ**

1. Ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը

1) Բնական պայմանների առանձնահատկությունները՝


ա. Կլիմա - ԴԱՊ-ի տարածքի կլիմայական պայմանները պայմանավորված են ուղղահայաց գոտիավորմամբ և հիմնականում բնութագրվում չափավոր տաք և խոնավ կլիմայով: Միջին լեռնային գոտու կլիմայական պայմանները համընկնում են սեզոնային եղանակներին, ստորին գոտուն հատուկ է երկար ամառը, իսկ բարձր լեռնային գոտուն՝ երկար ձմեռը: Մթնոլորտային շրջանառությունը և օդի հոսքերը մեծապես ազդում են տարածքի կլիմայի վրա: Բարձրությանը զուգահեռ տեղումներն ավելանում են: Ստորին լեռնային գոտում տարեկան տեղումների միջին մակարդակը 500մմ է, իսկ բարձր լեռնային գոտում այն հասնում է 850մմ-ի: Առավելագույն տեղումները լինում են գարնանը, (տարեկան միջին տեղումների 35%-ը), իսկ նվազագույն տեղումները՝ ձմռանը (12%): Բարձր լեռնային գոտում, որտեղ ձյունածածկ շրջանը տևում է մոտ 270 օր, ձյան խորությունը գերազանցում է 70 սմ-ը: Ստորին լեռնային գոտում ոչ բոլոր տարիներին է առաջանում ձնածածկույթ: Ստորին լեռնային գոտում միջին ջերմաստիճանը հունվարին 0-2.5 աստիճան է, իսկ հուլիսին այն հասնում է մինչև 21 աստիճանի: Միջին լեռնային գոտում միջին ջերմաստիճանը հունվարին 10-13 աստիճան է, իսկ օգոստոսին՝ մինչև 15 աստիճան: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 35 աստիճան է, իսկ բացարձակ նվազագույնը՝ -26: Անսառնամանիք շրջանը տևում է 200-210 օր:

բ. Հիդրոլոգիան - ԴԱՊ-ի գետերը պատկանում են Կուր գետի ավազանին: Հարուստ գետային ցանցը տարածաշրջանի նշանավոր առանձնահատկությունն են: Գետերն ու գետակները տիպիկ լեռնային են, սնվում են ձնհալից և անձրևաջրերից, ինչպես նաև բազմաթիվ ստորերկրյա աղբյուրներից: Գետերի հիմնական ուղղությունը հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք է: Գետերի մեծ մասը սակավաջուր են, հեղեղները հիմնականում տեղի են ունենում գարնանը՝ առաջացնելով սելավներ: Այս գետերը բնութագրվում են բարձր անկմամբ և թեքություններով, արագ հոսքով, քարի և ավազի բարձր պարունակությամբ, ինչպես նաև լեռնային գետերին բնորոշ ջրվեժներով և սահանքներով: Աղստևը պարկի տարածքով անցնող հիմնական գետն է, որը սկիզբ է առնում Փամբակի հյուսիսային լանջերից /Թեժ լեռ, 3101մ/: Գետի երկարությունը 121 կմ է, ավազանի մակերեսը՝ 2500 քառակուսի կիլոմետր, իսկ տարեկան հոսքը՝ 256 մլն խորանարդ մետր: Այն սնվում է ձնհալներից ու անձրևներից և առավելագույն հոսքը նկատվում է մայիսից մինչև հունիս: Գետի վերին հոսանքն անցնում է Մարգահովտի գոգավորությունով, որը նեղ կիրճ է, ապա ընդլայնվում է՝ հոսելով անտառածածկ խորը կիրճով, անցնելով Դիլիջան և Իջևան քաղաքների միջով: Այնուհետև գետը անցնում է հարթավայրով, հատում Հայաստանի սահմանը և թափվում Քուր գետը: Աղստևի հիմնական վտակը Գետիկն է, իսկ Հովվաջուր, Շտողանաջուր, Հաղարծին և Բլղան գետակները փոքր վտակներ են: Գետիկ գետը (58 կմ երկարությամբ և 586 քառակուսի կիլոմետր ավազանով) սկիզբ է առնում Սևանի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ 2620մ բարձրությունից, հոսելով Արեգունու և Միափորի միջլեռնային հովտով: Այն աջ կողմից թափվում է Աղստև գետը՝ Հաղարծին գյուղից 5 կմ ներքև, Աղստևի գետաբերանից 63 կմ հեռավորության վրա: ԴԱՊ-ը հայտնի է իր հանքային աղբյուրներով: Հատկանշական են Թթուջուրը (Գետիկ գետի հովտում), Մարգահովտը (հարուստ է երկաթով), Ֆիոլետովոն (հարուստ է ածխածնով և կալցիումով) և Բլղանի

աղբյուրները (որոնք հայտնի են «Դիլիջան» բրենդավորմամբ): Հիդրո-կարբոնատներով հարուստ այս ջրերը օգտագործվում են աղեստամոքսային հիվանդությունների բուժման համար: Պարկը հայտնի է նաև իր լճակներով, որոնցից ամենամեծն ու ամենահայտնին Արեգունի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին՝ 1400մ բարձրության վրա գտնվող Պարզ լիճն է, որն ընկած է Դիլիջան քաղաքից 8 կմ հյուսիս-արևելք: Պարզ լիճը զբաղեցնում է 2 հա մակերես, երկարությունը 250մ է, լայնությունը՝ 70մ, միջին խորությունը՝ 6մ, ջրի ծավալը՝ 83,8 հազ. մ³, իսկ ջրհավաք ավազանը՝ 1,52 կմ²: Հաջորդը՝ Գոշալիճն է (Տգրկա), որը գտնվում է Պարզ լճից արևելք՝ ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա: Այն ունի 56մ երկարություն և 270մ լայնություն, մակերեսը 1,53 հա է, ջրբաժան հատվածի մակերեսը՝ 1,34 կմ² է, իսկ միջին խորությունը՝ 6մ : Պարկում կան նաև մի քանի փոքրիկ լճակեր:

գ. Երկրաբանությունը և ռելիեֆը - Ազգային պարկը գտնվում է Փոքր Կովկասի լեռնաշղթայի կենտրոնական հատվածում: Պարկի մակերևույթի բարձրությունները պատկերված են քարտեզ 6-ում:


Քարտեզ 6 ԴԱՊ-ի մակերևույթի բարձրությունները



Պարկի արևելյան հատվածը ընդգրկում է անհամաչափ կառուցվածք ունեցող Միափորի լեռնաշղթայի 54կմ երկարությամբ հարավային լանջերը, որի արևմտյան հատվածը բնութագրվում է ժայռոտ մերկացումներով: Այն կենտրոնական հատվածում բարձրանում է (Միափոր՝ 2993մ), ապա կրկին իջնում: Իջևանի լեռնաշղթան հյուսիսից կամարածև տարածվում է դեպի հյուսիս-արևելք: Լեռնաշղթան աչքի է ընկնում գառիթափ լանջերով և մինչև 200մ բարձրությամբ կրաքարային ժայռային կտրվածքներով: Այստեղ լայն տարածում ունեն ռելիեֆի կարստային ձևերը (քարանձավներ, վիհեր, խառնարաններ և այլն): Հալաբի (Բովաքարի) լեռնաշղթան տարածվում է Իջևանի լեռնաշղթայի արևմուտքից դեպի Գուգարաց լեռնաշղթայի հարավային ջրբաժան գոտի: Ամենաբարձր կետը Բովաքար լեռն է՝ 3016մ: Հարավարևմտյան

հատվածում պարկը շրջապատված է Փամբակի լեռնաշղթայի լեռնաբազուկներով: Փամբակի լեռնաշղթայի քարեգրությունը ներկայացնում են էոցենային դարաշրջանի, հրաբխա-նստվածքային ապարները: Այն առանձնանում է լանջերի մեղմ թեքություններով և քիչ անհարթություններով: Լեռնաշղթայի գագաթները գմբեթաձև են: Կենտրոնական մասը համեմատաբար բարձր է (Թեժ լեռ՝ 3101մ) և բնորոշվում է մասնատվածության բարձր մակարդակով: Լեռնաշղթայի այս հատվածներում (հատկապես Դիլիջանում) սողանքները շատ տարածված են: Փամբակի լեռնաշղթայի արևելյան հատվածը Սևանի լեռնանցքով բաժանված է Արեգունի լեռնաշղթայից, որը տարածվում է Սևանա լճի հյուսիս-արևելյան հատվածում: Արեգունին ունի միջին բարձրություն՝ գագաթային գոտում հասնելով 2600 մ: Արեգունի լեռնաշղթան հյուսիսում Միափորի լեռներից բաժանված է Գետիկ գետի հովտով: Ազգային պարկի տարածքի 43%-ից ավելին գտնվում է 1600-2000մ բարձրության վրա, 33,9%-ը՝ 1200-1600մ, իսկ 16%-ը՝ 2000-2400մ բարձրության վրա՝ հիմնականում ներառելով բարձրադիր անտառները և ենթալպյան մարգագետինները: Այս տարածքը կարևոր ապրելավայր է այնպիսի էնդեմիկ տեսակների համար, ինչպիսիք են Կովկասյան ազնվացեղ եղջերուն և Կովկասյան մարեհավը: Տանձուտ և Աղսուտ գետերի լանջերը ավելի ուղղաձիգ են: Ամենաբարձր հատվածը սեղանաձև է, անանցանելի և Հաղարծին գետի ջրահավաք ավազանի մոտ միանում է Կայենի (Իջևանի) քարքարոտ լեռնաշղթային: Մակերևույթի թեքությունները պատկերված են քարտեզ 7-ում.


Քարտեզ 7 ԴԱՊ-ի մակերևույթի թեքությունները



Ըստ քարտեզի 30 և ավելի աստիճան թեքություն ունեցող լանջերը զբաղեցնում են պարկի տարածքի 19,8%-ը: Անտառային օրենսգրքի համաձայն՝ այսպիսի լանջերի վրա արգելվում է ցանկացած տիպի անտառահատում և այս տարածքները պետք է ներառվեն պարկի արգելոցային գոտում՝ անտառահատումներից և սողանքներից պաշտպանելու համար: ԴԱՊ-ի տարածքի գրեթե կեսը ընկած է 20-30° թեքության վրա, որտեղ ևս արգելվում է

անտառահատումը, քանի որ պարկի ողջ տարածքը սողանքների ազդեցության տակ է, ինչպես նկարագրվում է հաջորդիվ: Խորը էրոզիոն հովիտները, որոնք առաջացել են Աղստեից և դրավտակներից, ևս համարվում են տարածքի հիմնական տեղագրական միավորները և որոշ տեղերում ընդարձակվելով ձևավորում են միջլեռնային գոգավորություններ: Տեկտոնական շարժումները մեծապես ազդում են հովիտների ձևավորման վրա: Կառուցվածքային և կուտակումային դարավանդները լավ պահպանված են գետերի հովիտներում: Աղստե գետի միջին հոսանքի հովիտը նեղ է և բնութագրվում է մեծ խորությամբ (մոտ 400մ), իսկ որոշ տեղեր լայնանալով առաջացնում է Դիլիջանի կառուցվածքային և կուտակումային դարավանդները: Գետիկ գետի հովիտը V-աձև է և միջին ու ցածր հատվածներում նեղանում և խորանում է: Այն առանձնացված է կողային հովիտներից: Ժայռերը բավականին տարածված են գետի ստորին հոսանքներում: Պարկը հիմնականում տեղակայված է հյուսիսային և հարավային լանջերին (Քարտեզ 8):

Քարտեզ 8 ԴԱՊ մակերևույթի կողմնադրությունները



դ. Հողերը և բնական վտանգները - ԴԱՊ-ի հողային ծածկույթն ունի հիմնականում երկու հողատիպեր՝ անտառային և լեռնամարգագետնային: Անտառային գոտում գերակշռում են շագանակագույն և դարչնագույն անտառային հողերը, որոնք հզոր են, ունեն հորիզոնների լավ դիֆերենցվածություն և ձևավորվում են բարձր խոնավություն և կայուն ջերմաստիճան ունեցող տարածքներում: Դարչնագույն անտառային հողերը գերակշռում են խոնավության տարբեր պարունակությամբ տաք շրջաններում՝ մինչև 1500մ բարձրության վրա, կաղնու և բոխու անտառածածկի առկայության դեպքում: Հողը ձևավորող հիմնական քարերն են կրաքարը, դոլոմիտները և պորֆիրները (marlstones, dolomites, porphyries): Այս հողերին բնորոշ է բարձր կլանողականությունը, չեզոք կամ շատ թեթև արտահայտված հիմնային ռեակցիան, լավ

արտահայտված կարբոնիտային շերտը, դարչնագույն կամ մուգ շագանակագույն երանգավորումը, ինչպես նաև հումուսով հարուստ հողերին բնորոշ հատիկավոր կառուցվածքը և կավով հարուստ միջին շերտը: Հողի այս տեսակը բաժանվում է երեք ենթատեսակների՝ լվացվող (առանց կրաքարի), տիպիկ (մասնակի լվացվող) և կարբոնատային, որն իր հերթին բաժանվում է մարգագետնային, կրային, կավային և այլ հողատիպերի: Շականակագույն անտառ Շագանակագույն անտառահողերը հանդիպում են հյուսիսային լանջերին՝ մինչև 1800մ բարձրության վրա, հիմնականում բոխու և հաճարենու անտառածածկույթներում: Հողային կառուցվածքին բնորոշ է շագանակագույն գունավորումը և թույլ գոտիավորումը: Առանձնացվում են երկու ենթատիպեր՝ ցածր և բարձր հազեցվածությամբ հողային շերտեր: Ցածր հազեցվածությամբ հողերն ավելի հզոր են և հողի երկու ենթատեսակներում էլ հիդրոլիտիկ թթվայնությունը բարձր է: Էրոզիոն ճնշումը ցածրանալով շագանակագույն հողերը փոխարինվում են սև հողերի, որոնք ձևավորվում են 1700-1800մ բարձրության վրա, իսկ ավելի բարձր տեղանքներում՝ լեռնամարգագետնային հողերի: Անցումային հողերը, որոնք անտառային շագանակագույնից անցնում են լեռնամարգագետնայինի, հիմնականում ձևավորվում են ավելի բարձր գոտում՝ գերազանցապես ենթալպյան գոտում: Այս հողատեսքերը հանդիպում են հարուստ խոտածածկով նոսր անտառներում: Կարբոնատով և հումուսով հարուստ հողերը, տափաստանային շագանակագույն հողերի հետ մեկտեղ, հստակ շերտավորմամբ խճանկարի պես տարածվում են անտառային գոտով մեկ: Տիպիկ ենթատեսակները բաժանվում են մանրախիճ-կրաքարի, կրակավի և թույլ զարգացած հողի տեսակների: Լեռնամարգագետնային սև հողերը ձևավորվում են ենթալպյան գոտում՝ 2400մ բարձրության վրա: Հողի այս տեսակը ձևավորվում է բարձր խոնավության և թույլ գոլորշիացման պայմաններում, ինչպես նաև հացազգի և տարախոտային բույսերի առկայության դեպքում: Այս հողերը, ընդհանուր առմամբ, հարուստ են ազոտով, ֆոսֆորով և ազատ երկաթով: Ալլուվիալ հողերը տարածված են ԴԱՊ-ի տարածքում գտնվող համեմատաբար լայնարձակ հովիտներում, որոնց բնորոշ է բերրիության բարձր մակարդակը: Հայաստանի հյուսիսարևելյան շրջանները, ներառյալ Աղստև գետի ավազանը, աչքի են ընկնում սողանքների հաճախականությամբ և ինտենսիվությամբ, որոնք ազդում են ռելիեֆի ձևավորման վրա: Բավարար խոնավությունը, խիստ թեքությունները, գրունտային ջրերը, նախալեռների լվացումը, ուժեղ նստվածքները, ակտիվ տեղումները և այլ գործոններ նպաստում են սողանքների առաջացմանը: Մարդածին գործոնները, հատկապես անօրիանական ծառահատումը, լանջերի գերխոնավեցումը, շինարարական աշխատանքները, պայթեցումները և հողային աշխատանքները ևս նպաստում են սողանքների ակտիվացմանը: Խոշոր սողանքների վայրեր են Դիլիջանը, Հաղարծինը, Պարզ լիճը, Ֆիոլետովոն և այլն: Սողանքները տարածված են հատկապես Դիլիջան քաղաքում: Աղստև գետի ավազանում և ընդհանրապես Հայաստանի հյուսիս-արևելքում տարածված են նաև սելավները: Սելավները հիմնականում առաջանում են հարավային լանջերին, որոնք բնորոշվում են զառիթափերի ոչ բավարար խոնավացմամբ, ջերմաստիճանի և խոնավացման գործոնների կտրուկ տատանումներով, համեմատաբար թույլ վեգետատիվ ծածկի առկայությամբ, նստվածքային նյութերի ինտենսիվ հողմահարմամբ և կուտակմամբ: Հյուսիսային լանջերին կլիմայական պայմանները ավելի բարենպաստ են, վեգետատիվ ծածկը՝ ավելի հարուստ, իսկ սելավները՝ հազվադեպ: Սելավները առաջանում են կարճ ժամանակահատվածում առատ տեղումների ժամանակ (անձրև կամ կարկուտ): ԴԱՊ-ի տարածքին բնորոշ են թույլ հողմահարումները, էրոզիոն գործընթացները և փարթամ վեգետատիվ ծածկը: Սելավների ներուժը չի գերազանցում 5000մ³/ կմ²-ն, ինչը պարկի տարածքը դարձնում է ցածր սելավային հակվածության ավազան: Այնուամենայնիվ, կլիմայական պայմանների փոփոխությունները, անտառային ծածկի կրճատումը, ինչպես նաև ջրառատ անձրևների ակտիվությունը, բնական լանդշաֆտների խախտումը, էրոզիոն գործընթացները և մարդածին գործողությունները նպաստում են սելավների ակտիվացմանը:

ե. Յամաքային լանդշաֆտները և էկոհամակարգերը - Տարածաշրջանի անտառային բուսականությունը հիմնականում կազմված է կովկասյան և հյուսիսային ֆլորիստիկ տարրերից: Ավելի ցածր լեռնային գոտում (մինչև 1000 մ) գերակշռում են արևելյան բոխու անտառները (*Carpinus orientalis*): Այնպիսի տեսակներ, ինչպիսիք են վրացական կաղնին (*Quercus iberica*), սովորական և հացենի սրապտուղը (*Fraxinus excelsior*, *F. oxycarpa*), ավելի հազվադեպ՝ սովորական բոխին (*Carpinus betulus*), վրացական և դաշտային թխկին (*Acer ibericum*, *Acer campestre*), թեղի տերևաշատը (*Ulmus foliacea*) ևս հանդիպում են անտառային բուսականության կազմում: Արևելյան բոխին հիմնականում ներկայացված է ցածր արտադրողականություն ունեցող պուրակներում, որոնք իրականում երկրորդային ծագում ունեն և փոխարինում են անցյալում կտրված կաղնու անտառներին: Նոսր անտառները տարածված են Աղստև գետի ձախակողմյան ափի հարավային թեքությունների վրա՝ էրոզիայի ենթարկված, քարքարոտ զառիթափ լանջերին: Գիհու նոսր անտառները (*Juniperetum*) հիմնականում աճում են հարավային չոր, քարքարոտ լանջերին, որտեղ այլ տեսակներ չեն աճում: Կովկասյան փոշին (*Celtis caucasica*), նշենին (*Amigdalus fenzliana*), վրացական թխկին (*Acer ibericum*), կովկասյան տանձենին (*Pirus caucasica*), դժնիկ լուծողականը (*Rhamnus catharica*) և այլ երաշտադիմացկուն տեսակներ ուղեկցում են գիհուն: Ընկուզենի սովորականը (*Juglans regia*) աճում է փոքր խմբերով կամ առանձին ծառերի տեսքով՝ 700-1400մ բարձրության վրա: Հաճարենու անտառները հիմնականում տարածվում են 900-2000մ բարձրության վրա գտնվող հյուսիսային զառիթափերի վրա (*Fagetum*): Այստեղ անտառը ձևավորող հիմնական տեսակը արևելյան հաճարենին է (*Fagus orientalis*), մինչդեռ դաշտավայել կաղնուտայինը (*Poa nemoralis*), շուղախոտը (*Festuca mintana*), գետնաստղ բուսվետը (*Asperula odorata*), սինդրիկ օղակավորը (*Polygonatum vericillatum*), դաշտակոտեմ պատկառուկը (*Cardamine impatiens*), շահոքրամ սովորականը (*Geum urbanum*), եղեսպակ կաչունը (*Salvia glutinosa*), զանգակ կաթնածաղկայինը (*Campanula lactiflora*) և այլ տեսակներ սովորաբար հանդիպում են խոտածածկ հատվածներում: Հաճարենու անտառները շատ բազմազան են և ներկայացված են բազմաթիվ տեսակներով: Մահացած հաճարենու անտառներում (*Fagetum nudur*) մացառուտներ չեն առաջանում: Բավարար խոնավության պայմաններում առաջանում են բարձր խոտածածկով հաճարենու անտառներ, մինչդեռ ամենախոնավ հատվածներին բնորոշ է *Fagetum dryopteridosum* հաճարենու տեսակը, իսկ համեմատաբար չոր տարածքներին՝ *Fagetum saniculo-serratulosa*, *F. Festucosum* տեսակները: Արևելյան հաճարենին շատ հզոր տեսակ է և սովորաբար կազմում է միատարր պուրակներ: Այն սովորական բոխու հետ (*Carpinus betulus*) հազվադեպ է կազմում խառը պուրակներ և ավելի հազվադեպ՝ կնձնու հետ (*Ulmus elliptica*): Այլ ուղեկից տեսակներ բավականին հազվադեպ են հանդիպում և ներառում են այնպիսի տեսակներ, ինչպիսիք են սրտածև լորենին (*Tilia cordata*), սրատերև թխկին (*Acer platanoides*), բարդի դողդոջունը (*Populus tremula*), կովկասյան տանձենին (*Pyrus caucasica*), կեռասենի անտառայինը (*Cerasus avium*), ավելի քիչ են պատահում, սովորական արոսին (*Sorbus aucuparia*), արջատխլենին (*Corylus colurna*), բարձրլեռնային-կովկասյան թխկին (*Acer trautvetteri*), դաշտային թխկին (*A.campestre*), արևելյան կաղնին (*Quercus macranthera*): Այծուռենին (*Salix caprea*) կարող է հաճախ հանդիպել երիտասարդ հաճարենու անտառում, որը, պուրակի զարգացման հետ մեկտեղ, ի վերջո դուրս է մղվում: Կենին (*Taxus baccata*), ցեխակեռաս կովկասյանը (*Lonicera caucasica*), ալայան հաղարջը (*Ribes alpinum*), մասրենին (մի քանի տեսակ), ազնվամորին (*Rubus idaeus*), կտտկենին կամ թանթրվենի սևը (*Sambucus nigra*) ևս կարող են հանդիպել, սակայն՝ ավելի հազվադեպ: Հաճարենու անտառները կարող են հասնել մինչև վերին անտառների սահմանը և աճել որպես հատուկենտ, ցածրաճ ծառեր: Հաճարենին խառը պուրակներ է կազմում հյուսիս-արևելյան, հյուսիս-արևմտյան լանջերին: Սովորաբար դրանք փոքր խմբերով աճում են նաև հարավ-արևմտյան և հարավ-արևելյան լանջերին: Ընդհանուր առմամբ հաճարենու անտառները ավելի լավ են պահպանվել, քան կաղնու անտառները: Կաղնիները հաճախ աճում են հաճարենու

անտառների ներսում կամ դրանց սահմաններին: Կաղնու մաքուր անտառները (*Quercetum*) գրեթե միշտ գտնվում են արևելյան չոր լանջերին, միջին և վերին անտառային գոտիներում, մինչդեռ խառը տիպի անտառները պատահում են արևելյան և արևմտյան լանջերին: Վրացական կաղնու (*Quercus iberica*) խառը անտառները զբաղեցնում են 1200մ բարձրության տարածքները: Վրացական և կովկասյան կաղնու տեսակները սովորաբար աճում են կողք-կողքի՝ 1200-1400մ բարձրություններում: Մինչդեռ 1400մ-ից բարձր տարածքներում աճում է միայն արևելյան կաղնին (*Quercus macranthera*), որի ուղեկից տեսակներն են սովորական բոխին (*Carpinus betulus*), արևելյան բոխին (*Carpinus orientalis*), հացենու տեսակները (*Fraxinus excelsior*, *F. oxycarpa*), թխկու տեսակները (*Acer campestre*, *A. hyrcanum*, *A. platanoides*, *A. ibericum*), լորենու տեսակները (*Tilia cordata*, *T. caucasica*), արևելյան խնձորենին (*Malus orientalis*), կովկասյան տանձենին (*Pyrus caucasica*) և այլ տեսակներ: Արևելյան սզնին (*Crataegus orientalis*) և սովորական հոնին (*Cornus mas*) հիմնականում հանդիպում են ենթանտառում: Վրացական կաղնին (*Q. iberica*) տարածված է հարավային զառիթափ լանջերին, 1200-1400մ բարձրության վրա, մինչդեռ արևելյան կաղնին (*Q. macranthera*)՝ բարձրալեռնային գոտու հյուսիսային լանջերին՝ 1500մ և ավելի բարձրությունների վրա: Բոխին հանդիպում է հաճախե՛նու և կաղնու խառը անտառներում, հիմնականում վրացական կաղնու հետ միասին՝ 1300մ բարձրության վրա: Բոխու անտառներն (*Carpinetum*) աճում են համեմատաբար խոնավ լանջերին: Մացառուտները, որտեղ ներկայացված են սովորական տխլենին (*Corilus avellana*), սովորական գլոնենին (*Mespilus germanica*), գերիմաստի սովորական (*Viburnum lantana*) տեսակները, հանդիպում են հարավային լանջերին և բացատներում: Թեև բոխու անտառներում, խոտածածկը լավ չի զարգացած, այնուամենայնիվ հանդիպում են խարբուկ խոշորածաղիկը (*Lapsana grandiflora*), սինդրիկ օղակավորը (*Polygonatum verticillatum*), կտավատ սրոհունդատերևը (*Linum hypericifolium*), ոգնախոտ հավաքվածը (*Dactylis glomerata*), եղեսպակ կաչունը (*Salvia glutinosa*), այծմորուք արևելյանը (*Galega orientalis*) և այլ տեսակներ: Կաղնու և բոխու անտառները աճում են հարավ-արևելյան և հարավ-արևմտյան հատվածներում: Հյուսիսում դրանք փոխարինվում են հաճախե՛նու և բոխու անտառներով: Կաղնու և բոխու անտառները համեմատաբար լավ են աճում՝ համադրվելով թխկու, հաճենու, կնձնու և այլ տեսակների հետ: Սոճու անտառները սովորաբար հանդիպում են անտառի միջին և մասնակիորեն նաև վերին գոտիներում՝ կաղնու կամ կաղնու և բոխու անտառների մոտ: Վայրի մրգերի ծառատեսակները բավականին տարածված են և ներկայացնում են խնձորենին (*Malus*), տանձենին (*Pyrus*), սզնին (*Crataegus*), ընկուզենի հունականը (*Juglans regia*), սալորենի չովածը (*Prunus divaricata*) և այլն: Ենթալայան անտառները բավականին լավ են ներկայացված Հյուսիսային Հայաստանի որոշ շրջաններում՝ ծովի մակարդակից 1800-2200մ բարձրության վրա: Ենթալայան անտառները բնութագրվում են կարճ (5-10մ), միայնակ ծառերով, որոնք անհավասար ցրված են մարգագետիններում: Այս անտառներում ամենատարածված տեսակներն են կաղնին, հաճախե՛նին, թխկին, կեչին, արոսենին, հազվադեպ հանդիպում են նաև կնձնու, լորենու և թխկու ճնշված ծառերի խմբեր: Բոնչին, մոշենին, փշահաղարջը, մի քանի տեսակի մասրենիներ, թխենին՝ ազնվամորու հետ աճում են ենթանտառում կամ բաց մարգագետիններում: Անտառի վերին սահմանում ծառատեսակները սովորաբար վերածվում են թփուտների, որոնցում գերակշռում են կովկասյան մրտավարդի առանձացված թփուտները: Լեռնամարգագետնային բուսականությունը տարածված է 1700-2550մ բարձրության վրա: Մարգագետինների մեծ մասն օգտագործվում են որպես արոտավայրեր, որոնցում հանդիպում են սիզախոտ մարգագետնայինը (*Phleum pratense*), ոգնախոտ կծկավորը (*Dactylis glotemera*), դաշտավլուկ կաղնուտայինը (*Poa nemoralis*), երեքնուկ մարգագետնայինը (*Trifolium pratense*), ագրիսոտուկ սպիտակը (*Agrostis alba*) և այլն: Բնական մարգագետինները դասակարգվում են ենթալայան և ալպյան մարգագետինների: Ենթալայան բուսականությունից անցումը ալպյան բուսականության տեղի է ունենում աստիճանաբար, երբեմն նաև՝ աննկատ: Ենթալայան

(*P. spinosa*), հոնի սովորական (*Cornus mas*), գլեռ սովորական (*Mespilus germanica*), կոկոռչենի թեքված (*Grossularia reclinata*), ինչպես նաև սզնի (*Crataegus*), հաղարջենի (*Ribes*), մոշենի (*Rubus*) ցեղերի տեսակները: Անտառները հարուստ են նաև ընկուզենի սովորական (*Juglans regia*) և տխլենի սովորական (*Corylus avellana*) տեսակներով: Անտառի վերին սահմանի մոտ ենթալայան գոտում հաճախ հանդիպում են կեչու անտառներ, որոնցում գերակշռում են կեչի ելունդավոր (*Betula pendula*), կեչի Լիտվինովի (*B. litvinovii*), բարդի դողդոջուն (*Populus tremula*), այծուռենի (*Salix caprea*) և այլ տեսակները: Մշտադալար փշատերև անտառները բավական սփռված են ազգային պարկում, սակայն մեծ տարածքներ չեն զբաղեցնում: Այս համակեցություններում գերակշռող տեսակներից է Կոխի սոճին (*Pinus kochiana*), որը երբեմն կազմում է շատ խիտ ծառուտներ: Բնական սոճու պուրակները այս տարածքի անտառներին շատ բնորոշ ռելիեֆային տարր են, դրանք չեն զբաղեցնում մեծ տարածքներ և ներկայումս բնական ծառուտները դժվար է տարբերել խորհրդային ժամանակահատվածում հիմնադրված արհեստական տնկարկներից: Գիհու նոսրանտառները սովորաբար հանդիպում են անտառային բուսականության վերին սահմանի մոտ (1800-2000մ): Այս համակեցություններում գերակշռում են գիհու երեք տեսակներ՝ գիհի բազմապտուղը (*Juniperus polycarpus*), գիհի գարշահոտը (*J. foetidissima*) և գիհի երկարատերևը (*J. oblonga*): Գիհու ևս մեկ տեսակ՝ գիհի սեղմվածը (*J. depressa*) նույնպես լայնորեն տարածված է ազգային պարկի տարածքում, սակայն դրա թփուտները ենթալայան բուսականության մաս են կազմում: Կենին (*Taxus baccata*) բավական հաճախ է հանդիպում ազգային պարկի տարածքում՝ սովորաբար առանձնյակների տեսքով: Աղավնավանք գյուղի մոտ պահպանվում է կենու բավական մեծ պուրակը: Այստեղ լեռնային փոքր գետակի առաջին և երկրորդ դարավանդներում աճում են կենու բազմաթիվ ծառեր (300-400 տարեկան, մինչև 25 մ բարձրության և 75-80 սմ բնի տրամագծով): Բուսականության այլ տիպերը զբաղեցնում են շատ փոքր տարածքներ՝ դեգրադացված հողերի վրա կամ էլ անտառի վերին սահմանից բարձր գտնվող տարածքներում: Ազգային պարկի ցածրադիր վայրերում (մինչև 1100 մ) բավական փոքր տարածքների վրա հանդիպում են շիբլյակի համակեցություններ: Բուսականության այս տիպում գերակշռում են ցաքի փշոտը (*Paliurus spina-christi*) և մի շարք այլ թփային տեսակներ՝ ծորենի սովորականը (*Berberis vulgaris*), չմենի ամբողջաեզրը (*Cotoneaster integerrimus*), մասրենի շան (*Rosa canina*), փոշնի կովկասյանը (*Celtis caucasica*), դժնիկ քաղցրը (*Rhamnus pallasii*), հասմիկ թփուտայինը (*Jasminum fruticans*) և այլն: Խոտածածկը այստեղ շատ փոփոխական է և հանդիպում են բազմաթիվ չորասեր բույսեր: Նույն տարածքում կան տափաստանային բուսականության փոքր հատվածներ՝ բոտրիոխլոա սովորական (*Bothriochloa ischaemum*) տեսակի գերակշռությամբ: Անտառազուրկ փոքր հատվածներում ներկայացված են տափաստանային համակեցություններ՝ շյուղախոտ վալեսյան (*Festuca valesiaca*) և փետրախոտ գեղեցիկ (*Stipa pulcherrima*) տեսակների առկայությամբ, որոնք բնորոշ չեն տարածքին: Ենթալայան մարգագետինները տարածված են 1800-1900 մ-ից բարձր: Հիմնական համակեցությունները տարախոտահացազգիներից կազմված խառը համակեցություններն են: Գերակշռում են բարակոտնուկ սանրանման (*Koeleria cristata*), դաշտավլուկ մարգագետային (*Poa pratensis*), դաշտավլուկ անտառային (*P. nemoralis*), ոգնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), խմրախոտ բուրավետ (*Anthoxanthum odoratum*), ոսկեվարսակ սիբիրյան (*Trisetum sibiricum*) տեսակները, հանդիպում են նաև գնարբուկ խոշորաբաժակ (*Primula macrocalyx*), տերեփուկ դեղնամանուշակագույն (*Centaurea cheiranthifolia*) տեսակները, երբեմն նաև՝ կակաչ խոշորակնգուղ (*Papaver macrostomum*), քոսքոսուկ կովկասյան (*Scabiosa caucasica*) և այլ տեսակներ: Նույն բարձրությունների վրա լայնորեն տարածված են հողմածաղիկ գծավոր (*Anemone fasciculata*), ձղկի գորտնուկային (*Trollius ranunculinus*), կեղծ դանձլամեր սպիտակ (*Veratrum album*) տեսակների գերակշռությամբ համակեցություններ: Այս տեսակների առատությունը կարող է գերաբաժեցման հետևանք լինել: Ենթալայան գոտու փոքր հատվածներում հանդիպում են շուշան հայկական (*Lilium armenum*), ընձախոտ արևելյան

(*Aconitum orientale*), գիվան հսկայական (*Cephalaria gigantea*), քոսքսուկ կովկասյան (*Scabiosa caucasica*), ոգնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), զանգակ խմբված (*Campanula glomerata*), թթվիճ խոշորածաղիկ (*Betonica macrantha*), դորոնիկում երկարատերև (*Doronicum oblongifolium*) տեսակները: Քարափներին և լեռնային ձորակների քարքարոտ լանջերին հանդիպում է ինտրազոնալ քարասեր բուսականությունը: Բուսաբանական տեսանկյունից հետաքրքիր են պտերի տարբեր տեսակներ ընդգրկող համակեցությունները՝ բանպոտ Բրաունի (*Polystichum braunii*), բասբայջ սովորական (*Polypodium vulgare*), չորապտեր մարանտաձև (*Cheilanthes maranthae*) և ասպլեն (*Asplenium*) ցեղի մի շարք տեսակներ: Անտառային գոտու քարափներին յուրահատուկ համակեցություններ են կազմում քարասեր մեզոֆիլ տեսակները՝ անիսոն եռաբաժանը (*Pimpinella tripartita*), ձագախոտ գեղեցիկը (*Erysimum pulchellum*), ցետերախ դեղատուն (*Ceterach officinarum*), ասպլեն մազանմանը (*Asplenium trichomanes*), ասպլեն հյուսիսայինը (*A. septentrionale*), փամփշտապտեր կոտրվողը (*Cystopteris fragilis*) և այլն: Արեղասարի ժայռոտ և քարքարոտ արևմտյան լանջերն ապրելավայր են բազմաթիվ քարասեր տեսակների համար, որոնցից են սրոհունդ հայկական (*Hypericum armenum*), քարբեկ եռմատնանի (*Saxifraga tridactylites*) (երկուսն էլ ընդգրկված են Հայաստանի կարմիր գրքում), քարբեկ գիհատերև (*Saxifraga juniperifolia*), խինձ կոշտ (*Scorzonera rigida*), գիվան միջին (*Cephalaria media*), քոսքսուկ աղավնու (*Scabiosa columbaria*) տեսակները: Գետերի և լճերի ափերին գերակշռում է ջրաճահճային բուսականությունը, որոնցում հանդիպում են ուռենի (*Salix*), բարդի (*Populus*), բոշխ (*Carex*), գորտնուկ (*Ranunculus*), կնյուն (*Juncus*) և այլ ցեղերի տարբեր տեսակներ: Գոշի լճի ափային տարածքում գրանցվել է այս տարածքի համար ոչ բնորոշ ձիածեփ (*Equisetum telmateia*) միատարր համակեցություն: Անոթավոր բույսերից «Դիլիջան» ազգային պարկի տարածքում աճում են 97 ընտանիքի 441 ցեղի շուրջ 1150 տեսակի, որոնցից 17-ը ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (9-ը՝ վտանգված (EN), 5-ը՝ խոցելի (VU), իսկ 3-ը՝ անհետացման եզրին գտնվող (NT) կարգավիճակով): Դրանք են՝ Պսեֆելուս դեբեդի (*Psephellus debedicus*) (EN), Պոպուլիկ Մարշալի (*Corydalis marschalliana*) (EN), Պապլոր դժգույն (*Muscari pallens*) (EN), Արքայածաղիկ բլրակային (*Fritillaria collina*) (EN), Էպիպոգիում անտերև (*Epipogium aphyllum*) (EN), Բանպոտ Բրաունի (*Polystichum braunii*) (EN), Հողմածաղիկ գորտնուկային (*Anemone ranunculoides*) (EN), Թեզիում փոված (*Thesium procumbens*) (EN), Օրտիլիա փոքր (*Orthilia secunda*) (EN), Եզնակող Կոզո-Պոլյանսկու (*Bupleurum koso-poljanskyi*) (VU), Գնարբուկ սքանչելի (*Primula amoena*) (VU), Շիկատակ (*Atropa bella-donna*) (VU), Կենի հատապտղային (*Taxus baccata*) (VU), Շյուղախոտ անտառային (*Festuca drymeja*) (VU), Ձնծաղիկ Միրզոևայի (*Merendera mirzoevae*) (NT), Շուշան հայկական (*Lilium armenum*) (NT), Սպնդուկ միջին (*Pyrola media*) (NT): 14 տեսակ էնդեմներ են, որոնցից 7-ը՝ Հայաստանի, 3-ը՝ Կովկասի, 4-ը՝ Անդրկովկասի: 14 տեսակ էնդեմներ են, որոնցից 7-ը՝ Հայաստանի, 3-ը՝ Կովկասի, 4-ը՝ Անդրկովկասի: Հայաստանի էնդեմիկներն են՝ Եզնակող Կոզո-Պոլյանսկու (*Bupleurum koso-poljanskyi*), Պսեֆելուս դեբեդի (*Psephellus debedicus*), Պսեֆելուս փամբակի (*Psephellus pambakensis*), Ձնծաղիկ Միրզոևայի (*Merendera mirzoevae*), Խլածաղիկ Օլգայի (*Scrophularia olgae*), Կտավախոտ զանգեզուրի (*Linaria zangezura*), Մասրենի Սոսնովսկու (*Rosa sosnovskyana*): Կովկասի էնդեմիկներն են՝ Ճոճուկ կովկասյան (*Cerastium holosteam*), Պապլոր դժգույն (*Muscari pallens*), Արքայածաղիկ բլրակային (*Fritillaria collina*): Անդրկովկասի էնդեմիկներն են՝ Կտավախոտ Շելկոնիկովի (*Linaria schelkownikowii*), Արոսենի հայաստանյան (*Sorbus hajastana*), Բարակոտնուկ Ալբովի-լոռիի (*Koeleria albovii subsp. loriensis*), Բարակոտնուկ Ալբովի-Ֆոմինի (*Koeleria albovii subsp. fominii*): «Դիլիջան» ազգային պարկի տարածքը հարուստ է ոչ միայն կարմիրգրքային և էնդեմիկ տեսակներով, այլ նաև մեծ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ այլ տեսակներով, որոնք ունեն գիտակրթական, գեղագիտական, տնտեսական նշանակություն և վաղուց կիրառվում են մարդու կողմից: Հայաստանի Հանրապետությունը համարվում է աշխարհում ագրոկենսաբազմազանության կարևոր կենտրոններից մեկը, որտեղ

ընդարձակ տարածությունների վրա աճում են գյուղատնտեսական մշակաբույսերի վայրի ցեղակիցները: Դրանցից կարելի է նշել սոխերի, շուշանբանջարի, առվույտի, խորդենու, հաղարջենու, վարսակի տեսակները, ոլոռը, ծնեբեկը, տխլենին, տանձենին, պատրինջը, կեռասենին, խնձորենին, ելակը և այլն: Բույսերի ուտելի և համեմունքային տեսակներին են պատկանում տխ հաղթության կամ դանձիլ, աստղագազար արևելյան, շուշանբանջար ոսկեգոծ, ծնեփակ, կաթնուկ կողմնացույց, կոտեմ, թելուկ, փոշնի կովկասյան, չիչխան դժնիկանման, փիփերթ արհամարիված, ավելուկ գանգուր, դանդուռ բանջարանոցային, կեռասենի անտառային, կեռասենի ալեհեր, նշենի Ֆենցլի, սզնի արևելյան, սզնի հինգսոնականի, մոշենի սովորական, մասրենի վահանակիր, եղինջ երկտուն, ուրց և այլ տեսակները: Տարածքում հանդիպող մեղրատու տեսակներից կարելի է նշել թխկիների բոլոր 5 տեսակները, լորենու 2 տեսակները, կռատուկ թաղիքավորը, տատրակ սովորականը, ցախակեռաս վրացականը, եղջերառվույտ կովկասյանը, երեքնուկի տեսակները, սրոհունդ գեղեցիկը, կատվադաղձ Մուսինին, հասմիկ թփուտայինը, բալենու տեսակները, արոսի հունականը, տանձենի կովկասյանը, թեղի փոքրը, ուռենու տեսակները և այլն: Տարածքում օգտակար բույսերից ամենամեծ թիվը կազմում են արժեքավոր դեղատու բույսերը՝ սարի չամիչ բարձր, գազար վայրի, հազարատերևուկ սովորական, օշինդր սովորական, խատուտիկ դեղատու, խիժաճարճատուկ կնյունանման, իշառվույտ դեղատու, ճարճատուկ սովորական, մատիտեղճն ճղուկի, խինձ կոշտ, վլաճաղիկ հազարատերև, ջրկոտեմ դեղատու, լոշտակ սպիտակ, սրոհունդ խոցված, դաղձ երկարատերև, խնկաճաղիկ սովորական, եղեսպակի տեսակները, ուրց Կոչիի, ուրցադաղձ գլխիկավոր, քնձմնձուկ փոքր, հափուկ դեղին, դժնիկ քաղցր, մասրենի շան, բանգի սև և շատ այլ բուսատեսակներ: Բավական հարուստ են գեղազարդային՝ տխ հաղթության, կուսաճաղիկ խոտային, նվիկ արևելյան, բաղեղ կովկասյան, ոզնագլխիկի տեսակները, գրոսհեյմիա խոշորաճաղիկ, կղմուխ ակնավոր, զանգակի տեսակները, մեխակի տեսակները, թանթոնիկ կովկասյան, հիրիկ եղանի, ճանկխոտ ժնկյան, շուշան հայկական և այլ տեսակները: Կերային բույսերից տարածված են հացազգիների և լոբազգիների տեսակները, տեխնիկական տեսակներից՝ կահույքագործության մեջ օգտագործվող ծառաթփային տեսակները, իսկ ներկատու բույսերից՝ դրախտաճառ սովորականը, դժնիկ լուծողականը, անթեմ ներկատուն և այլն: Նշված տեսակներից շատերը համարվում են և դեղաբույսային, և կերային և սննդային բույսեր: Ըստ ուսումնասիրությունների ազգային պարկի տարածքում և շրջակայքում հայտնաբերվել են 480 մակրոսկոպիկ սնկերի տեսակներ և ենթատեսակներ, որոնցից 320-ը ազարիկալ տեսակներ են, 124-ը՝ աֆիլոֆորայիններ (*aphyllophorales*) և 36-ը՝ գաստերոմիցենտներ (*gasteromycetes*) (Նանագյուլյան, Թասլաջյան, 1991. Նանագյուլյան, 1997, 2008, Կարմիր գիրք 2010, և այլն): Անտառային գոտու պայմանները նպաստավոր են միկրոսկոպիկ սնկերի համար: Ամենատարածվածներն են դառնամատիտեղը (*Russula*), *կաթնասունկը* (*Lactarius*), *սարդոստրայնասունկը* (*Cortinarius*), թելիկասունկը (*Inocybe*), ճանճասպանը (*Amanita*), կոճղասունկ իսկականը (*Armillaria mellea*), ականջասունկը (*Pleurotus*) և աբեթասնկերի (*Polyporaceae*) ընտանիքի ներկայացուցիչները, որոնք այս կամ այն կերպ կապված են անտառային ծառատեսակների հետ: Լեռներում խիստ եղանակային պայմանները բարենպաստ են գլխասունկ պարկանման (*Calvatia utriformis*) և հսկա անձրևասունկ (*Langermannia gigantea*) տեսակների համար, որոնք հազվադեպ են հանդիպում անտառի վերին գոտիներում՝ ծովի մակարդակից 2000-2500մ բարձրության վրա: Մարգագետիններում կարելի է հանդիպել նաև *Vascellum pretense*, շամպինիոն սովորական (*Agaricus campestris*), մարգագետնային կոճղասունկ (*Marasmius oreades*), *Agrocybe dura* տեսակների, որոնք զբաղեցնում են պարկի ավելի ցածր հատվածները: Ընդհանուր առմամբ, մարգագետինները բարենպաստ պայմաններ չեն ապահովում մակրոմիցետների աճի համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ի տարբերություն ավելի ցածր գոտիների, բարձրադիր հատվածներում ազարիկալ և

աֆիլոֆորային սնկերն ավելի քիչ են, մինչդեռ գաստերոմիցենտների քանակը գրեթե նույնն է: ԴԱՊ-ի տարածքում և բուֆերային գոտում 176 տեսակի ուտելի սնկատեսակ է հայտնաբերվել, որոնցից ամենատարածվածը ականջասունկ սովորական կամ կախասունկն է (*Pleurotus ostreatus*): Սննդային արժեք ունեն նաև հետևյալ տեսակները՝ յուղասունկ հատիկավոր (*Suillus granulatus*), շեկիկ (*Lactarius deliciosus*), աղվեսասունկ (*Cantharellus cibarius*), մարգագետնային կոճղասունկ (*Marasmius oreades*), շամպինիոն սովորական (*Agaricus campestris*), շամպինիոն դաշտային (*Agaricus arvensis*), կոճղասունկ աշնանային կամ մեղրասունկ (*Armillaria mellea*), լեպիստա մանուշակագույն ոտիկով (*Lepista personata*), շարքասունկ հողամոխրագույն (*Tricholoma terreum*): Թեև ԴԱՊ-ի տարածքում կարելի է հանդիպել նաև շուրջ 50 մակրոսկոպիկ սնկերի տեսակների, որոնք ունեն բուժիչ հատկություններ, այնուամենայնիվ, բնակչությունը տեղյակ չէ դրանցից, չի օգտագործում բուժիչ նպատակներով: Նշված սնկատեսակների հավաքման և վերամշակման արդյունաբերական կենտրոն հիմնելու, ինչպես նաև շամպինիոնի և կախասնկի արհեստական աճեցումը կազմակերպելու նպատակահարմարությունը պարզելու ուղղությամբ անհրաժեշտ կլինի առաջիկայում իրականացնել շուկայի ուսումնասիրություն: Պարկի տարածքում հայտնաբերվել են թունավոր սնկերի 38 տեսակ: Դրանց շարքում են խոզուկասունկը (*Paxillus involutus*), կեղծ կոճղասունկը (*Hypholoma fasciculare*), ճանճասպան կարմիրը (*Amanita muscaria*), ճանճասպան հովազայինը (*Amanita pantherina*), ճանճասպան կանաչը (*Amanita phalloides*), սատանայի սունկը (*Boletus satanas*), գոմաղբասունկ թեփուկավորը (*Coprinus picaceus*), սարդոստայնասնկերի (*Cortinarius*), թեփկասնկերի (*Inocybe*) և շարքասնկերի (*Tricholoma*) որոշ տեսակներ և այլն: Վերջին տարիներին ազգային պարկի տարածքում ձեռնարկվել են վտանգված սնկատեսակների հատուկ ուսումնասիրություններ և հայտնաբերված 15 մակրոմիցետները ներառվել են Հայաստանի բույսերի Կարմիր գրքում: Դրանք են՝ ճանճասպան կարմիրը (*Amanita muscaria*), ճանճասպան կանաչը (*Amanita phalloides*), աստերոֆորա անձրևայինը (*Asterophora lycoperdoides*), Բոլետոպսիս սևասպիտակը (*Boletopsis leucomelas*), սպիտակ սունկը (*Boletus edulis*), սատանայի սունկը (*Boletus satanas*), կլավարիադելֆուս վարսանդանմանը (*Clavariadelphus pistillaris*), Յիստոդերմա ամիանտայինը (*Cystoderma amianthina*), հապլոպորուս հոտավետը (*Haploporus odorus*), ոզնասունկ մարջանաձևը (*Hericium coralloides*), ոզնասունկ կաղնուն (*Hericium erinaceum*), հովանոցասունկ աղջկականը (*Macrolepiota puellaris*), Մուտինուս շնայինը (*Mutinus caninus*), Կոնասունկ փաթիլատոիկը (*Strobilomyces strobilaceus*), Գետնասունկ ամառայինը (*Tuber aestivum*): Այս սնկերից երկուսը՝ Հապլոպորուս հոտավետը և ոզնասունկ կաղնուն առկա են ԴԱՊ-ում և Բեռնի կոնվենցիայով ներառված են Մակրոմիցետների ցանկում: Եվրոպական որոշ երկրներում Մակրոմիցետները հայտնի են որպես սովորական տարածում ունեցող սնկատեսակներ, մինչդեռ Հայաստանում կան ընդամենը մի քանի հազվագյուտ տեսակ, որոնք հիմնականում հանդիպում են երկրի հյուսիսարևելյան հատվածներում: Ֆրանսիայում և Իտալիայում գետնասունկ ամառայինը (*Tuber aestivu*) խիստ տարածված է, մինչդեռ Հայաստանում այն հայտնաբերվել է ընդամենը մեկ անգամ՝ պարկի Դիլիջանի տեղամասում: Այս սնկատեսակի քանակը գնահատելու համար անհրաժեշտ է իրականացնել ուսումնասիրություններ և մոնիթորինգ: Հապլոպորուս հոտավետ (*Haploporus odorus*) և Յիստոդերմա ամիանտային (*Cystoderma amianthina*) տեսակները հայտնաբերվել են 20 տարի առաջ, համարվում են հազվագյուտ տեսակ և հատուկ ուշադրության կարիք ունեն: ԴԱՊ-ի տարածքում հայտնաբերվել են նաև այս տարածաշրջանի համար նոր համարվող սնկերի մի քանի տեսակ (օրինակ՝ աստերոֆորա անձրևայինը (*Asterophora lycoperdoides*)), որը ներառված է Հայաստանի բույսերի Կարմիր գրքում: Սնկատեսակների հետագա ուսումնասիրությունների արդյունքում կհայտնաբերվեն նոր տեսակներ, ինչը կնպաստի անտառային էկոհամակարգի ֆունկցիոնալ բնութագրերի վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելուն՝ նկատի ունենալով դրանց պահպանման և ոռոգիոնալ օգտագործման խնդիրը: Էպիֆիտային քարաքոսերը (*Epiphytic lichens*) կարևոր դեր

են խաղում անտառային էկոհամակարգերում՝ մասնակցելով ջրի և նյութերի շրջապտույտում: Վերջին տարիներին իրականացվել են քարաքոսերի կենսաբազմազանության մի շարք հետազոտություններ, որոնց արդյունքում հայտնաբերվել է Հայաստանում տարածված քարաքոսերի 600 տեսակ: 2013-2015թթ., «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից Դիլիջան ազգային պարկի տարածքում իրականացվել են էպիֆիտային քարաքոսերի բազմազանության ուսումնասիրություններ, որոնց արդյունքում գրանցվել է էպիֆիտային քարաքոսերի 88 տեսակ:

3) Կենդանական աշխարհ - Ընդհանուր առմամբ, ազգային պարկի կենդանական աշխարհը կարելի է բնութագրել որպես լեռնանտառային, թեև այն ներառում է բազմաթիվ տարրեր, որոնք բնորոշ են այնպիսի լանդշաֆտներին, ինչպիսիք են տափաստանները, մարգագետինները, ժայռերը, խոնավ տարածքները և այլն: Այս փաստը բացատրվում է ԴԱՊ-ի տարբեր հատվածներում բազմազան էկոհամակարգերի առկայությամբ: Անողնաշարավորներից Ազգային պարկի տարածքում հանդիպում են բզեզների (Coleoptera) 512 տեսակ, որոնք պատկանում են 44 ընտանիքների 296 ցեղերին: Այստեղ հայտնաբերվել է Հայաստանի բզեզների ողջ ֆաունայի 12%-ը, թիթեռների՝ շուրջ 50%-ը և մրջյունների՝ 25%-ը: Պարկի բնապահպանական դերը կարևորվում է նաև այստեղ ներկայացված բազմաթիվ հազավագյուտ տեսակներով: Տարածքում հանդիպում են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված 15 տեսակ (որոնցից 6-ը գրանցված են նաև Բեռնի կոնվենցիայի Հավելված 2-ում և 5-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում): Կարևոր բնապահպանական նշանակություն ունեն նաև նեղ տարածված տեսակները և ենթատեսակները Հայաստանի, Անդրկովկասի և Կովկասի էկոտարածաշրջանի էնդեմիկները: Նման միջատներից պարկի տարածքում հանդիպում են Հայաստանի՝ 7, Անդրկովկասի՝ 18 և Կովկասի էկոտարածաշրջանի՝ 30 էնդեմիկներ: Բզեզները ըստ ընտանիքների անվանման, ցեղերի և տեսակների քանակի հետևյալն են՝ Գնայուկներ – Carabidae – 28/81, Հիստերիդներ – Histeridae – 6/12, Լեոդիդներ – Leodidae – 3/5, Լեշակերներ – Silphidae – 6/8, Սրամարմիններ – Staphylinidae – 32/60, Սանրբեղիկներ կամ եղջրավոր բզեզներ – Lucanidae – 5/5, Հողափորներ – Geotrupidae – 1/3, Գլաֆիրիդներ – Glaphyridae – 1/2, Թերթիկաբեղավորներ – Scarabaeidae – 18/48, Դասցիլիդներ – Dascillidae – 1/1, Չրխկաններ – Elateridae – 13/17, Էուկնեմիդներ – Eucnemidae – 1/1, Ոսկեբզեզներ – Buprestidae – 8/17, Հելոդիդներ – Helodidae – 1/1, Լուսատիտիկներ – Lampyridae – 1-1, Փափկամարմիններ – Cantharidae – 3/6, Սևամարմիններ – Tenebrionidae – 16/22, Կրակագույն բզեզներ – Pyrochroidae – 1/1, Պիրիդներ – Pythidae – 1/1, Նեղաթև բզեզներ – Oedemeridae – 3/5, Թարախահաններ – Meloidae – 3/7, Մելանդրիդներ – Melandryidae – 2/2, Սնկակերներ – Mycetophagidae – 3/3, Նեղամարմիններ – Colydidae – 4/4, Լաթրիդիդներ – Lathridiidae – 1/1, Ռիզոֆագիդներ – Rhisophagidae – 1/2, Փայլաբզեզներ – Nitidulidae – 4/4, Բիտուրիդներ – Byturidae – 1/1, Տափակամարմիններ – Cucujidae – 2/2, Սնկաբզեզներ – Erotylidae – 2/2, Զատիկներ – Coccinellidae – 10/12, Կաշվեկերներ – Dermestidae – 2/4, Մանրաբզեզներ – Melyridae – 2/4, Դասիտիդներ – Dasytidae – 2/2, Խայտաբղետ բզեզներ – Cleridae – 3/4, Ցիդներ – Ciidae – 1/1, Կնգուղաբզեզներ – Bostrichidae – 1/1, Պտինիդներ – Ptinidae – 4/4, Տերևակերներ – Chrysomelidae – 31/43, Երկարաբեղիկներ – Cerambycidae – 32/52, Ատտելաբիդներ – Attelebidae – 3/3, Ապիոնիդներ – Apionidae – 2/9, Երկարակնճիթներ կամ փղիկներ – Curculionidae – 26/44, Կեղևակերներ – Scolytidae – 4/4: Ցերեկային թիթեռները ներկայացված են 7 ընտանիքների 68 ցեղերին պատկանող 122 տեսակներով: Ազգային պարկում հանդիպում են թիթեռների հետևյալ ընտանիքները՝ Հաստագլուխ թիթեռներ – Hesperidae – 5/10, Առագաստաթիթեռներ – Papilionidae – 3/4, Ճերմակաթիթեռներ – Pieridae – 8/12, Սատիրներ Satyridae – 11/16, Լիբեթիդներ – Libytheidae – 1/1, Նիմֆալիդներ Nymphalidae – 14/23, Կապտաթիթեռներ – Lycaenidae – 26/46, Մրջյուններից (Formicidae) հայտնաբերվել է 10 ցեղերին պատկանող 29 տեսակ: Ողնաշարավորներից Ազգային պարկի տարածքում հանդիպում են 286 տեսակի

կենդանատեսակներ, որոնցից 53-ը ընդգրկված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում և 17-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում: Ձկներից «Դիլիջան» ազգային պարկի գետերում և լճերում բնակվում է 15 ձկնատեսակ, որոնցից մեկը՝ Սևանի կողակը (*Capoeta sevangi*) (VU), էնդեմիկ է և գրանցված է Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում: Հանդիպում է նաև կարմրախայտը (*Salmo trutta fario*), արևելյան տառեխիկը (*Alburnoides eichwaldii*), Քուռի բեղուն (*Barbus lacerta cyri*): Աղստևում տարածված են կովկասյան թեփուղը (*Squalius cephalus orientalis*), Քուռի լերկաձուկը (*Oxynemacheilus (Barbatulla) brandti*), կլիմայավարժեցված տեսակներից՝ արծաթափայլ կարասը (*Carassius auratus gibelio*), ամուրյան նրբաձկնիկը (*Pseudorasbora parva*): Աղստևում հազվադեպ հանդիպում են մուրծին (*Luciobarbus (Barbus) mursa*), անդրկովկասյան սպիտակաձուկը (*Alburnus filippii*), Քուռի կողակը (*Capoeta capoeta capoeta*), շատ հազվադեպ հանդիպում են նաև Քուռի սպիտակաձուկը (*Alburnus filippii*) և ենթաբերանը (*Chondrostoma oxyrhynchum*): Վերջին շրջանում Աղստև գետի ավազանում տեղակայված ձկնաբուծարաններից Աղստև և նրա վտակներ են թափանցել ծիածանախայտը (*Parasalmo mykiss*) (հատկապես Հաղարծին գետում), ինչպես նաև կարպը (*Cyprinus carpio*) (բազմաքանակ է Պարզ լճում): Աղստև գետի ձկնաշխարհը. «Դիլիջան» ազգային պարկով հոսող Աղստև գետում ներկայումս հանդիպում են կարմրախայտը (*Salmo trutta fario*) (հանդիպում է պատահականորեն), արևելյան տառեխիկը (*Alburnoides eichwaldii*) (բազմաքանակ է), սևանի կողակը (*Capoeta sevangi*)(VU) (սովորական է), Քուռի կողակը (*Capoeta capoeta capoeta*) (հազվադեպ), Քուռի բեղուն (*Barbus lacerta cyri*) (սովորական է), կովկասյան թեփուղը (*Squalius cephalus orientalis*) (սովորական է), Քուռի լերկաձուկը (*Oxynemacheilus brandti*) (սովորական է), արծաթափայլ կարասը (*Carassius auratus gibelio*) (սովորական է), ամուրյան նրբաձկնիկը (*Pseudorasbora parva*) (սովորական է), մուրծին (*Luciobarbus mursa*) (հազվադեպ), անդրկովկասյան սպիտակաձուկը (*Alburnus hohenackeri*) (հազվադեպ), ծիածանախայտը (*Parasalmo mykiss*) (պարբերաբար), կարպը (*Cyprinus carpio*) (պատահականորեն կարող է հայտնվել լճակային տնտեսություններից կամ էլ Պարզ լճից): Հնարավոր են հանդիպումներ նաև քուռի սպիտակաձկան (*Alburnus filippii*) և ենթաբերանի (*Chondrostoma oxyrhynchum*) հետ: Հաղարծին, Բլղան և Գետիկ գետերի ձկնաշխարհը Հաղարծին գետում հանդիպող հիմնական ձկնատեսակն է կարմրախայտը (*Salmo trutta fario*), ինչպես նաև ձկնաբուծարաններից ներթափանցած ծիածանախայտը (*Parasalmo mykiss*): Բլղան գետում հանդիպում են կարմրախայտը (*Salmo trutta fario*), Քուռի բեղուն (*Barbus lacerta cyri*), արևելյան տառեխիկը (*Alburnoides eichwaldii*), կողակը (*Capoeta* sp.): Կարմրախայտը հանդիպում է գետի վերին ու միջին հոսանքներում, քուռի բեղուն՝ հիմնականում միջին և ստորին հոսանքներում, երբեմն վերին ու ստորին հոսանքների սահմանագծում: Քուռի բեղլուի տարածման շրջանում հանդիպում է նաև արևելյան տառեխիկը: Բլղանի ստորին հոսանքում հազվադեպ հանդիպում է կողակը: Գետիկ գետում ևս հանդիպում են կարմրախայտը (*Salmo trutta fario*), Քուռի բեղուն (*Barbus lacerta cyri*), արևելյան տառեխիկը (*Alburnoides eichwaldii*) և կողակը (*Capoeta* sp.): Ընդ որում, կարմրախայտը հանդիպում է գետի վերին ու միջին հոսանքներում, քուռի բեղուն և արևելյան տառեխիկը՝ հիմնականում միջին և ստորին հոսանքում, կողակը՝ ստորին և, երբեմն, միջին հոսանքում: Գետիկի ստորին հոսանքում հայտնաբերվել է նաև քուռի լերկաձուկը (*Oxynemacheilus brandti*): Պարզ լճի ձկնաշխարհը՝ Ներկայումս Պարզ լիճը արհեստականորեն բնակեցված է արծաթափայլ կարասով (*Carassius auratus gibelio*) և կարպով (*Cyprinus carpio*), որոնցով գերբնակեցված է լիճը: Այլ տեսակների առկայության մասին հավաստի տվյալներ չկան: Երկկենցաղներ և սողուններից Ազգային պարկի տարածքում հանդիպում են 4 տեսակի երկկենցաղներ՝ լճագորտը (*Pelophilax ridibundus*), փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*), կանաչ դոդոշը (*Bufo viridis*), Շելկովնիկովի սովորական ծառագորտը (*Hyla arborea schelkownikowi*): Լճագորտը մեծ քանակությամբ հանդիպում է լճակներում և ջրային այլ էկոհամակարգերում, փոքրասիական գորտը տարածված է միջին և բարձր լեռնային գոտում ծ.մ. 1600 մ բարձրություններից սկսած, անտառային խոնավ

բացատրելու և լեռնային գետակների ափամերձ տարածքներում: Կանաչ դողդըլ հանդիպում է ազգային պարկի գրեթե բոլոր էկոհամակարգերում, որտեղ քիչ թե շատ խոնավ պայմաններ կան: Շելկովնիկովի սովորական ծառագորտը սովորաբար հանդիպում է անտառային էկոհամակարգերի խոնավ և ջրաճահճային հատվածներում: Պետք է նշել, որ 2000 թվականին Պարզ լիճ է բաց թողվել փոքրասիական տրիտոնի (*Ommatotriton ophryticus*) 30 առանձնյակ, որոնց ներկայիս առկայությունը լճում պարզելու համար անհրաժեշտ է լրացուցիչ ուսումնասիրություն: Սողուններից հանդիպում են 1 տեսակի կրիա, 12 տեսակի մողեսներ և 9 տեսակի օձեր, որոնք կենսակերպով կապված են անտառային բիոտոպների հետ: 7 տեսակներ ընդգրկված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում, 6-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում, 3 տեսակ էնդեմիկ են Անդրկովկասի, իսկ 2-ը՝ Կովկասի համար: Դիլիջան-Իջևան քաղաքների միջև ընկած հատվածում՝ ավտոմայրուղու եզրերին, ճանապարհամերձ ժայռերի վրա հանդիպում են *Darevskia* ցեղի ժայռային մողեսներից հայկական մողեսը, Դալլի մողեսը և ռոստոմբեկովի մողեսը (*Darevskia armeniaca*, *D. dahl*(EN): *i*, *D. rostombekovi*(EN)), որոնք Անդրկովկասի էնդեմիկ տեսակներ են: Այս կուսածին տեսակներից առավել խոցելի հանդիսանում է Ռոստոմբեկովի ժայռային մողեսը, որը գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում: Դալլի ժայռային մողեսը նույնպես գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում, սակայն դրանց թվաքանակն ավելի մեծ է: Աղստև գետի առափնյա ժայռերի վրա տարածված են ժայռային մողեսների երկու երկսեռ տեսակներ՝ Ռադդեի (*D. raddei*) և քուռի (*D. portschinskii*) մողեսները: Անտառի եզրերին, բաց տարածություններում հազվադեպ հանդիպում է մարգագետնային մողեսը (*D. praticola*) (VU), որը գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում: Լեռնատափաստանային և անտառային գոտու բացատներում ոչ մեծ քանակությամբ հանդիպում են ճարպիկ մողեսը (*Lacerta agilis*), և շերտավոր մողեսը (*L. strigata*): Անտառի եզրին և բացատներում հանդիպում է ջարդվող իլիկամողեսը (*Anguis fragilis*), գետերի առափնյա քարքարոտ տեղամասերում՝ ձիթապողապույն սահնօձը (*Platyceps najadum*): Տարբեր ջրաճահճային էկոհամակարգերում գրանցվել է նաև ջրային լորտուն (*Natrix tessellata*): Ազգային պարկի տարածքում հազվադեպ կարող են հանդիպել սողունների ևս 6 տեսակներ (ճահճային կրիա – *Emys orbicularis*, Վալենտինի ժայռային մողես- *Darevskia valentine*, դեղնափորիկ-*Pseudopus apodus*, որդանման կույրօձ- *Typhlops vermicularis*, սովորական լորտու -*Natrix natrix*, լեռնասափաստանային իծ-*Vipera (Pelias) eriwanensis*): Թռչուններից «Դիլիջան» ազգային պարկում հանդիպում է շուրջ 190 տեսակ, որոնցից 130-ը այստեղ բնադրում են: Թռչունների 36 տեսակը գրանցված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում, որոնցից 11-ը ընդգրկված են նաև Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում: Գրանցված է Կովկասյան մեկ էնդեմիկ տեսակ՝ կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewiczzi*) և Հայկական բարձրավանդակի էնդեմիկ մեկ տեսակ՝ հայկական որորը (*Larus armenicus*): Ազգային պարկում բնադրող թռչունների մեծամասնությունը ներկայացված է անտառային տեսակներով: Այստեղ լայն տարածված են հոբալը (*Columba oenas*), անտառային աղավնին (*Columba palumbus*), փայտփորների վեց տեսակ՝ վիզգուկը (*Jynx torquilla*), կանաչ (*Picus viridis*), սև (*Dryocopus martius*), խայտաբղետ (*Dendrocopos major*), միջին (*D. medius*) և փոքր (*D. minor*) փայտփորները, եղնջաթռչնակը (*Troglodytes troglodytes*), անտառային նրբագեղիկը (*Prunella modularis*), արշալուսիկը (*Erithacus rubecula*), սովորական կարմրատուտը (*Phoenicurus phoenicurus*), սոսնձակեռնեխը (*Turdus viscivorus*), սև (*T. merula*) և երգող (*T. philomelos*) կեռնեխները, սևագլուխ (*Sylvia atricapilla*) և այգու (*S. borin*) շահրիկները, դեղնափոր (*Phylloscopus trochiloides*) և ծնկլտան (*Ph. collybita*) գեղգեղիկները, փոքր (*Ficedula parva*) և կիսասափիտակավիզ (*F. semitorquata*) ճանճորսները, երկարագի (*Aegithalos caudatus*), սև (*Parus ater*), երկնագույն (*P. caeruleus*) և մեծ (*P. major*) երաշտահավերը, սովորական սիտեղը (*Sitta europaea*), ծվծվիկը (*Certhia familiaris*) և անտառային կաշաղակը (*Garrulus glandarius*): Սերինոսներից լայն տարածված են ամուրիկը (*Fringilla coelebs*), կանաչ սերինոսը (*Carduelis*

chloris), սովորական խածկտիկը (*Pyrrhula pyrrhula*) և հատրեկիչը (*Coccothraustes coccothraustes*): Երեկոյան և գիշերային ժամերին անտառներում կարելի է հանդիպել անտառաբվին (*Strix aluco*) և ականջավոր բվին (*Asio otus*): Ցերեկային գիշատիչ թռչուններից այստեղ բնադրում են օճակեր արծիվը (*Circaetus gallicus*), կրետակերը (*Pernis apivorus*), ցախաքլորարորը (*Accipiter gentilis*), լորաճուռակը (*A. nisus*), մեծ ճուռակը (*Buteo buteo*), փոքր ենթաարծիվը (*Aquila pomarina*) և գաճաճ արծիվը (*Hieraetus pennatus*): Անտառամերձ բացատներում և մացառուտներում հանդիպում են այծկիթը (*Caprimulgus europaeus*), անտառակոցարը (*Scolopax rusticola*), սովորական տատրակը (*Streptopelia turtur*), անտառային արտույտը (*Lullula arborea*), անտառային ծիաթոնակը (*Anthus trivialis*), սևագլուխ չքչքանը (*Saxicola torquatus*), ճուռականման (*Sylvia nisoria*), մորու (*S. curruca*) և մոխրագույն (*S. communis*) շահրիկները, կովկասյան գեղգեղիկը (*Phylloscopus sindianus*), ժուլանը (*Lanius collurio*), ոսպնուկը (*Carpodacus erythrinus*), կանեփնուկը (*Carduelis cannabina*) և սևագլուխ դրախտապանը (*Emberiza melanocephala*): Աղստև և Գետիկ գետերի հովիտների բաց ջրային տարածքներում և արհեստական լճակների ափերին հանդիպում են կարմրատու (*Tringa tetanus*), սևուկ (*T. ochropus*) և սպիտակավիզ (*Actitis hypoleucos*) կոցարները, երկնագույն ակկիոնը (*Alcedo atthis*), լեռնային խաղտոնիկը (*Motacilla cinerea*) և ջրաճնճուկը (*Cinclus cinclus*): Գետերի ափամերձ թփուտներում և ճահճուտներում բնադրում են հարավային տխակը (*Luscinia megarhynchos*), լայնապոչ եղեգնաթոնակը (*Cettia cetti*): Խոնավ մարգագետինները գրավում են դեղին խաղտոնիկին (*Motacilla flava*), շերտագլուխ (*Acrocephalus schoenobaenus*) և ճահճային (*A. palustris*) եղեգնաթոնակներին և սովորական ճոխկահավին (*Locustella naevia*), ինչպես նաև այստեղ կեր հայթայթող մեղվակերին (*Merops apiaster*) և առափնյա ծիծեռնակին (*Riparia riparia*): Առափնյա անտառին բնորոշ տեսակներից են արտույտաբազեն (*Falco subbuteo*), մոխրագույն ճանճորը (*Muscicapa striata*), ճոճահավը (*Remiz pendulinus*), պիրոլը (*Oriolus oriolus*) և սևաճակատ շամփրուկը (*Lanius minor*): Ազգային պարկի տարածքում գտնվող այգիները և մշակված հանդակները գրավում են հոպոպին (*Upupa epops*), սև մանգաղաթևին (*Apus apus*), գյուղական ծիծեռնակին (*Hirundo rustica*), սպիտակ խաղտոնիկին (*Motacilla alba*), սովորական սարյակին (*Sturnus vulgaris*), սովորական ճային (*Corvus monedula*), մոխրագույն ագռավին (*Corvus corone*), դաշտային (*Passer montanus*) և տնային (*P. domesticus*) ճնճուկներին, կարմրակատարին (*Carduelis carduelis*) և կորեկնուկին (*Emberiza calandra*): Պարկում ամենուրեք հանդիպում են քարքարոտ ելքեր, ժայռեր իսկ ջրբաժանների կատարների երկայնքով՝ նաև ժայռաբեկորների թափվածքների դաշտեր: Ցածրադիր գոտու ժայռերում հանդիպում են գիշանգը (*Neophron percnopterus*), բվեճը (*Bubo bubo*), ներկարարը (*Coracias garrulus*), թխակապույտ աղավնին (*Columba livia*), ժայռային (*Ptyonoprogne rupestris*) և քաղաքային (*Delichon urbicum*) ծիծեռնակները, սևախայտ քարաթոնակը (*Oenanthe hispanica*), կապույտ քարակեռնեխը (*Monticola solitarius*), ժայռային փոքր սիտեղը (*Sitta neumayer*), ժայռային ճնճուկը (*Petronia petronia*), այգու (*Emberiza hortulana*) և լեռնային (*E. cia*) դրախտապանները: Բարձր լեռնային գոտու ժայռերին և մերձակա լեռնային տափաստաններին և մարգագետիններին բնորոշ են կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewiczzi*), վայրի հնդկահավը կամ ուլարը (*Tetraogallus caspius*), սովորական կկուն (*Cuculus canorus*), սպիտակափոր մանգաղաթևը (*Apus melba*), եղջրավոր արտույտը (*Eremophila alpestris*), խայտաբղետ (*Prunella ocularis*) և ալպիական (*P. collaris*) նրբագեղիկները, կապտափող տխակը (*Luscinia svecica*), սևուկ կարմրատուտը (*Phoenicurus ochruros*), սովորական քարաթոնակը (*Oenanthe oenanthe*), խայտաբղետ քարակեռնեխը (*Monticola saxatilis*), սպիտակախաճի կեռնեխը (*Turdus torquatus*), կարմրաթև մագցողը (*Tichodroma muraria*), սև ագռավը (*Corvus corax*), կարմրակտուց ճայը (*Pyrrhocorax pyrrhocorax*), ձյան ճնճուկը (*Montifringilla nivalis*), կարմրաճակատ սերինոսը (*Serinus pusillus*) և լեռնային վշասարեկը (*Carduelis flavirostris*): Անմատչելի ժայռերը հատկապես գրավիչ են այստեղ բնադրող մի շարք ցերեկային գիշատիչ թռչունների՝ գառնանգղի (*Gypaetus*

barbatus), սպիտակագլուղ անգղի (*Gyps fulvus*), տափաստանային ճուռակի (*Buteo rufinus*), քարարծվի (*Aquila chrysaetos*), սովորական հողմավար բազեի (*Falco tinnunculus*) և սապսանի (*F. peregrinus*) համար: Լեռնային մարգագետինների այլ տարածված տեսակներից են մոխրագույն կաքավը (*Perdix perdix*), մարգահավը (*Crex crex*), դաշտային արտույտը (*Alauda arvensis*), լեռնային ծիաթոչնակը (*Anthus spinoletta*) և մարգագետնային չքչքանը: Գարնանային և աշնանային չուի ժամանակ ազգային պարկի տարածքում կարելի է հանդիպել բազմաթիվ այլ տեսակների: Չվող գիշատիչ թռչուններից են՝ սև ցինը (*Milvus migrans*), սև անգղը (*Aegypius monachus*), ճահճային (*Circus aeruginosus*), տափաստանային (*C. macrourus*) և մարգագետնային (*C. pygargus*) մկնաճուռակները, եվրոպական ճնճղաճուռակը (*Accipiter brevipes*), մեծ ենթաարծիվը (*Aquila clanga*), տափաստանային արծիվը (*A. nipalensis*), բլրային արծիվը (*A. heliaca*), ջրարծիվը (*Pandion haliaetus*), տափաստանային հողմավար (*Falco naumanni*) և կարմրատու (*F. vespertinus*) բազեները, բալրբանը (*F. cherrug*): Չվող ճնճղուկազգիներից են կարմրախածի ծիաթոչնակը (*Anthus cervinus*), կարմրակատար շամփրուկը (*Lanius senator*), վարդագույն սարյակը (*Sturnus roseus*), գարնանային գեղգեղիկը (*Phylloscopus trochilus*) և մի շարք այլ միջատակեր տեսակներ: Ջրային թռչուններից չուի ժամանակ այստեղ հանդիպում են փոքր ջրցուլը (*Ixobrychus minutus*), սպիտակ փոքր (*Egretta garzetta*), մոխրագույն (*Ardea cinerea*) և շիկակարմիր (*A. purpurea*) տառեղները, սև (*Ciconia nigra*) և սպիտակ (*C. ciconia*) արագիլները, փոքր քարադրը (*Charadrius dubius*), սովորական կիվիվը (*Vanellus vanellus*), մորակտցարը (*Gallinago gallinago*), ծխագույն կտցարը (*Tringa nebularia*), սովորական (*Larus ridibundus*) և հայկական (*L. armenicus*) որորները, սպիտակաայտ (*Chlidonias hybrida*) և սպիտակաթև (*Ch. leucopterus*) ջրածիծառները, դեղնագլուխ խաղտոնիկը (*Motacilla citreola*): Ձմռան ամիսներին ազգային պարկի ցածրադիր գոտում հանդիպում են հյուսիսից այցելող ձմեռող տեսակներ, ինչպիսիք են՝ փոքր սուզակը (*Tachybaptus ruficollis*), դաշտային մկնաճուռակը (*Circus cyaneus*), թավշատու ճուռակը (*Buteo lagopus*), աղավնաբազեն (*Falco columbarius*), սինակեռնեխը (*Turdus pilaris*), դեղնագլուխ արքայիկը (*Regulus regulus*), մոխրագույն շամփրուկը (*Lanius excubitor*), սովորական սերինսը (*Fringilla montifringilla*), ազնվասարեկը (*Carduelis spinus*), սովորական (*Emberiza citrinella*) և եղեգնուտի (*E. schoeniclus*) դրախտապանները: «Դիլիջան» ազգային պարկի կաթնասունների զգալի մասը բնակվում են լայնատերև անտառներում և հատկապես անտառների բացատներում ու անտառների և մարգագետինների միջև ընկած տարածքներում: Ազգային պարկի տարածքում ներկայումս հայտնի են 55 տեսակի կաթնասուններ, որոնցից 9-ը գրանցված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում, 3-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում: Առկա է նաև մեկ էնդեմիկ տեսակ՝ Անդրկովկասի և 7 տեսակ՝ Կովկասի համար: Ազգային պարկի հիմնական բնակիչներն են սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), թփուտային դաշտամուկը (*Microtus majori*) (որը Կովկասյան էնդեմիկ տեսակ է), անտառային քնամուկը (*Dryomys nitedula*), պոլչուկը (*Glis glis*), դեղնակուրծք մուկը (*Apodemus ponticus*) (որը Կովկասյան էնդեմիկ տեսակ է), փոքր անտառային մուկը (*Apodemus uralensis*), մակեդոնական մուկը (*Mus macedonicus*), պարսկական կամ կովկասյան սկյուռը (*Sciurus anomalus*), անտառակատուն (*Felis silvestris silvestris*), լուսանը (*Lynx lynx*) և գորշ արջը (*Ursus arctos*): Սովորական են այծյամը (*Capreolus capreolus*) և վայրի խոզը (*Sus scrofa*): Նախկինում բնակվող ազնվացեղ եղջերուն (*Cervus elaphus maral*) անհետացել էր ազգային պարկի տարածքից, սակայն վերջին 10 տարիների ընթացքում երբեմն հանդիպում են 5-6 առանձնյակների խումբ Անտառաբնակ չղջիկներն են լայնականջ ծալքաշուրթ չղջիկը (*Tadarida teniotis*), փոքր իրիկնաչղջիկը (*Nyctalus leisleri*), շիկակարմիր իրիկնաչղջիկը (*Nyctalus noctula*), եվրոպական լայնականջ չղջիկը (*Barbastella barbastellus*), անտառային կամ Նատուզիուսի փոքրաչղջիկը (*Pipistrellus nathusii*), գորշ ականջեղ չղջիկը (*Plecotus auritus*): Քարքարոտ վայրերում կարող են հանդիպել սրականջ գիշերաչղջիկը (*Myotis blythii*) և եռագույն գիշերաչղջիկը (*Myotis emarginatus*): Մարգագետիններում և բացատներում լայնորեն տարածված

են եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*), ձնային դաշտամուկը (*Chionomys nivalis*), անդրկովկասյան կուրամկնիկը (*Ellobius lutescens*), որն Անդրկովկասյան էնդեմիկ տեսակ է, դադստանի դաշտամուկը (*Microtus daghestanicus*), որը Կովկասյան էնդեմիկ տեսակ է, սպիտակափոր սպիտակատամը (*Crocidura leucodon* = *C.persica*), փոքր սպիտակատամը (*Crocidura suaveolens*), աղվեսը (*Vulpes vulpes*), գորշուկը (*Meles canescens*), քարակզաքիսը (*Martes foina*) և աքիսը (*Mustela nivalis*): Ջրամերձ տարածքներում հանդիպում են ջրային դաշտամուկը (*Arvicola amphibius* = *A.terrestris*), Շելկովնիկովի կուտորան (*Neomys teres* = *N.schelkovnikovi*), որը Կովկասյան էնդեմիկ տեսակ է, բեղավոր գիշերաչղջիկը (*Myotis mystacinus*) և, հազվադեպ, ջրասամույրը (*Lutra lutra*): Անթրոպոգեն տարածքներում սովորական են մոխրագույն համստերը (*Cricetulus migratorius*), տնային մուկը (*Mus musculus*), մոխրագույն առնետը (*Rattus norvegicus*), սև առնետը (*Rattus rattus*): Շինություններում ապաստարան են գտնում մեծ պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus ferrumequinum*), փոքր պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus hipposideros*), ասիական լայնականջ չղջիկը (*Barbastella leucomelas*), ուշաթռիչք մաշկեղ չղջիկը (*Eptesicus serotinus*), սովորական երկարաթև չղջիկը (*Miniopterus schreibersi*), թզուկ փոքրաչղջիկը (*Pipistrellus pipistrellus*), գաճաճ փոքրաչղջիկը (*Pipistrellus pygmaeus*), մաշկեղակերպ փոքրաչղջիկը (*Pipistrellus* (= *Hypsugo*) *savii*) և երկգույն մաշկեղ չղջիկը (*Vespertilio murinus*): Ամենուրեք տարածված են Ռադդեի գորշատամը (*Sorex raddei*), Սատունիի գորշատամը (*Sorex satunini* = *S.caucasica stavropolica*), Վոլնուխիի գորշատամը (*Sorex volnuchini*), որոնք Կովկասյան էնդեմիկ են, սպիտակափոր ոզնին (*Erinaceus concolor*), փոքր խլուրդը (*Talpa levantis*) և գայլը (*Canis lupus*): ԲՊՄՍ Կարմիր ցուցակում գրանցված են եվրոպական լայնականջ չղջիկը, սովորական երկարաթև չղջիկը և ջրասամույրը (NT): ՀՀ կենդանիների Կարմիր գրքում նշված են ազնվացեղ եղջերուն (CR), Շելկովնիկովի կուտորան, ջրասամույրը (EN), ասիական լայնականջ չղջիկը, սովորական երկարաթև չղջիկը, գորշ ականջեղ չղջիկը, անտառակատուն, գորշ արջը (VU) և լայնականջ ծալքաշուրտ չղջիկը (DD): Էնդեմներն են անդրկովկասյան կուրամկնիկը (Անդրկովկասի էնդեմ), թփուտային դաշտամուկը, դեղնակուրծք մուկը, Շելկովնիկովի կուտորան, Ռադդեի, Սատունիի և Վոլնուխիի գորշատամները (Կովկասի էնդեմներ):

4) Մշակութային առանձնահատկություններ - Դիլիջանն ունի հարուստ պատմամշակութային ժառանգություն: Ամենանշանակալից մշակութային հուշարձաններն են Հաղարծնի վանքը (10-13-րդ դդ.), Գոշավանքը (12-13-րդ դդ.), Ջուխտակ վանքերը (11-13-րդ դդ.), Մաթոսավանքը (10-13-րդ դդ.), Աղավնավանքի եկեղեցին (11-րդ դ.): 1970-ականներին իրականացված հնագիտական հետազոտությունները ցույց են տվել, որ մարդիկ սկսել են ապրել Դիլիջան քաղաքի տարածքում բրոնզե դարի վերջերին և երկաթե դարի սկզբներին: Գոլովինոյի և Պապանինոյի նախապատմական դամբարանների պեղումների ժամանակ հայտնաբերվել են գրեթե երեք հազար տարեկան բրոնզե իրեր, այդ թվում՝ զենք ու զրահ, դաշույններ, կուժեր, օղեր և այլն, որոնք գտնվում են Դիլիջանի և Էրմիտաժի թանգարաններում: Դիլիջանում կան նաև բազմաթիվ խաչքարեր՝ բացառիկ նրբաքանդակներով (Վարպետ Պողոսի խաչքարը (1291), որը մշակվել է առանձնահատուկ հմտությամբ, գտնվում է Գոշավանքում): Քաղաքի մասին հիշատակումներ արվել են 19-րդ դարի առաջին կեսին, երբ Դիլիջանը սկսեց զարգանալ որպես առողջարանային կենտրոն: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին սկսեցին զարգանալ արհեստները, հատկապես դարբնագործությունը, գորգագործությունը, փայտի գեղարվեստական փորագրությունը և այլն: Դիլիջանի գորգերը բավականին հայտնի են Հայաստանում: Դիլիջանի թանգարանի հավաքածուներում կան գորգերի և կարպետների յուրօրինակ նմուշներ: ԴԱՊ-ի տարածքում կան ավելի քան 220 պատմական, հնագիտական և մշակութային վայրեր, որոնց մեծ մասը ներառված չեն զբոսաշրջային առաջարկներում՝ ֆիզիկական անմատչելիության պատճառով: ԴԱՊ-ի մշակութային և պատմական արժեքներն են՝ Բնության հուշարձաններ-2, Քարե դարի հնագիտական վայրեր-3, Քարայր կացարան-9,

Քաղաքատեղիներ-8, Գյուղատեղիներ-51, Ազգագրական տներ-2, Ամրոցներ-13, Կամուրջներ-4, Մետաղագործական համալիր- 1, Եկեղեցիներ- 4, Վանական համալիրներ-4, Մատուռներ-17, Խաչքարերի խմբեր-23, Առանձին խաչքարեր-26, Աղբյուր-հուշակոթողներ-4, Երկրորդ համաշխարհային պատերազմի հերոսներին նվիրված հուշարձաններ-2, Դամբարանադաշտ-2, Գերեզմանատներ-48:

2. Իրավական կարգավիճակ, միջազգային և ազգային շրջանակներ

1) Իրավական կարգավիճակը՝ ԴԱՊ-ը որպես պետական արգելոց հիմնադրվել է 1958թ-ին՝ համաձայն Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի N341 որոշման: Արգելոցի հիմնադրման նպատակը եղել է մեզոֆիլ կաղնու և հաճարենու անտառների, ինչպես նաև երրորդական դարաշրջանից մեզ հասած ռելիկտային տեսակների՝ կենու և կովկասյան մրտավարդի պահպանման կարևորությունը (Խանջյան, 2004թ.): Համաձայն ՀՀ կառավարության 2002թ.-ի փետրվարի 21-ի N165 որոշման, «Դիլիջան» պետական արգելոցի և հարակից տարածքների հիման վրա կազմակերպվել է «Դիլիջան» ազգային պարկը, իսկ ՀՀ կառավարության 2002թ.-ի մայիսի 11-ի N 920-Ն որոշմամբ հաստատվել են «Դիլիջան» ազգային պարկի և «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) կանոնադրությունները: ՊՈԱԿ-ի նպատակն է պահպանել հաճարենու և կաղնու անտառները, եզակի կենու ծառերը, կովկասյան մարեհավը, գորշ արջը և այլ տեսակներ, ինչպես նաև բնության և պատմաճարտարապետական հուշարձանները: Բնության պահպանության դրույթներն ամրագրվել են հետևյալ իրավական փաստաթղթերում՝ Հայաստանի Հանրապետության՝ որպես անկախ պետության, առաջին հիմնարար օրենսդրական ակտում՝ Անկախության հռչակագրի (ստորագրվել է 1990թ.-ի օգոստոսի 23-ին) հետևյալ հոդվածում՝ Հոդված 7: «Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է: Դրանց տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով: Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ ազգային հարստության, այդ թվում՝ ոսկու պաշարների, ալմաստի և վայրուտային ֆոնդերի մասնաբաժնի իրավունք» և 1995թ-ի հուլիսի 5-ին ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հետևյալ հոդվածներում՝ Հոդված 10: «Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը», Հոդված 31: «Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին», Հոդված 33.2: «Յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել և բարելավել շրջակա միջավայրը», Հոդված 48: «Պետության հիմնական խնդիրն է իրականացնել ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն»: Պահպանվող տարածքների ոլորտը կարգավորող հիմնական օրենքը «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքն է, որը հաստատվել է 2006թ.-ի նոյեմբերի 27-ին: Ըստ այդ օրենքի 1-ին հոդվածի, բնության հատուկ պահպանվող տարածք է համարվում «ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը, հողը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով առանձնացված տարածքներ և առանձին բնական օբյեկտներ, որոնք բնապահպանական, գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ»: Այդ նույն օրենքի 4-րդ հոդվածը դասակարգում է բնության հատուկ պահպանվող տարածքները

ա. ըստ նշանակության՝ միջազգային, հանրապետական և տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների,

բ. ըստ կատեգորիայի՝ պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի:

2) Միջազգային շրջանակ - Հայաստանը ստորագրել և/կամ վավերացրել է կենսաբազմազանության պահպանության հետ կապված ներքոնշյալ միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները:

	Կոնվենցիան կամ արձանագրությունը, անունը և վայրը և ընդունման տարեթիվը	Ստորագրվել է, թ.	Վավերացվել է, թ.	Նշումներ
1	Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես որպես ջրլող թռչունների բնադրավայրերի մասին կոնվենցիա (Ռամսար, 1971)	1993	Վավերացվել է ԽՍՀՄ-ի կողմից	
2	Կենսաբազմազանության մասին կոնվենցիա. (Ռիո դե Ժանեյրո, 1992թ.)	1992	1993	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993-ին
3	Կենսաբանական անվտանգության մասին Կարթագենայի արձանագրություն (Կարթագենա, 2000)	2000	2004	
4	Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992 թ.)	1992	1993	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993-ին
6	Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (Ժնև, 1979)		1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997-ին
7	Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիա (ԷՍՊՈ, 1991 թ.)		1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997-ին
	Ռազմավարական բնապահպանական գնահատման վերաբերյալ արձանագրություն (Կիև, 2003)	2003		
8	Անապատացման դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիա (Փարիզ, 1994 թ.)	1994	1997	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997-ին
9	Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա (Օրիուս, 1998)	1998	2001	
10	Միջազգային լճերի և անդրսահմանային ջրհոսքերի պահպանության և օգտագործման մասին կոնվենցիա (Հելսինկի, 1992 թ.)	1999		

	Ջրերի և առողջության մասին արձանագրություն (Լոնդոն, 1999)	1999		
11	Լանդշաֆտի մասին եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա, 2000)		2004	
12	Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին կոնվենցիա (Փարիզ, 1972)		1993	
13	Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին կոնվենցիա (CITES, Վաշինգտոն, 1979)		2008	
14	Վայրի բնության և բնական միջավայրի պահպանության եվրոպական կոնվենցիա (Բեռն, 1979)	2006	2008	
15	Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին կոնվենցիա (Բոնն, 1979թ.)		2010	

3) Ազգային շրջանակ- Մինչև 2002 թվականը, պետական արգելոցները և ազգային պարկերը, որպես առանձին ստորաբաժանումներ, գործում էին ՀՀ բնապահպանության նախարարության իրավասության ներքո: 2002 թ.-ին, համաձայն Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» (ՊՈԱԿ) օրենքի, նրանց տրվեց ՊՈԱԿ-ի կարգավիճակ, որոնց կանոնադրությունը հաստատվում է ՀՀ կառավարության կողմից: ՀՀ բնապահպանության նախարարության լիազորությունները իրականացվում են կենսառեսուրսների կառավարման գործակալության կողմից: Գործակալության նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում բնական էկոհամակարգերի, ներառյալ անտառների, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բուսական ու կենդանական աշխարհի օբյեկտների, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, վերարտադրության և կայուն օգտագործման ապահովումը, ինչպես նաև այդ ոլորտներում պետական քաղաքականության ձևավորմանն ու կառավարմանն աջակցությունը: Գործակալությունը համակարգում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և կայուն օգտագործման աշխատանքները: Գործակալությունը ապահովում է բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների կայուն օգտագործման, վերականգնման ու վերարտադրության միջոցառումների իրականացումը և կատարում իր նպատակներին ու խնդիրներին հասնելու համար այլ գործառույթներ:

4) Հայաստանում բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեությունը կարգավորվում է հետևյալ իրավական փաստաթղթերով՝ ՀՀ հողային օրենսգիրք (2001թ.), ՀՀ ջրային օրենսգիրք (2002թ.), ՀՀ անտառային օրենսգիրք (2005թ.), ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2011թ.), «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.), «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք (1998թ.), ՀՀ օրենքը՝ բուսական աշխարհի մասին (1999թ.), ՀՀ օրենքը՝ կենդանական աշխարհի մասին (2000թ.), ՀՀ օրենքը՝ Սևանա լճի մասին (2001թ.), ՀՀ օրենքը՝ Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման,

պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերը հաստատելու մասին (2001թ.), ՀՀ օրենքը՝ թափոնների մասին (2004թ.), ՀՀ օրենքը՝ բնապահպանական վերահսկողության մասին (2005թ.), ՀՀ օրենքը՝ բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին (2006թ.), ՀՀ օրենքը՝ բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006թ.), ՀՀ օրենքը՝ ջրի ազգային ծրագրի մասին (2006թ.), ՀՀ օրենքը՝ որսի և որսորդական տնտեսության վարման մասին (2007թ.), ՀՀ օրենքը՝ հողի օգտագործման և պահպանության վերահսկողության մասին (2008թ.), ՀՀ օրենքը՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014թ.):

5) 2014 թվականի սեպտեմբերին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Պահպանվող տարածքների համակարգի և գործողությունների պլանի մշակման ազգային ռազմավարությանը», որն ընդգծում է երկրում պահպանվող տարածքների հետագա զարգացման կարևորությունը, այդ թվում՝ նոր տարածքների հաստատումը և էկոլոգիական ցանցերի ձևավորումը:

3. Գոտիավորում

1) Գոտիավորումը կառավարման գործիք է, որը պահպանվող տարածքը բաժանում է օգտագործման տարբեր հատվածների՝ գոտիների, որոնցում թույլատրվում են տարբեր տիպի և մասշտաբի գործողություններ և ռեսուրսների օգտագործումն ու պահպանության պահանջվող աստիճանը կարող է լինել տարբեր: Գոտիները տարբերակվում են ըստ կենսաբազմազանության, լանդշաֆտի և էկոհամակարգի առանձնահատկությունների, պահպանվող տարածքների տեսլականի և նպատակների, ինչպես նաև դրանց սոցիալ-տնտեսական միջավայրի և արտաքին այլ գործոնների համադրման արդյունքում: Գոտիավորումը դրույթացնում է պահպանվող տարածքի յուրաքնչյուր գոտու համար սահմանված քաղաքականությունների և կանոնների կիրառումը: Գոտիավորումը հանդիսանում է նաև որպես ուղեցույց՝ ենթակառուցվածքների մշակման, ինչպես նաև պահպանվող տարածքի ներսում բնական ռեսուրսների ավանդական և արդյունավետ օգտագործման համար: Գոտիավորման հիմնական նպատակն է շրջանցել կամ նվազագույնի հասցնել մարդածին բացասական ներգործությունը, որին ենթակա են պահպանվող տարածքի էկոհամակարգերը, և հնարավոր դարձնել այդ էկոհամակարգերից՝ ակնկալվող բարիքների ու ծառայությունների մատչելիությունը հասարակության համար: 2006թ.-ի նոյեմբերի 27-ին ընդունված «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (2006թ.-ի ՊՏ մասին օրենք) կարգավորում է Հայաստանի ազգային պարկերի նպատակների ու պահպանության հետ կապված բոլոր խնդիրները, իսկ օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է բնության հատուկ պահպանվող տարածքների «գոտիները»: Ազգային պարկերի տարածքները՝ ըստ պահպանության և օգտագործման ռեժիմի, գործառնական նշանակության և էկոլոգիական, գիտական, ռեկրեացիոն, տնտեսական, պատմամշակութային ու գեղագիտական արժեքների, բաժանվում են արգելոցային, ռեկրեացիոն և տնտեսական գոտիների, որոնցից արգելոցային գոտու տարածքը հանվում է տնտեսական շահագործումից և դրա նկատմամբ կիրառվում է սույն օրենքի 16-րդ հոդվածով սահմանված ռեժիմը: Ազգային պարկի սահմաններում կարող են ընդգրկվել պետական արգելավայրերը, որոնք գործում են սույն օրենքի 18-րդ հոդվածով սահմանված ռեժիմին համապատասխան: Բնության հատուկ պահպանվող տարածքի վրա բացասական մարդածին ներգործությունը նվազեցնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է պահպանման գոտի: Վերոնշյալ դրույթներից հետևում է, որ ըստ ՀՀ օրենսդրության, ազգային պարկի տարածքում հնարավոր է դիտարկել հինգ տիպի գոտիներ՝ արգելոցային, արգելավայրային, ռեկրեացիոն, տնտեսական և բուֆերային: «Արգելոցային գոտի» եզրույթը գործառութային առումով համարժեք է միջազգայնորեն կիրառելի՝ «հիմնական գոտի կամ անձեռնմխելի գոտի» եզրույթին,

«արգելավայրային գոտին» համարժեք է ԲՊՄՄ IV կատեգորիայի՝ «բնական միջավայրերի/տեսակների կառավարման տարածքներ» եզրույթին, «ռեկրեացիոն գոտի» եզրույթը համարժեք է «այցելուների կամ զբոսաշրջության գոտի» միջազգային եզրույթին, իսկ «տնտեսական գոտին»՝ «ավանդական օգտագործման կամ բազմակի օգտագործման գոտի» միջազգային եզրույթին: Միջազգային պրակտիկայում ընդունված է սահմանել նաև «միջանկյալ գոտի», որը հաճախ կոչվում է նաև «վերականգնման գոտի»: Սա հիմնականում օգտագործվում է որոշ դեգրադացված տարածքների վերականգնման նպատակով և վերականգնվելուց հետո այս տարածքը կարող է ընդգրկվել համապատասխան գոտու սահմաններում: Հայաստանի օրենսդրությունը չի սահմանում այս կատեգորիային համարժեք տարբերակ:

2) Արգելոցային գոտին ընդգրկում է ազգային պարկի էկոհամակարգերի հիմնական էկոլոգիական արժեքները և ունի պահպանության բարձրագույն կարգավիճակ: Այն հանդիսանում է անձեռնմխելի տարածք, որտեղ թույլատրվում է միայն կենսաբազմազանության և բնական լանդշաֆտների պահպանությունը և գիտական հետազոտությունների, բնապահպանական մոնիթորինգի և բնապահպանական կրթության ապահովումը և որտեղ գործում է բացառապես պետական արգելոցի ռեժիմը: Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, պետական արգելոցի տարածքում արգելվում է.

ա. ջրային ռեսուրսների օգտագործումը՝ ջրային համակարգերի միջոցով և ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն,

բ. տնտեսական և բնակելի օբյեկտների, ճանապարհների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի և հաղորդակցության այլ ուղիների շինարարությունն ու շահագործումը, բացառությամբ պետական արգելոցի գործունեության համար անհրաժեշտ օբյեկտների շինարարության (անտառապահիտնակ, արգելափակոց, սահմանանշան և այլն),

գ. բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը,

դ. որսորդությունը, ձկնորսությունը,

ե. կենդանիների և բույսերի նոր տեսակների, կենսատեխնոլոգիաների միջոցով ստացված գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների (տեսակների) ներմուծումը և օգտագործումը, ինչպես նաև առանձին տեսակների քանակի մեծացման կամ պակասեցման նպատակով տարվող որևէ աշխատանք,

զ. բույսերի, ծաղիկների, պտուղների և սերմերի մթերումը, բացի արգելոցի տարածքի գիտական հետազոտությունների համար նախատեսված հավաքածուների հավաքից,

է. անտառահատումները, անասունների արածեցումը, խոտհունձը և բուսական ծածկույթի այլ խախտումներ, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի «դ» ենթակետում նշված դեպքերի,

ը. թունաքիմիկատների օգտագործումը բույսերի պաշտպանության նպատակով, ինչպես նաև հանքային պարարտանյութերի օգտագործումը,

թ. ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը և պահեստավորումը,

ժ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները, որոնք առաջացնում են հողային ծածկույթի խախտում,

ժա. օգտակար հանածոների հանքավայրերի, երևակումների շահագործումը, հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը,

ժբ. ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում,

ժգ. ցանկացած այլ գործունեություն, որը խախտում է բնական համակարգերը և օբյեկտները կամ սպառնում է դրանց պահպանությանը:

3) Միջազգային չափորոշիչներով Հայաստանի ազգային պարկերի արգելոցային գոտուն համարժեք պահպանության ռեժիմը ԲՊՄՄ 1ա կատեգորիան է. «Կենսաբազմազանությունը ապահովելու նպատակով խիստ պահպանվող տարածք, որը կարող է ունենալ նաև երկրաբանական/գեոմորֆոլոգիական հատկանիշներ, որտեղ մարդու այցելությունները, գործունեությունը և ներգործությունը խստորեն վերահսկվում են՝ երաշխավորելու համար կոնսերվացիոն արժեքների պահպանությունը: Նման պահպանվող տարածքները կարող են ծառայել որպես անփոխարինելի տարածքներ գիտական հետազոտությունների և մոնիթորինգի համար» (Դուդլի, 2008)¹: Արգելավայրային գոտին գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք է, որտեղ իրականացվում է էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը, որտեղ գործում է պետական արգելավայրերի պահպանության ռեժիմը: Միջազգային չափորոշիչներով այն համարժեք է ԲՊՄՄ IV կատեգորիային՝ որպես բնական միջավայրերի կառավարման տարածքներ: «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն.

ա. Հայաստանի Հանրապետությունում պետական արգելավայրի տարածքում արգելվում է ցանկացած գործունեություն, որը խախտում է արգելավայրի էկոհամակարգերի կայունությունը կամ սպառնում է հատուկ պահպանության կարիք ունեցող էկոհամակարգերի, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը,

բ. Յուրաքանչյուր պետական արգելավայրի խնդիրները և ռեժիմի առանձնահատկությունները սահմանվում են տվյալ պետական արգելավայրի կանոնադրությամբ:

4) Ռեկրեացիոն գոտին (կամ այցելուների գոտին) ստեղծվում է ի նպաստ զբոսաշրջիկների և պետք է ներառի հատուկ հետաքրքրություն և գրավչություն ունեցող տեսարժան վայրեր՝ տարբեր լանդշաֆտներից և գեղատեսիլ հատկանիշներից մինչև պատմական, մշակութային ու ռեկրեացիոն արժեք ներկայացնող վայրերը: Այս գոտին պետք է զերծ լինի կոնֆլիկտներից և նախընտրելի է, որ այն մարդկային գործողությունների արդյունքում քիչ ձևափոխված լինի և ներառի պարկի ամենաներկայացուցչական էկոհամակարգերի օրինակներ՝ լրացուցիչ կրթական հնարավորություններ ապահովելու համար: Ռեկրեացիոն գոտին ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս է, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման

ծառայության կազմակերպումը: Ազգային պարկի ռեկրեացիոն գոտու գոտու տարածքում արգելվում է.

ա. ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն,

բ. բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը,

գ. անասունների արածեցումը,

դ. բույսերի և կենդանիների նոր տեսակների, ինչպես նաև կենսատեխնոլոգիաների միջոցով ստացված գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (տեսակների) ներմուծման և կլիմայավարժեցման աշխատանքները,

ե. թունաքիմիկատների օգտագործումը բույսերի պաշտպանության նպատակով, ինչպես նաև հանքային պարարտանյութերի օգտագործումը,

զ. էկոլոգիապես վնասակար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ և կեղտաջրեր առաջացնող տեխնոլոգիաների օգտագործումը,

է. ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը և պահեստավորումը,

ը. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները (հողային ծածկույթի խախտումով), օգտակար հանածոների հանքավայրերի, երևակումների շահագործումը, հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը,

թ. անտառահատումները (բացառությամբ սանիտարական և խնամքի հատումների),

ժ. արդյունագործական նպատակով բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների և դրանց արգասիքների օգտագործումը,

ժա. ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում:

5) Տնտեսական գոտին ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս է, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն: Ազգային պարկի տնտեսական գոտու տարածքում արգելվում են հետևյալ գործողությունները.

ա. ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն,

բ. բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը,

գ. անտառահատումները (բացառությամբ սանիտարական և խնամքի հատումների),

դ. բույսերի և կենդանիների նոր տեսակների, ինչպես նաև կենսատեխնոլոգիաների միջոցով ստացված գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (տեսակների) ներմուծման և կլիմայավարժեցման աշխատանքները,

ե. թունաքիմիկատների օգտագործումը բույսերի պաշտպանության նպատակով, ինչպես նաև հանքային պարարտանյութերի օգտագործումը,

զ. էկոլոգիապես վնասակար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումների և կեղտաջրեր առաջացնող տեխնոլոգիաների օգտագործումը,

է. ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը, պահեստավորումը,

ը. ընդերքի շահագործումը պայթեցման միջոցով,

թ. հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը,

ժ. ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում:

6) Բուֆերային (պահպանման) գոտի՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքում «աջակցության գոտի» եզրույթը չի օգտագործվում, հետևաբար իրավական հիմք չկա աջակցության գոտու համար նախատեսված տարածք ստեղծելու համար: Այնուամենայնիվ, օրենքի 1-ին հոդվածում «Ընդհանուր հասկացություններ» բաժնում «բուֆերային գոտի» եզրույթը սահմանվում է հետևյալ ձևակերպումներով՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա» և «Բուֆերային գոտի. բնության հատուկ պահպանվող տարածքը շրջափակող, սույն օրենքով սահմանված կարգով առանձնացված տարածք, որտեղ թույլատրվում է բնության հատուկ պահպանվող տարածքի էկոլոգիական համակարգերին և դրանց բնականոն զարգացմանը չվնասող տնտեսական գործունեություն»: Նույն օրենքի 20-րդ հոդվածը սահմանում է. «Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտում արգելվում է տնտեսական գործունեություն, որը կարող է սպառնալ այդ տարածքների էկոհամակարգերի կայունությանը, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը»: Այս սահմանումները համապատասխանում են ԲՊՄՄ VI կատեգորիայի՝ բնական ռեսուրսների կայուն օգտագործման տարածքների պահանջներին, ինչպես նաև տնտեսական գոտուն առնչվող առկա կանոնակարգերին:

Վարչական ծրագիր

1. Նկարագրությունը և կազմակերպչական կառուցվածքը

1) Վարչական ծրագիրը ներառում է պարկի կազմակերպչական կառուցվածքի, անձնակազմի կարիքների, գործառույթների և պարտականությունների, կառավարման և պահպանության վերահսկման, իրավական հարցերի, ընդհանուր պլանավորման, հաշվապահության և ֆինանսների ոլորտները: Վարչական ծրագրի արդյունավետ իրականացման համար առաջարկվում է հիմնել ընդհանուր և տնտեսական հարցերի գծով տնօրենի տեղակալի հաստիք, որը կկորդինացնի վարչական բաժնի, իրավաբանի և մարդկային ռեսուրսների կառավարչի աշխատանքները, իսկ ֆինանսատնտեսագիտական բաժնին վերապահել ֆինանսական հարցերի, գնումների և հաշվապահության պարտականությունները: Կառավարման պլանի ժամանակահատվածում վարչական ծրագրի հիմնական մարտահրավերները կլինեն.

ա. առաջարկվող նոր կազմակերպչական կառուցվածքի ներդրումը, ֆինանսական և վարչական ընթացակարգերի համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին, վարձակալական քաղաքականության վերանայումը;

բ. տարբեր բաժինների աշխատակիցների վերապատրաստումը և կարողությունների հզորացումը՝ տարբեր ծրագրային նպատակներին հասնելու համար;

գ. տեղի բնակչության ներգրավումը՝ ներկայացուցչական և արդյունավետ խորհրդատվական խորհրդի ստեղծման և երկխոսության մեխանիզմների մշակման միջոցով;

դ. ապօրինի ծառահատման խնդրի կարգավորումը;

ե. պարկի վերագոտիավորումը՝ ԲՊՄՄ II կատեգորիային համապատասխանեցնելու նպատակով:

2. Նպատակները, խնդիրները և արդյունքները

N	Նպատակները	Խնդիրները	Արդյունքները
1.	Մասնագիտական, վարչական և ֆինանսական արդյունավետության բարձրացում	<p>ա. Վերապատրաստման կազմակերպում և սարքավորումներով ապահովում,</p> <p>բ. մարդկային ռեսուրսների կառավարման մեխանիզմների կատարելագործում,</p> <p>գ. ֆինանսական կառավարման բարելավում</p> <p>դ. ԴԱՊ-ի ֆինանսական և կառավարման արդյունավետության</p>	<p>Կառավարման նոր կառուցվածք,</p> <p>վերապատրաստված աշխատակիցներ</p> <p>պատշաճ ֆինանսական և վարչական փաստաթղթերի, ընթացակարգերի և պլանավորման առկայություն</p> <p>խրախուսման համակարգի կիրառում</p> <p>METT միավորի աճ</p>

N	Նպատակները	Խնդիրները	Արդյունքները
		գնահատում	վարձակալական եկամուտների աճ
2.	ԲՊՄՄ II կատեգորիային համապատասխան գոտիավորում	ՀՀ կառավարության 2017 թվականի ----- «Դիլիջան» ազգային պարկի կառավարման պլանը հաստատելու մասին» N-- -Ն որոշման Հավելվածի համաձայն վերագոտիավորում	Վերագոտիավորված տարածք, կադաստրում գրանցված փաստաթղթեր
3.	Տեղական համայնքների հետ շփումների բարելավում	Բնակչության հետ երկխոսության հաստատում, պահպանության գործընթացի բարելավում	Գործող և ակտիվ խորհրդատվական խորհրդի առկայություն, բնակչության հետ ակտիվ շփումներ, ապօրինի ծառահատումների նվազում

3. Նախատեսվող միջոցառումները

1) Կազմակերպչական գործառնությունների բարելավում և ազգային պարկի աշխատակազմի որակավորման բարձրացում՝ դասընթացների կազմակերպման և համապատասխան սարքավորումների ձեռքբերման միջոցով: Առաջարկություններն են՝ առաջնահերթությունը պետք է տրվի գործնական, տեղերում անցկացվող դասընթացներին (չորջանցելով դասընթացների մոդուլները): Այս սկզբունքը կիրառվել է ԿԲՀ-ի կողմից 2015թ-ին, երբ ԿԲՀ-ն ընդգրկել էր բյուջետային և ֆինանսական հարցերով մասնագետ, որը մշտապես (թե՛ժ գծի սկզբունքով) աջակցել էր թիմին՝ խնդիրների լուծման անհրաժեշտության դեպքում: ԿԲՀ-ն նախատեսում է առաջիկայում ևս ցուցաբերել այդպիսի աջակցություն: Մոդուլներով դասընթացները հիմնականում կիրականացվեն կազմակերպչական նոր կառուցվածքը ներդնելուց հետո, որպեսզի աշխատակիցները վերապատրաստվեն ըստ նախատեսված առաջադրանքների և ներդրված ընթացակարգերի: Կազմակերպչական կառուցվածքի կատարելագործում՝ «Դիլիջան» ազգային պարկի կառավարման պլանի մշակման գործընթացում ընդգրկված փորձագետների կարծիքով ազգային պարկի ներկայիս կազմակերպչական կառուցվածքը հիմնավոր վերակազմակերպման կարիք ունի և անհրաժեշտություն է առաջացել վերանայել աշխատանքների նկարագրերը, բարելավել գործող ընթացակարգերը և ստեղծել նոր աշխատակարգեր: Միաժամանակ պետք է իրականացնել կազմակերպության ողջ աշխատակազմի կարողությունների զարգացմանը և վերապատրաստմանն ուղղված միջոցառումներ: Առաջարկություններն են՝

ա. կազմակերպչական նոր կառուցվածքի ներդնում, որն ենթադրում է հետևյալ գործողությունների իրականացում՝ *Աշխատանքային առկա նկարագրերի վերանայում և նոր նկարագրերի սահմանում* (ենթադրում է փոփոխություններ առկա պայմանագրերում (աշխատակիցները պետք է ստորագրեն իրենց աշխատանքային նոր նկարագրերը) և նոր պայմանագրերի կազմում՝ հիմք ընդունելով նոր կազմակերպչական կառուցվածքում ներառված հաստիքները) և *Հաղորդակցության և հաշվետվությունների ներկայացման նոր ընթացակարգերի կիրառում*: Վարչական ու հիերարխիկ նոր կառուցվածքի ներդրումը անխուսափելիորեն կհանգեցնի նոր ընթացակարգերի կիրառմանը:

բ. Կառավարման հմտությունների բարելավում՝ *Ներկայիս աշխատակիցների հմտությունների սրուգում և նոր աշխատակիցների ներգրավում*: Աշխատակիցների ատեստավորում՝ նրանց հմտությունների և կարողությունների համապատասխանությունը պարզելու նպատակով: Անհրաժեշտ է նաև հետամուտ լինել, որ նոր ընդունվող աշխատակիցներն ունենան տվյալ հաստիքի համար պահանջվող հմտություններ, *Մոնիթորինգի և գնահատման նոր ընթացակարգերի կիրառում*: Առաջարկվում է ներդնել աշխատակիցների գործառույթները մշտադիտարկելու և գնահատելու ընթացակարգեր ու մեխանիզմներ՝ կիրառելով կատարողականի գնահատման համակարգ, ինչը զգալիորեն կբարձրացնի աշխատանքի արդյունավետությունը և *Վարձատրության նոր քաղաքականություն*: Պետք է ներդնել կյանքի և առողջության ապահովագրության համակարգը, հատկապես պահպանության բաժնի շարժական խմբերի աշխատակիցների համար՝ հաշվի առնելով նրանց պարտականությունների բարձր ռիսկայնությունն ու վտանգը:

գ. Ներքին ընթացակարգերի բարելավում: Կազմակերպության գործունեությունը բարելավելու համար նպատակահարմար է ներդնել օրենսդրությամբ հստակորեն չկարգավորված գործողությունների իրականացման ընթացակարգեր: Դրանք կարող են լինել «Պահպանության և պաշտպանության ձեռնարկ», «Մարդկային ռեսուրսների կառավարման ձեռնարկ», վարքագծի կանոններ, փաստաթղթաշրջանառության կանոններ և այլն:

դ. Ֆինանսա-վարչական հաշվետվություններ ներկայացնելու, ֆինանսական պլանավորման, գնումների և վարձակալությունների կառավարման արդյունավետ ընթացակարգերի ներդրում: Առաջարկություններ՝ Ֆինանսական և պլանավորման կառավարման բարելավում - ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետությունը բարելավելու նպատակով կներդրվեն ֆինանսական միջոցների շարժի և գնումների ընթացակարգեր կձևավորվի հաշվապահական տվյալների էլեկտրոնային բազա, կկիրառվի կանխիկ միջոցների կառավարման նոր ընթացակարգեր և այլն, վարձակալությունների կառավարման բարելավում - անհրաժեշտ է ներդնել վարձակալությունների կառավարման արդյունավետ գործիքակազմ, ինչը թույլ կտա բացառել կամ նվազագույնի հասցնել վարձակալական վճարները չվճարելու կամ վարձակալների կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքերը: Անհրաժեշտ է ներդնել նաև կերհանդակների կառավարման արդյունավետ համակարգ, ինչը թույլ կտա պատշաճ վարձակալությունների միջոցով ազգային պարկի համարապահովել կայուն եկամուտներ, իրականացվող գործողությունների մշտադիտարկում և դրանց Կառավարման պլանի և ԿԲՀ-ի պահանջների հիման վրա պարբերաբար կիրականացվեն մշտադիտարկումներ և ազգային պարկի ֆինանսական և ընդհանուր կառավարման արդյունավետությունը գնահատելու նպատակով կմշակվի METT կամ կառավարման արդյունավետությունը չափող այլ գործիքակազմ:

2. ԲՊՄՄ 2-րդ կատեգորիային համապատասխան ազգային պարկի տարածքի վերագոտիավորում:

1) Ազգային պարկի ներկայիս գոտիավորումը չի համապատասխանում ԲՊՄՄ II կատեգորիայի ազգային պարկի պահանջներին: Այս խնդիրը լուծելու համար նախատեսվում է նոր գոտիավորում: Վերագոտիավորմը կիրականացվի համայնքների ազգաբնակչության ակտիվ մասնակցությամբ: Ազգային պարկի վերագոտիավորումը երկարաժամկետ գործընթաց է, որը կիրականացվի քայլ առ քայլ՝ 10 տարիների ընթացքում: Առաջարկություններ՝

ա. Տեխնիկական լուծումների իրականացում, այն ենթադրում է գոտիների տարածքների հստակեցում GPS համակարգի միջոցով, որից հետո պետք է կատարել անհրաժեշտ կադաստրային գրանցում՝ գոտիներին իրավական կարգավիճակ տալու համար: Տարբեր գոտիներն ու դրանց տեղադրությունը մանրամասնորեն ներկայացված են ՀՀ կառավարության 2017 թվականի ---- «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին» N ----- որոշման Հավելվածում:

բ. Տեղական համայնքների հետ երկխոսության հաստատում: Վերագոտիավորման արդյունավետությունը պայմանավորված է կողմերի միջև փոխըմբռնումային մթնոլորտի ձևավորմամբ, ինչի համար կարևորվում է տեղական համայնքների հետ համագործակցությունը:

3) Տեղի բնակչության մասնակցությունը պահպանվող տարածքի պլանավորման և կառավարման գործընթացներում հանդիսանում է ազգային պարկի երկարաժամկետ կայունությունը ապահովող գործոն, որի հուսալիությունը պայմանավորված է տեղի բնակչության հետ երկխոսություն հաստատելու կարողությամբ:

ա. Խորհրդատվական խորհրդի ձևավորում: Ազգային պարկի տարածքում և շուրջը գտնվող տասը համայնքները հիմնական դերակատարություն պետք է ունենան վերափոխման նախատեսվող գործընթացներում՝ ԴԱՊ-ի և դրա բուֆերային գոտում ռեսուրսների օգտագործման առումով: Տեղի բնակչության հետ փոխհամաձայնեցված և գործնական հարաբերությունների հաստատումը պետք է լինի ազգային պարկի կարևոր մարտավարությունը, որի քայլերից մեկը կարող է հանդիսանալ ազգային պարկի խորհրդատվական խորհրդի ստեղծումը: Խորհրդատվական խորհուրդը պետք է հանդիսանա մշտապես գործող մարմին, որի կազմում կընդգրկվեն պարկի տնօրենը, ԴԱՊ-ի այլ ղեկավարներ, ինչպես նաև Դիլիջան քաղաքի և հարակից համայնքներից ընտրված ներկայացուցիչներ: Համապատասխան կառավարական, հասարակական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներին նույնպես կարող են հրավիրվել մասնակցելու խորհրդի աշխատանքներին: Խորհրդի հիմնական գործառույթը կհանդիսանա պարկի տարբեր ծրագրերի գործողությունների գնահատումը, ինչպես նաև բուֆերային գոտու և, ընդհանրապես, ազգային պարկի ընդհանուր և վիճահարույց հարցերի քննարկումը: Խորհրդի ղեկավարը կընտրվի խորհրդի անդամների կողմից՝ երկու տարի ժամկետով, իսկ նիստերը կիրավիրվեն տարեկան երկու անգամ, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության:

բ. Տեղի բնակչության հետ վեճերի կառավարման մեխանիզմների ստեղծում: Հայաստանում դեռևս ձևավորված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների ղեկավարության և տեղի բնակչության միջև երկխոսություն հաստատելու մշակույթ, ինչի հետևանքով տեղի բնակչության և ՊՏ-ների միջև ծագած խնդիրները հաճախ ոչ միայն չեն լուծվում, այլև տեղի բնակչության շրջանում ձևավորվում է անվստահության մթնոլորտ: Այս առումով անհրաժեշտություն է դարձել ազգային պարկի և հարակից համայնքների միջև երկխոսություն ծավալելու ինստիտուցիոնալ մեխանիզմների ստեղծումը և կիրառումը:

գ. Ապօրինի ծառահատման դեմ պայքար: Տեղական համայնքների բնակիչների կողմից ապօրինի ծառահատումը, պայմանավորված սոցիալ-տնտեսական պայմաններով, ազգային

պարկի առջև ծառացած թերևս ամենալուրջ խնդիրն է: Վերջինս այն խնդիրը չէ, որ կարող է լուծվել միայն պահպանությամբ և օրենքի կիրառմամբ, այլ պահանջում է համալիր մոտեցում: Լուծումներից մեկը տեղական համայնքներում ջեռուցման համակարգի փոփոխությունն է (վառելափայտի փոխարեն բրիկետների օգտագործում)՝ միջազգային դոնորների ֆինանսական աջակցությամբ՝ կայուն անտառահատման հողամասեր տրամադրելով տեղի բնակչությանը (օրինակ՝ Հայանտառի տարածքում) կամ բնակչությանը փայտ տրամադրելով՝ ելնելով նրանց սոցիալական իրավիճակից (օրինակ՝ Հայանտառը և/կամ Դիլիջանը տրամադրում է վառելափայտ, որն այնուհետև բաժանվում է համայնքապետարանների կողմից) և այլն: Այս խնդրի լուծումը պետք է դիտարկել տեղի բնակչության հետ վեճերի կարգավորման մեխանիզմների կիրառման շրջանակներում:

Աղյուսակ 2

N	1	2	3	4	5	6
	Գործողություններ/Տարիներ	2017	2018	2019	2020	2021
1.	Մշակել և իրականացնել համապատասխան վերապատրաստման մոդուլներ և ծրագիրն ապահովել սարքավորումներով					
	1) Մշակել և իրականացնել կարողությունների զարգացման և դասընթացների համապատասխան մոդուլներ	x	x	x	x	x
	2) Ծրագիրն ապահովել սարքավորումներով				x	x
2.	Բարելավել մարդկային ռեսուրսների կազմակերպումը և կառավարումը					
	1) Քննարկել նոր կազմակերպչական կառուցվածքի կիրառումը	x				
	2) Բարելավել մարդկային ռեսուրսների կառավարումը	x	x	x	x	x
	3) Բարելավել ներքին ընթացակարգերը	x	x	x	x	x
	4) Համակարգել և կազմակերպել դասընթացներ կազմակերպության համար	x	x	x	x	x
3.	Բարելավել ֆինանսական կառավարումը					
	1) Բարելավել ֆինանսական և պլանավորման կառավարումը	x	x			
	2) Բարելավել վարձակալությունների կառավարումը	x	x			
4.	Չափել/գնահատել ԴԱԴ-ի ֆինանսական և					

	կառավարման ընդհանուր արդյունավետությունը					
	1) Մոնիթորինգի ենթարկել ծրագրային գործողությունների պլանները և ներկայացնել գնահատման գործիքներ	x	x	x	x	x
5.	Վերագոտիավորման իրականացում, ինչպես ներկայացված է ՀՀ կառավարության 2017 թվականի ----- «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին» N----Ն որոշման Հավելվածում					
	1) Տեխնիկական մասի իրականացում	x	x	x	x	x
	2) Երկխոսության հաստատում տեղական համայնքների հետ	x	x	x	x	x
6.	Բարելավել տեղի բնակչության հետ երկխոսությունը					
	1) Ստեղծել գործող Խորհրդատվական խորհուրդ	x	x			
	2) Լուծել ապօրինի ծառահատման խնդիրները	x	x	x	x	x
	3) Մշակել տեղի բնակչության հետ վեճերի կառավարման մեխանիզմներ	x	x			

Վարչական ծրագրի միջոցառումներն իրականացվելու են համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

Պահպանության ծրագիր

1. Նկարագրությունը և կազմակերպչական կառուցվածքը

1) Պահպանության բաժինը պատասխանատու է կենսաբազմազանության պահպանման և ռեսուրսների կայուն օգտագործման ծրագրի համար (այսուհետ՝ Պահպանության ծրագիր), որը լուծում է հետևյալ խնդիրները.

ա. օրենքների կիրառում, անօրինական գործողությունների վերացում,

բ. անտառներում հրդեհների կառավարում,

գ. տեսակների և բնական միջավայրերի պահպանում, դեգրադացված տարածքների վերականգնում,

դ. բնական ռեսուրսների կայուն օգտագործում, տեղանքի պահպանում և վերականգնում,

ե. պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանություն:

2) Իրավիճակի վերլուծության արդյունքում բացահայտվել են հետևյալ խնդիրները.

ա. անօրինական ծառահատումներ,

բ. անտառի որոշ հատվածների դեգրադացում (օրինակ՝ Դիլիջան տեղամասում);

գ. անտառում հրդեհների սպառնալիք, որն առաջանում է հիմնականում անփութության արդյունքում;

դ. քաղցրահամ ջրերի էկոհամակարգերի ոչ կայուն օգտագործում,

ե. որսագողություն,

զ. համայնքային հողերի առկայություն ԴԱՊ-ի տարածքում (որպես անկլավներ),

է. ԴԱՊ-ի սահմանագծման խնդիր,

ը. ԴԱՊ-ի ենթակառուցվածքների ոչ պատշաճ վիճակ,

թ. արդյունավետ պարեկային համակարգի բացակայություն:

3) Դրան զուգահեռ առկա են նաև ներքոհիշյալ հնարավորությունները.

ա. վերոնշյալ մարտահրավերների հասցեականացում,

բ. տեղի բնակիչների ներգրավում ազգային պարկի կառավարման գործընթացներում,

գ. դեգրադացված անտառների վերականգնում և աջակցություն անտառների բնական վերականգնմանը,

դ. ջրային էկոհամակարգերի կառավարման միջազգային փորձի առկայություն;

ե. դեգրադացված անտառերի վերականգնման մեթոդների առկայություն:

2.Նպատակները, խնդիրները և արդյունքները

N	Նպատակները	Խնդիրները	Արդյունքները
1.	Բարձրացնել ծրագրի արդյունավետությունն ու նվազագույնի հասցնել անօրինական գործողությունները՝ հնարավորությունների ստեղծման և տեղի բնակչության հետ համագործակցության արդյունքում:	<p>ա. Պահպանություն, անձնակազմի տեխնիկական վերազինում և կարողությունների հզորացում,</p> <p>բ. ԴԱՊ-ի սահմանների սահմանազծում,</p> <p>գ. Պահպանության ենթակառուցվածքի ձևավորում,</p> <p>դ. Պարեկային համակարգի ներդնում</p> <p>ե. ՊՏ կառավարմանը տեղի բնակչությանը ներգրավելուն ուղղված մեխանիզմների մշակում</p>	<p>Տրամադրված սարքավորումներ, վերապատրաստված աշխատակիցներ</p> <p>ԴԱՊ-ի սահմանազծված տարածքներ,</p> <p>Ենթակառուցվածքների կառուցում,</p> <p>Շուրջօրյա պարեկային համակարգի ներդնում,</p> <p>Տեղի բնակչության ներգրավման մեխանիզմների մշակում,</p> <p>Պահպանության տարրերի METT գնահատական</p>
2.	Դեգրադացված անտառների վերականգնում	Մշակել և իրագործել դեգրադացված անտառների վերականգնման մանրամասն պլան	Վերականգնված տարածք
3.	Կրճատել հրդեհների ռիսկերը՝ հասցնելով նվազագույնի	Մշակել և իրագործել անտառային հրդեհների վերահսկման պլան	Անտառներում հրդեհների նվազում
4.	Նախաձեռնել քաղցրահամ ջրերի էկոհամակարգերի կայուն կառավարում	<p>ա. Մշակել կառավարման պլան և իրականացնել սահմանված միջոցառումներ (ներառյալ, ձկնային ռեսուրսների կայուն օգտագործումը),</p> <p>բ. Պարբերաբար մոնիթորինգի ենթարկել Խաչարձան գետի փոքր ՀԷԿ-երի բնապահպանական հոսքը</p>	Քաղցրահամ ջրերի էկոհամակարգերի կառավարման գործող համակարգ

1-ին նպարակի «ա.», «բ.», «գ.» գործողությունների ներդրումները ներկայացված են աղյուսակ 10-ում, «դ.» և «ե.» գործողությունների ներդրումները ներկայացված են աղյուսակ 8-ում, 2-րդ, 3-րդ և 4-րդ նպատակների գործողությունների ներդրումային կարիքները քննարկման և մշակման ընթացքում են:

3.Նախատեսվող միջոցառումները

1) Ծրագրի արդյունավետության բարձրացում և անօրինական գործողությունների նվազեցում՝

ա. պահպանության անձնակազմի տեխնիկական վերազինում և կարողությունների հղորացում: Ներկայումս ազգային պարկի տեսուչներն ունեն համազգեստ և որոշ սարքավորումներ, որոնց մի մասը չի կարող երաշխավորել նոր կառավարման պլանով նախատեսվող գործառնությունների պատշաճ իրականացումը: Ստորև ներկայացվում է լրացուցիչ անհրաժեշտ սարքավորումների ցանկը, որը կազմվել է ԴԱՊ-ի աշխատակազմի հետ միասին: ԴԱՊ-ի պահպանության ծրագրի և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ լրացուցիչ սարքավորումների և գույքի ցանկը՝

No	Սարքավորումը, գույքը	Քանակ ը	Մոնիթորինգի հաճախականությունը	Սպասարկման պարբերականությունը	ԴԱՊ-ի աշխատակիցներ	Պատվիրակված է
1	Արևային վահանակներ (5 տեղամասային գրասենյակների և 6 Անտառապահների տնակների համար)	11	Յուրաքանչյուր ամիս	Տարեկան	✓	✓
2	Գեներատոր (3 կՎտ) (5 տեղամասային գրասենյակների և 6 անտառապահների տնակների համար)	11	Յուրաքանչյուր եռամսյակ	Տարեկան	✓	✓
3	Նոր արտաճանապարհային մեքենաներ (5 տեղամասային գրասենյակների, 2 շարժական խմբերի համար)	7	Յուրաքանչյուր ամիս	Տարեկան		✓
4	Ձիեր և սարքավորումներ (2-ական յուրաքանչյուր տեղամասի համար)	10	Օրական	Անասնաբույժի ծառայություն՝ ըստ կարիքի		
5	Թվային տեսախցիկ՝ GSM համակարգով	6	Օրական	Ըստ կարիքի		✓
6	Անօդաչու թռչող սարք անօրինական գործողությունների վերահսկման և մոնիթորինգի համար	6	Յուրաքանչյուր եռամսյակ	Տարեկան		✓
7	GPS (5 տեղամասային գրասենյակների, 6	14	Յուրաքանչյուր ամիս	Ըստ կարիքի		✓

No	Սարքավորումը, գույքը	Քանակ ը	Մոնիթորինգի հաճախականությունը	Սպասարկման պարբերականությունը	ԴԱՊ-ի աշխատակիցներ	Պատվիրակված է
	անտառապահների տնակների, 3՝ շարժական խմբերի համար)					
8	GPRS՝ մեքենաների համար	10	Յուրաքանչյուր ամիս	Ըստ կարիքի		✓
9	Ֆոտո/վիդեո նկարահանման սարք	14	Յուրաքանչյուր եռամսյակ	Ըստ կարիքի		✓
10	Հեռադիտակ (6 տեղամասային գրասենյակների և 5 անտառապահների տնակների, 9 հատ շարժական խմբերի համար)	20	Յուրաքանչյուր եռամսյակ	Ըստ կարիքի		✓
11	Գիշերային հսկման հեռադիտակ՝ շարժական խմբի համար	3	Յուրաքանչյուր եռամսյակ	Ըստ կարիքի		✓
12	Քնապարկ՝ շարժական խմբի համար	9	-	Ըստ կարիքի	✓	
13	Վրան՝ շարժական խմբի համար	3	Յուրաքանչյուր եռամսյակ	Ըստ կարիքի	✓	
14	Ամառային համազգեստ	70	-	Ըստ կարիքի	✓	
15	Զմեռային համազգեստ	70	-	Ըստ կարիքի	✓	
16	Անտառապահների սարքավորումների հավաքածու (բահ, դանակ, լապտեր, առաջին օգնության պարագաներ և այլն)	70	Յուրաքանչյուր եռամսյակ	Ըստ կարիքի	✓	
17	Ջրի սառեցման/տաքացման սարք (5 տեղամասային գրասենյակների համար)	5	Օրական	Ըստ կարիքի		✓
18	Սառնարան (5 տեղամասային գրասենյակների համար)	5	Օրական	Ըստ կարիքի		✓
19	Միկրոալիքային վառարան (5 տեղամասային գրասենյակների համար)	5	Օրական	Ըստ կարիքի		✓
20	Շարժման, կրակի և աղմուկի սենսորներ	100	Յուրաքանչյուր կիսամյակ	Ըստ կարիքի		✓

«Դիլիջան» ազգային պարկում պահպանություն իրականացնող աշխատակազմի համար կմշակվի կարողությունների հզորացման ծրագիր, որը կներառի անտառապահների ընդհանուր


պարտականությունների վերաբերյալ թեմաներ, իսկ մասնագիտացված անձնակազմի դեպքում՝ կառավարման այլ ծրագրերի շրջանակներում վերջիններիս պատվիրակված լրացուցիչ պարտականությունների վերաբերյալ դասընթացներ: Անտառապահները, կազմակերպվող դասընթացներում, կվերապատրաստվեն հետևյալ թեմաներով՝ օրենքի կիրառում (կուսումնասիրեն ազգային օրենքները և ԴԱՊ-ի կանոնակարգերը՝ կառավարման պլանին և այլ փաստաթղթերին համապատասխան), արտակարգ իրավիճակներին արձագանքում (կյուրացնեն առաջին օգնություն տրամադրելու և որոնողական, փրկարարական աշխատանքներ իրականացնելու սկզբունքները, հրդեհների դեմ պայքար (կիմտանան անտառներում տարբեր ռելիեֆի պայմաններում հրդեհաշիջման աշխատանքներում), հերթապահ կարգավորիչների հրահանգավորում (կիրահանգավորվեն ահազանգերին պատասխանելու, անտառապահների գործողություններն ուղղորդելու և կանոնակարգելու ուղղությամբ), տեխնիկական սպասարկում (անտառապահները կիմտանան իրենց կողմից հայտնաբերված որոշ սարքավորումների մի շարք թերությունները վերացնելու ուղղությամբ), աշխատանք՝ ավանդական օգտագործողների (տեղի բնակչության) հետ, (անտառապահները կկարողանան ճիշտ դիրքորոշում ընդունել տեղի բնակչության հետ շփվելիս): Ազգային պարկի բոլոր անտառապահները, անկախ իրենց հիմնական պարտականություններից, պետք է լինեն իրենց պահպանության տակ գտնվող բնական և պատմական ռեսուրսների փորձագետն, ուստի կենսաբազմազանության պահպանության, ռեսուրսների կայուն օգտագործման և մոնիթորինգի տեսանկյունից կվերապատրաստվեն հետևյալ թեմաներով՝ տեսակների ճանաչում, (անտառապահները կսովորեն հստակ տարբերակել բույսերի և կենդանիների տեսակները, ինչպես նաև ազգային կարմիր գրքում գրանցված և գլոբալ վտանգված տեսակները, որոնք առկա են ազգային պարկում և հարակից տարածքում), անտառի կայուն կառավարում (անտառապահները պետք է ընդհանուր գիտելիք ունենան այս ոլորտի արդի մոտեցումների, ինչպես նաև սանիտարական հատումների և հատվող տարածքի տեխնիկական սպասարկման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների վերաբերյալ), դեգրադացված անտառների վերականգնում (անտառապահները կտեղեկացվեն համապատասխան մեթոդների, տեխնոլոգիաների և տեխնիկայի վերաբերյալ), արոտավայրերի կայուն օգտագործում (կիրամցվեն գիտելիքներ արոտավայրերի, մարգագետինների որակի, դրանց արտադրողականության ու արածեցման նորմերի մասին՝ գերարածեցումից խուսափելու համար այն հատվածներում, որտեղ թույլատրված է արածեցումը), ջրային ռեսուրսների որակի վերահսկում և քաղցրահամ ջրերի օգտագործման բարելավմանն ուղղված միջոցառումների ձեռնարկում (ԴԱՊ-ի տարածքում կան մի շարք լճեր և ջրային համակարգեր, որոնց աղտոտում է սպառնում՝ ռեկրեացիայի և այլ գործընթացների արդյունքում, ուստի որոշ անտառապահներ համապատասխան փորձառության կարիք կունենան): Որոշ վերապատրաստման ծրագրեր, այդ թվում՝ ընդհանուր կառավարման դասընթացներ, կմշակվեն պահպանության բաժնի ղեկավարի, տեղամասերի պետերի, ավագ անտառապահների, մոնիթորինգի և գիտական բաժնի ղեկավարների համար:

բ. «Դիվիզան» ազգային պարկի տարածքի սահմանների սահմանագծում: Ազգային պարկի տարածքի սահմանագծումը հրատապ խնդիր է՝ հողային վեճերից խուսափելու և արդյունավետ վերահսկումն իրականացնելու համար: Ազգային պարկում ներկայումս հիմնական ճնշումները ծագում են Դիվիզան քաղաքից և Թեղուտ, Հաղարծին, Գոշ, Խաչարձան և Աղավնավանք համայնքներից: Դրանք գործնականում գտնվում են պարկի սահմաններում: Ֆիզլետովո, Հոլվը, Սեմյոնովկա և Ծովագյուղ համայնքները, որոնք հարակից են ԴԱՊ սահմաններին, ևս օգտվում են պարկի ռեսուրսներից (վառելափայտ, արոտավայրեր և մարգագետիններ): Քանի որ ազգային պարկի տարածքն առնչվում է վերոնշյալ 10 համայնքներին, ապա սահմանագծման պլանը նպատակահարմար է մշակել համապատասխան բնակավայրերի ներկայացուցիչների հետ սերտ համագործակցությամբ: Առավել վիճահարույց հատվածների սահմանները պետք է որոշվեն


միասին, իսկ ուղղորդող նշանների ձևը, դաշտային աշխատանքների կարգը և ժամանակացույցը պետք է հաստատվի համատեղ:

գ. Պահպանության ենթակառուցվածքների ձևավորում՝ Ազգային պարկի արդյունավետ պահպանության գլխավոր նախապայմանը բավարար ենթակառուցվածքների առկայությունն է: Ազգային պարկի ներկայիս ենթակառուցվածքները թերի են և սահմանափակվում են գլխավոր ճանապարհների մոտ տեղակայված պահպանության չորս տեղամասային գրասենյակով, որոշ շարժական ուղեփակոցներով, ինչպես նաև գոյություն ունեցող պահանջներին չհամապատասխանող մի քանի փոքր տեղեկատվական նշաններով, ինչը նոր, հավելյալ ենթակառուցվածքների ձևավորման անհրաժեշտություն է առաջացնում: Ստորև ներկայացված Քարտեզ 10-ը ցույց է տալիս ԴԱՊ-ի ներկայիս ենթակառուցվածքները, իսկ Քարտեզ 11-ը՝ առաջարկվողները: Առաջարկվող ենթակառուցվածքների տեղակայման վայրերի մասին մանրամասները ներկայացված են ենթակառուցվածքների տեղակայման պլանում:

Քարտեզ 10. Գոյություն ունեցող ենթակառուցվածքները



Քարտեզ 11. Առաջարկվող ենթակառուցվածքները



Ստորև ներկայացվում են առաջարկվող ենթակառուցվածքները և դրանց տեղակայման վայրերը

No	Անվանումը	Տեղամասը	Քառակուսին	Կոորդինատները	Բարձրությունը, մետր	Տեղանքի նկարագիրը
1	Տեղամասի գրասենյակ	Աղավնավանք	10	N40.72143 E45.10082	1168	Գյուղից 200 մ արևելք, ճանապարհի դեպի կենտրոն
2	Անտառապահի տնակ + թվային տեսախցիկ՝ GSM համակարգով	Շամախյան	48	N40.71617 E44.74972	1634	Ֆիլիտսովո գյուղից 2 կմ արևելք
3	Անտառապահի + տնակ+ թվային տեսախցիկ՝ GSM համակարգով	Գոշ	21	N40.72833 E45.00408	1250	Գոշ գյուղից 300 մ հարավ արևելք, ճանապարհի և արահետի դեպի Գոշ լիճ
4	Անտառապահի տնակ + թվային տեսախցիկ՝ GSM	Հաղարծին	27	N40.77823 E44.92642	1113	Թեղուտ գյուղից 200 մ հյուսիս-արևմուտք, ճանապարհի դեպի

No	Անվանումը	Տեղամասը	Քառակուսին	Կոորդինատները	Բարձրությունը, մետր	Տեղանքի նկարագիրը
	համակարգով					Հաղարծին եկեղեցի և արոտավայր
5	Անտառապահի տնակ + թվային տեսախցիկ՝ GSM համակարգով	Շամախյան	34	N40.75854 E44.83618	1545	Դիլիջանից 2.5 կմ հյուսիս, ճանապարհի դեպի արոտավայր
6	Անտառապահի տնակ + թվային տեսախցիկ՝ GSM համակարգով	Դիլիջան	45	N40.67670 E44.88202	1887	Սեմյոնովկա գյուղից 4.5 կմ հյուսիս արևմուտք, ճանապարհի դեպի արոտավայր
7	Անտառապահի տնակ + թվային տեսախցիկ GSM՝ համակարգով	Աղավնավանք	15	N40.70420 E45.05665	1101	Խաչարձանից 600 մ հարավ, ճանապարհի դեպի արոտավայր
8	Մշտական ուղեփակոց	Դիլիջան	2	N40.75422 E44.94070	1500	Պարզ լիճ տանող ճանապարհից 5.7 կմ հեռավորության վրա, ճանապարհի դեպի մարգագետինին
9	Մշտական ուղեփակոց	Գոշ	10	N40.76309 E45.09411	1997	Գանձաքար գյուղից 12.5 կմ հարավ, ճանապարհի դեպի արոտավայր
10	Մշտական ուղեփակոց	Աղավնավանք	8	N40.72395 E45.14702	2093	Գանձաքար գյուղից 21 կմ հարավ, ճանապարհի դեպի արոտավայր
11	Շարժական ուղեփակոց	Աղավնավանք	37	N40.65948 E44.98262	2049	Ծովագյուղից 4 կմ հյուսիս-արևելք, ճանապարհի դեպի արոտավայր
12	Շարժական ուղեփակոց	Աղավնավանք	30	N40.65352 E45.04401	2349	Ծովագյուղից 11 կմ արևելք, ճանապարհի դեպի արոտավայր
13	Շարժական ուղեփակոց	Աղավնավանք	33	N40.63328 E45.02762	2282	Ծովագյուղից 6.7 կմ արևելք, ճանապարհի դեպի արոտավայր
14	Շարժական ուղեփակոց	Աղավնավանք	15	N40.70229 E45.05915	1165	Խաչարձան գյուղից 900 մ հարավ,

No	Անվանումը	Տեղամասը	Քառակուսին	Կոորդինատները	Բարձրությունը, մետր	Տեղանքի նկարագիրը
						ճանապարհի դեպի արոտավայր
15	Շարժական ուղեփակոց	Աղավնավանք	44	N40.68029 E44.93899	1970	Սեմյոնովկա գյուղից 5 կմ հյուսիս-արևմուտք, ճանապարհի դեպի արոտավայր
16	Շարժական ուղեփակոց	Շամախյան	51	N40.72071 E44.78425	1478	Ֆիոլետովո գյուղից 5 կմ արևմուտք, ճանապարհի դեպի անտառ
17	Շարժական ուղեփակոց	Շամախյան	49	N40.71288 E44.74923	1677	Ֆիոլետովո գյուղից 2 կմ հարավ, ճանապարհի դեպի արոտավայր
18	Շարժական ուղեփակոց	Գոշ	21	N40.72833 E45.00408	1248	Գոշ գյուղից 300 մ հարավ արևելք, ճանապարհի դեպի Գոշ լիճ
19	Շարժական ուղեփակոց	Դիլիջան	28	N40.69896 E44.83463	1570	Դիլիջանից 2 կմ դեպի հարավ-արևելք, ճանապարհի դեպի արոտավայր
20	Շարժական ուղեփակոց	Շամախյան	46	N40.72711 E44.81183	1364	Գրասենյակից 1.6 կմ հարավ-արևմուտք, ճանապարհի դեպի անտառ
21	Շարժական ուղեփակոց	Շամախյան	33	N40.74451 E44.86062	1302	Դիլիջանից 800 մ հյուսիս-արևմուտք, ճանապարհի դեպի մարգագետիններ
22	Շարժական ուղեփակոց	Շամախյան	24	N40.75415 E44.80696	1438	Գլխավոր ճանապարհից 2.6 կմ դեպի Բլղան գետ, արահետ դեպի Ջուխտակ վանք և ճանապարհի դեպի արոտավայր

Ինչպես նկարագրված է վերևում, Աղավնավանքի տեղամասում կկառուցվի տեղամասային գրասենյակ, իսկ առկա 4 գրասենյակները կարիք ունեն վերանորոգման և վերակահավորման: Որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր բոլոր հինգ գրասենյակները կհամարվեն արևային մարտկոցներով: Անտառապահների տնակների տեղանքը ընտրելիս հաշվի է առնվել

վերահսկման առումով հարմար երկրորդային ճանապարհների ռազմավարական դիրքը, քանի որ դրանք օգտագործվում են փայտի և խոտի տեղափոխման համար: Անտառապահների տնակներում, կրկնակի ստուգման համար, կտեղադրվի GSM համակարգով թվային տեսախցիկ, որը կմիացվի ԴԱՊ-ի գլխամասին և կհսկվի համապատասխան հերթապահ կարգավորողի կողմից: Տնակները լիարժեք կենսապայմաններ կապահովեն հերթապահություն իրականացնող երեք անտառապահի համար (50-60 մ² տարածք, 2 ննջասենյակ, խոհանոց, փոքր հյուրասենյակ և սանհանգույց): Ազգային պարկի տարածքում և եզրագծով մեկ կան մի շարք ճանապարհային մուտքեր, որոնք չեն վերահսկվում և որոնց մի մասը միանգամայն ավելորդ է: Այդ մուտքերից երեքը մշտապես կփակվեն, իսկ 12 ռազմավարական ուղղությունների վրա կտեղադրվեն հավելյալ շարժական ուղեփակոցներ և կհսկվեն անտառապահների կողմից: Գոյություն ունեցող ուղեփակոցների մեծ մասը կվերանորոգվեն: Ծրագրի շրջանակներում համապատասխան վայրերում կտեղադրվեն մեծ և փոքր ցուցանակներ, ինչը կնպաստի պարկի պահպանության բարելավմանը և ազգային պարկին հարիր կանոնների պահպանմանը:

դ. Արդյունավետ պարեկային համակարգի ներդնում՝ տարածքների հավասարաչափ բաշխման արդյունքում յուրաքանչյուր անտառապահ կվերահսկի 728-768հա տարածք և անտառապահների լավ պատրաստվածության ու բավարար սարքավորումների առկայության դեպքում, կառավարման պլանով նախատեսվող 45 անտառապահները և 9 հսկիչները կկարողանան արդյունավետորեն իրականացնել իրենց գործառույթները և պարտականությունները: Ներկայումս ցերեկային ժամերին գործում է շարժական խումբ, որի հիմնական պարտականությունը խախտումների վերաբերյալ ահազանգերին անմիջապես արձագանքելն է: Ազգային պարկի անտառապահները և հսկիչները ևս իրենց աշխատանքն ավարտում են ժամը 18.00-ին, և ակնհայտ է, որ նման համակարգը չի կարող ապահովել պարկի կենսաբազմազանության և բնական ռեսուրսների արդյունավետ պահպանումը: Նախատեսվում է իրականացնել 24-ժամյա վերահսկողություն՝ շարժական խմբի լիազորությունների վերափոխման և խմբի հզորացման միջոցով: Շարժական խմբի առաջարկվող կազմը բաղկացած կլինի 13 անդամից՝ խմբի ղեկավար, շարժական խմբի 9 հսկիչ (3 ավագ և 6 կրտսեր) և 3 կարգավորողներ: Վերջիններս ոչ միայն կապ կպահպանեն շարժական խմբերի հսկիչների և անտառապահների հետ, այլև կպատասխանեն արտակարգ զանգերին (կանչերին) և կհամակարգեն շարժական խմբի կամ այլ բաժինների կողմից ահազանգին համապատասխան հրատապ արձագանքի կազմակերպումը (ներառյալ առաջին օգնության ցուցաբերումը): Շարժական խմբի արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումները ներառում են՝ 2 նոր արտաճանապարհային մեքենա և 2 ձի, 1 անօդաչու սարք (Phantom - 2)՝ դժվարանցանելի հատվածների մոնիթորինգի համար, բարձրորակ ֆոտովիդեո տեսախցիկ, բարձր զգայունությամբ և գիշերային տեսանելիությամբ հեռադիտակներ: Պարեկության ընթացքում շարժական խումբը կօգտագործի ԴԱՊ-ի ենթակառուցվածքները ըստ անհրաժեշտության (տեղամասային գրասենյակներ, անտառապահների տնակներ, զբոսաշրջային կացարաններ և այլն):

ե. ՊՏ կառավարմանը տեղի բնակչությանը ներգրավելուն ուղղված մեխանիզմների մշակում՝ տեղի բնակչության հետ ընկերական և գործնական հարաբերությունների հաստատումը ազգային պարկի աշխատակազմի, այդ թվում նաև պահպանություն իրականացնող աշխատողների համար կարևոր պարտականություններից մեկը պետք է հանդիսանա: Տեղի բնակչության ներգրավվածությանը կայուն բնույթ տալու նպատակով առաջարկվում է ստեղծել մեկ կամ մի քանի ֆորմալ կամ կիսաֆորմալ աջակից խմբեր: Աջակից խմբի անդամները պետք է օգնեն անտառապահներին և հսկիչներին, մասնակցեն ԴԱՊ-ի սահմանագծմանը և ենթակառուցվածքների ստեղծմանը, ինչպես նաև պահպանության և ԴԱՊ-

ի կառավարման պլանի այլ ծրագրերին (մոնիթորինգ և գիտական աշխատանքներ , բնապահպանական կրթություն և հանրության հետ կապերի հաստատում):

2) Դեգրադացված անտառների վերականգնում՝ դեգրադացված անտառային տարածքները հիմանականում հարում են Դիլիջան քաղաքին, որոնք տուժել են 1990-ականների էներգետիկ ճգնաժամից: Անտառային ոչնչացված էկոհամակարգերի վերականգնումը՝ միջազգային լավագույն փորձի կիրառմամբ (հատկապես թեք լանջերին), պետք է դիտարկվի որպես ազգային պարկի բնական ռեսուրսների կայուն կառավարման և վերականգնման գործընթացի հիմնական միջոցառում: Անտառների վերականգնումը սովորաբար ծախսատար և տևական գործընթաց է, որի իրականացման համար անհրաժեշտ կլինի միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

3) Մշակել և իրագործել անտառային հրդեհների վերահսկման պլան: Ազգային պարկի կենսաբազմազանությանը սպառնող վտանգներից են անտառային հրդեհները: Թեև ազգային պարկի պահպանության ներկայիս զինանոցում առկա են հրդեհների դեմ պայքարի որոշ սարքավորումներ, իսկ աշխատակիցներն ունեն որոշ գործնական գիտելիքներ, այնուամենայնիվ հրդեհների կառավարման համակարգի հիմքում բացակայում են անտառային հրդեհների կանխարգելման և դրանց դեմ պայքարի ժամանակակից մոտեցումները: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջացել կատարելագործել աշխատակիցների գործնական հմտությունները ժամանակակից մոտեցումների և մեթոդների համաձայն, իսկ հրդեհների կանխարգելման և դրանց դեմ պայքարի ծառայությունը համալրել արդիական սարքավորումներով: Անտառային հրդեհների կանխարգելման և դրանց դեմ պայքարի ծառայությունների կատարելագործման միջոցառումները ևս պահանջում են զգալի ֆինանսական միջոցներ, ուստի դոնոր կազմակերպությունների աջակցությունը դիտվում է որպես նախապայման:

4) Նախաձեռնել քաղցրահամ ջրերի էկոհամակարգերի կայուն կառավարում՝ Ազգային պարկի աշխատակիցները պետք է պարբերաբար իրականացնեն գետերի և դրանց ափերի մոնիթորինգ, ինչպես նաև համապատասխան գործողություններ կիրառեն՝ զբոսաշրջիկների և տեղի բնակչության կողմից դրանց աղտոտումը կանխարգելելու նպատակով: Կարևոր է նաև Գոշի և Աղավնավանքի տեղամասերում Խաչարձան գետի վրա կառուցված ՓՀԷԿ-ի բնապահպանական հոսքի վերահսկումը՝ գետում բնակվող ձկնատեսակների համար բավարար կենսապայմաններ ապահովելու նպատակով: Առաջիկայում անհրաժեշտ է մշակել նաև քաղցրահամ ջրերի պաշարների կայուն օգտագործման կառավարման պլան, որտեղ կսահմանվեն այդ ուղղությամբ իրականացվող միջոցառումները և դրանց ժամանակացույցը:

ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N	1	2	3	4	5	6
	Գործողություններ/Տարիներ	2017	2018	2019	2020	2021
1.	Պահպանությունն իրականացնող անձնակազմի վերապատրաստում և կարողությունների զարգացում					
	1) Անձնակազմին, ինչպես նաև շարժական խմբերին տրամադրել համապատասխան սարքավորումներ		x	x	x	x
	2) Կազմել համապատասխան դասընթացների ծրագրեր	x				
	3) Պահպանությունն իրականացնող անձնակազմի կարողությունների զարգացում	x	x	x	x	x
2.	Սահմանագծել ԴԱՊ-ի սահմանները					
	1) Որոշել GPS կետերը սահմանագծման համար, նախապատրաստել սահմանագծման նախագիծ և այն համաձայնեցնել տեղի շահագրգիռ կողմերի հետ	x	x	x	x	
	2) Նախապատրաստել նյութերը, իրականացնել ֆիզիկական սահմանագծումը և տեղադրել նշանները	x	x	x	x	
3.	Պահպանության ենթակառուցվածքի զարգացում					
	1) Մշակել անտառապահների տնակների և ուղեփակոցների ստանդարտ ձև	x				
	2) Մշակել պահպանման տեղամասային գրասենյակները և անտառապահների տնակները կահավորելու և սարքավորումներով ապահովելու նախագծեր	x				
	3) Կառուցել պահպանման տեղամասային նոր գրասենյակ՝ առկա նախագծերին համապատասխան, բոլոր առկա գրասենյակները կահավորել և ապահովել սարքավորումներով՝ ըստ նոր պլանի				x	x
	4) Կառուցել, կահավորել և սարքավորումներով ապահովել անտառապահների 6 տնակներ		x	x	x	
	5) Տեղադրել 3 մշտական ուղեփակոց		x			x

	6) Կառուցել 14		x			x
	շարժական ուղեփակոց			x		
	7) Պատրաստել և տեղադրել 71 նախազգուշացնող նշան	x	x	x	x	x
4.	Ներկայացնել արդյունավետ պարեկային համակարգ					
	1) Մշակել պարեկային պլան	x				
	2) Ներկայացնել և կիրառել համակարգը	x	x	x	x	x
5.	Մշակել ՊՏ կառավարմանը տեղի բնակչությանը ներգրավելուն ուղղված մեխանիզմեր և ապահովել դրանց մշտական գործունեությունը					
	1) Մասնակցել խորհրդատվական խորհրդի աշխատանքներին՝ տեղի բնակչության ընտրված ներկայացուցիչների մասնակցությամբ	x	x			
	2) Ձևավորել տեղի բնակչության ներկայացուցիչներից կազմված աջակից խմբեր և ներգրավել նրանց դաշտային աշխատանքներում	x	x			

Պահպանության ծրագրի միջոցառումներն իրականացվելու են համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

Մոնիթորինգի և գիտական աշխատանքների ծրագիր

1. Նկարագրությունը և կազմակերպչական կառուցվածքը

1) Կառավարման պլանով նախատեսվում է մոնիթորինգի և գիտական աշխատանքների բաժինը առաջիկայում վերակազմակերպել Մոնիթորինգի, զբոսաշրջության և հանրային իրազեկման բաժնի, որի համակարգմամբ էլ կիրականացվի այս ծրագիրը: Ծրագիրը կկենտրոնանա մոնիթորինգի վրա, որը կիրականացնեն հատուկ վերապատրաստում անցած ազգային պարկի աշխատակիցների, այդ թվում՝ անտառապահների կողմից, թեև որոշ առավել բարդ մոնիթորինգի ծրագրեր կարող են իրականացվել գիտահետազոտական հաստատությունների և ՀԿ-ների հետ համագործակցությամբ: Մոնիթորինգը կանդրադառնա կենսաբազմազանության և բնական ռեսուրսների փոփոխություններին, այդ թվում՝ զբոսաշրջության ծրագրի շրջանակներում իրականացվող գործողություններին, որոնք հնարավոր վնաս կարող են հասցնել էկոհամակարգի ամբողջականությանը: Թեև գիտահետազոտական աշխատանքները ազգային պարկի հիմնական գործառույթները չեն, այնուամենայնիվ, համապատասխան աշխատակիցները պետք է համագործակցեն գիտնականների և հետազոտողների հետ՝ նրանց աջակցելով ու տեխնիկական օգնություն տրամադրելով դաշտային աշխատանքներում: Գիտական և հետազոտական աշխատանքները պետք է սահմանափակվեն ազգային պարկի կառավարման համար կարևոր ոլորտների բացահայտմամբ և առաջնայնությունների սահմանմամբ, ինչպես նաև մատնանշված ծրագրերի իրականացմամբ հետաքրքրված հետազոտողների հետ համագործակցությամբ:

2. Նպատակները, խնդիրները և արդյունքները

N	Նպատակները	Խնդիրները	Արդյունքները
1.	Կառավարման պլանին համապատասխան ծրագրային դրույթների մշակում	Ընթացակարգերի սահմանում, ծրագրային գործիքների տրամադրում, աշխատակազմի կարողությունների զարգացում	Հաստատվել է ծրագիրը Տրամադրվել են անհրաժեշտ գործիքներ՝ ըստ Կառավարման պլանի Վերապատրաստված աշխատակիցներ
2.	Ազգային պարկի կենսաբազմազանության մոնիթորինգի բազմագործառույթային համակարգի մշակում	ա. Խոշոր կաթնասունների մոնիթորինգ (ազնվացեղ եղջերու, գորշ արջ, այծյամ, լուսան, գայլ) բ. Վտանգված թռչնատեսակների մոնիթորինգ (անգղեր, մարեհավ, վայրի հնդկահավ) գ. Բուսատեսակների և անտառային աճելավայրերի վիճակի մոնիթորինգ	Ցուցանիշների միտումները՝ խոշոր կաթնասունների թվաքանակը, ընտրված թռչունների կարգավիճակը, անտառային աճելավայրերը, ՓՀԷԿ-ում բնապահպանական հոսքը,

N	Նպատակները	Խնդիրները	Արդյունքները
		<p>դ. Քաղցրահամ ջրային էկոհամակարգերի վիճակի մոնիթորինգի (գետեր, լճեր, ճահիճներ)</p> <p>ե. Ջրոսաշրջության ազդեցության մոնիթորինգ</p> <p>զ. GIS տվյալների բազա՝ վերոնշյալ բոլոր ցուցանիշների համար</p>	<p>ջրի որակը (Պարզ և Գոշ լճերում), գետերի օրգանական աղտոտումը,</p> <p>զբոսաշրջության ազդեցությունը, ԴԱՊ-ում աճող բուսականությունը</p> <p>ա և բ մասերում թվարկված ֆիզիկական, բիոտիկ և զբոսաշրջության ցուցանիշները</p> <p>ամբողջական տվյալների բազայի առկայություն</p>
3.	<p>Կլիմայի փոփոխության ազդեցության մոդելավորումը և ադապտացիոն պլանի մշակումը</p> <p>էկոհամակարգերի հարմարեցմանն ուղղված միջոցառումների մշակման և իրականացման համար ուսումնասիրությունների իրականացում</p>	<p>Ուսումնասիրել և մոդելավորել կլիմայի փոփոխության հնարավոր ազդեցությունը և մշակել ադապտացիոն պլան</p>	<p>Մշակված ադապտացիոն պլան և դրա իրականացման ռեսուրսներ</p>

2-րդ և 3-րդ նպատակների գործողությունների ներդրումային կարիքները քննարկման և մշակման ընթացքում են:

3. Նախատեսվող միջոցառումները

1) Կառավարման պլանին համապատասխան ծրագրային դրույթների մշակում:

ա. կանոնների և ընթացակարգերի սահմանում. «Դիլիջան» ազգային պարկում մոնիթորինգը պետք է իրականացվի ներքոհիշյալ ընթացակարգերի և կանոնների շրջանակներում պետք է սահմանափակվի էկոհամակարգի ամբողջականությանը և կառավարման արդյունավետությանը առնչվող ցուցանիշներով և խրախուսվի կապերի ստեղծումն ու համագործակցությունը ազգային և միջազգային համալսարանների, գիտական կազմակերպությունների, ՀԿ-ների, ինչպես նաև հնարավոր ֆինանսավորող կազմակերպությունների հետ՝ աջակցություն ստանալու, հետազոտության (մոնիթորինգի) արդյունքները փոխանակելու և կրկնություններից խուսափելու նպատակով, աշխատանքները պետք է իրականացվեն ոլորտի լավագույն փորձի կիրառմամբ և առաջնայնությունը տրվի քիչ ծախսատար, կիրառելի, կառավարմանն ուղղված հետազոտություններին, որոնք կնպաստեն պարկի կենսաբազմազանության, էկոլոգիական գործունեության, սոցիալ-տնտեսական իրավիճակի և ռեսուրսների կայուն օգտագործման առավել լայն ըմբռնմանը, իրականացվող բոլոր աշխատանքների սեփականության իրավունքը կպատվիրակվի ազգային պարկին, եթե այլ

բան համաձայնեցված չէ, ազգային պարկը պետք է հետազոտության և մոնիթորինգի հնարավորություններ ստեղծի, իսկ տվյալների բազան հասանելի դարձնի բոլոր օրինական օգտատերերի համար: Ազգային պարկում հետազոտական և մոնիթորինգի գործընթացի համար կսահմանվեն հետևյալ կանոնները՝ հետազոտությունները կթույլատրվեն միայն կանոնակարգերով սահմանված վայրերում, կենսաբանական ցանկացած տեսակի հավաքումը կթույլատրվի միայն Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի եզրակացության առկայության դեպքում, չպետք է խոչընդոտեն կառավարման այլ ծրագրերի, մասնավորապես՝ այցելուների ծրագրի իրականացմանը և բացասական ազդեցություն ունենան բուսական և կենդանական աշխարհի և պարկի էկոհամակարգերի վրա, հետազոտական հնարավորությունները ազգային պարկը կտրամադրի անվճար, սակայն կվերահսկվեն և կուղղորդվեն ազգային պարկի ղեկավարության կողմից, նախընտրելի է, որ բոլոր տվյալները ունենան աշխարհագրական հղումներ (GPS) և լինեն GIS ձևաչափում:

բ. Ծրագրային գործիքների տրամադրում. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գույքի, գործիքների և սարքավորումների ցանկը ներկայացվում է ստորև:

	Սարքավորումը, գործիքը, գույքը	Քանակ ը	Մոնիթորինգի հաճախականությ յունը	Ստուգման հաճախակա նությունը	Պա րկի աշխ ատ ակա զմ	Պատվ իրակվ ած է
N						
1	Ամենազնաց մեքենա	1	Ամիսը մեկ անգամ	Տարեկան		✓
2	Հերբարիումի պահարան	2	Եռամսյակային	Ըստ կարիքի	✓	
3	Հերբարիումի ցանցեր	100	Ամիսը մեկ անգամ	Ըստ կարիքի	✓	
4	Հերբարիումի թղթեր	500 կգ	Ամիսը մեկ անգամ	Կիրառելի չէ		
5	Համակարգչային ստանդարտ ծրագրեր	3	Կիրառելի չէ	Ըստ կարիքի		✓
6	ArcGIS (ArcInfo) ծրագիր	1	Կիրառելի չէ	Ըստ կարիքի		✓
7	Համակարգիչ	3	Կիրառելի չէ	Ըստ կարիքի		✓
8	Դյուրակիր համակարգիչ	1	Կիրառելի չէ	Ըստ կարիքի		✓
9	Տպող, պատճենահանող սարք	1	Եռամսյակային	Ըստ կարիքի		✓
10	Անօդաչու սարք (Phantom 2)	1	Եռամսյակային	Տարեկան		✓
11	Ֆոտո թակարդներ	40	Ամիսը մեկ անգամ	Եռամսյակայ ին		✓

	Սարքավորումը, գործիքը, գույքը	Քանակ ը	Մոնիթորինգի հաճախականութ յունը	Ստուգման հաճախակա նությունը	Պա րկի աշխ ատ ակա զմ	Պատվ իրակվ ած է
12	Տեսա/լուսանկարահանող սարք	2	Եռամսյակային	Ըստ կարիքի		✓
13	GPS	2	Ամիսը մեկ անգամ	Ըստ կարիքի		✓
14	Հեռադիտակ	4	Եռամսյակային	Ըստ կարիքի		✓
15	Գիշերային հեռադիտակ	1	Եռամսյակային	Ըստ կարիքի		✓
16	Քնապարկ	4	Կիրառելի չէ	Ըստ կարիքի	✓	
17	Վրան	4	Եռամսյակային	Ըստ կարիքի	✓	
18	Խուրջին	4	Կիրառելի չէ	Ըստ կարիքի	✓	
19	Ձեռնափայտ	2	Տարին մեկ անգամ	Ըստ կարիքի	✓	
20	Դաշտային իրերի հավաքածու (դանակ, բահ, լապտեր, առաջին օգնության պարագաներ և այլն)	4	Ամիսը մեկ անգամ	Ըստ կարիքի	✓	
21	Ամառային համազգեստ	4	Կիրառելի չէ	Ըստ կարիքի	✓	
22	Ձմեռային համազգեստ	4	Կիրառելի չէ	Ըստ կարիքի	✓	

Բացի այդ, հարկավոր են հատուկ սարքավորումներ ու ենթակառուցվածքներ ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոնի կառուցման և գործարկման համար, ինչը ներդրումների պլանի բյուջեում ներկայացված է որպես առանձին ծախս:

գ. Դասընթացների կազմակերպում և կարողությունների զարգացում. հետազոտությունների և հատկապես մոնիթորինգի ոլորտում կարողությունների զարգացման համար գույքի կառավարման և մոնիթորինգի ընդհանուր դասընթացներին զուգահեռ կկազմակերպվեն մի շարք հատուկ դասընթացներ, որոնց արդյունավետության նպատակով կընդգրկվեն ազգային ու միջազգային մասնագետներ: Կմշակվեն համապատասխան ընթացակարգեր, իսկ յուրաքանչյուր չափորոշիչի համար կսահմանվեն հստակ ծրագրային ցուցանիշներ, որոնք, ԴԱՊ-ի աշխատակազմը, պետք է կարողանա պատշաճ կերպով մշտադիտարկել: Սրան կհաջորդի մոնիթորինգի ձեռնարկների ու դաշտային տվյալների հավաքման ձևաթղթերի մշակումը և համապատասխան տվյալների բազայի ձևավորումը, որից հետո հնարավոր կլինի մշակել դասընթացային ծրագրերը, և ծրագրային աշխատակիցների, ընտրված անտառապահների և ոլորտի պատասխանատուների համար կազմակերպել համապատասխան դասընթացները: Որոշ գործողությունների պատշաճ իրականացումը երաշխավորելու համար օգտակար կլինի ուսուցողական այցերի կազմակերպումը հարևան երկրներ (օրինակ՝ Վրաստան), ինչպես նաև եվրոպական ազգային պարկեր:

2) Ազգային պարկի կենսաբազմազանության մոնիթորինգի բազմագործառուության համակարգի մշակում: «Դիլիջան» պարկում հետազոտություններ և մոնիթորինգ իրականացնելու հետաքրքրություն ցուցաբերող գիտահետազոտական հաստատությունների հետ ազգային պարկը կարող է կնքել համաձայնագրեր՝ նախապատվությունը տալով ազգային պարկի հետազոտական և մոնիթորինգի առաջնահերթություններին համապատասխանող առաջարկներին: Հետազոտական առաջնահերթությունները կվերանայվեն՝ կախված ազգային պարկի մոնիթորինգի արդյունքում ձեռք բերված տվյալներից, ինչպես նաև ղեկավարության հարցադրումներից: Ընթացիկ հետազոտությունները կվերանայվեն յուրաքանչյուր տարի, մինչդեռ առանցքային առաջնայնությունները կվերանայվեն հինգ տարին մեկ անգամ՝ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի համապատասխան գիտական կազմակերպությունների համագործակցությամբ: ԿԲՀ-ը նախատեսում է աջակցել ԴԱՊ-ին՝ սահմանափակ տեսակների մոնիթորինգի աշխատանքներում: Բացի ԲՀՀ-ի՝ ստորև հիշատակված մոնիթորինգի ծրագրերից, կդիտարկվեն նաև ԿԲՀ-ի առաջարկները, այդ թվում՝ SMART (տարածական մոնիթորինգի և հաշվետվություններ ներկայացնելու գործիք) համակարգի ներդնումը:

ա. Խոշոր կաթնասունների մոնիթորինգ: «Դիլիջան» ազգային պարկում մոնիթորինգի ենթակա հիմնական խոշոր կաթնասուններն են՝ երեք խոշոր գիշատիչներ՝ գորշ արջը (*Ursus arctos*), եվրոպական լուսանը (*Lynx lynx*) և մոխրագույն գայլը (*Canis lupus*), ինչպես նաև երեք խոշոր խոտակերներ՝ այծյամը (*Capreolus capreolus*), վայրի խոզը (*Sus scrofa*) և կովկասյան ազնվացեղ եղջերուն (*Cervus elaphus maral*): Ազնվացեղ եղջերուի մոնիթորինգը չի իրականացվի մինչև վերաբնակեցումը, եթե մինչ այդ այն բնական ճանապարհով չհայտնվի պարկում: Ազգային պարկի կենդանաբանը չի կարող միայնակ իրականացնել մոնիթորինգի աշխատանքները, և դրանում կներգրավվեն պահպանության բոլոր տեղամասերից անտառապահներ: Մոնիթորինգի պլանի նախապատրաստման համար կօգտագործվի ԲՀՀ-ի կողմից մշակված՝ խոշոր կաթնասունների մոնիթորինգի ծրագիրը: Մոնիթորինգի պլանի մշակումից զատ կկազմակերպվի դասընթաց՝ ԴԱՊ-ի կենդանաբանի և ընտրված անտառապահների համար, կիրականացվեն մեկնարկային տարվա դաշտային աշխատանքները, որոնց կմասնակցեն ԲՀՀ-Հայաստան և գիտական կազմակերպությունների մասնագետները, իսկ տվյալների հավաքագրմանը և մշակմանը կմասնակցեն նաև աջակից խմբերի կամավորները, կենդանաբանը և անտառապահները:

բ. Թռչնատեսակների մոնիթորինգ: ԴԱՊ-ի մոնիթորինգի ծրագրի առաջին փուլում նպատակահարմար է մոնիթորինգի գործողությունները կենտրոնացնել սահմանափակ թվով հիմնական և էնդեմիկ թռչունների տեսակների վրա՝ ներառելով գիշատիչների խումբը և երկու կովկասյան էնդեմիկ տեսակ՝ կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewicz*) և վայրի հնդկահավը (*Tetraogallus caspius*): Մոնիթորինգի պլանի նախապատրաստման համար կօգտագործվի ԲՀՀ-ի կողմից մշակված թռչնատեսակների մոնիթորինգի ծրագիրը: Մոնիթորինգի պլանի մշակումից զատ, կկազմակերպվի դասընթաց՝ ԴԱՊ-ի կենդանաբանի և անտառապահների համար կիրականացվեն մեկնարկային տարվա դաշտային աշխատանքները, որոնց կմասնակցեն ԲՀՀ-Հայաստան և գիտական կազմակերպությունների մասնագետները, իսկ տվյալների հավաքագրմանը և մշակմանը կմասնակցեն նաև աջակից խմբերի կամավորները, կենդանաբանը և անտառապահները:

գ. Բուսատեսակների և անտառային աճելավայրերի վիճակի մոնիթորինգ: Բույսերի գույքագրումը և հերբարիումի ստեղծումը ԴԱՊ-ում իրականացվելիք հիմնական ուսումնասիրությունների կարևորագույն տարրերից է, որը գիտական հիմք կստեղծի խիստ պահպանման կարիք ունեցող բույսերի լրացուցիչ, տարածքների հայտնաբերման, ինչպես նաև հատկապես բույսերով հետաքրքրվող այցելուների համար գրքերի և դաշտային ուղեցույցերի մշակման ու տպագրման համար: Ազգային պարկի անտառային գոտիների կայունության

ապահովման նպատակով (հատկապես անտառային ռեսուրսների օգտագործումը թույլատրելի տարածքներում), անտառային ռեսուրսների գույքագրումը և մոնիթորինգը պետք է հանդիսանա մոնիթորինգի ծրագրի հիմնական բաղադրիչը՝ ուշադրությունը սևեռելով տեղի բնակչությանը վառելիքայտով մատակարարելու, ապօրինի անտառահատումների և անտառների որոշ հատվածների դեգրադացման և դրանց դեգրադացման գործոնների վրա: Մոնիթորինգի ընթացակարգերը կմշակվեն համապատասխան հաստատությունների և մասնագետների կողմից՝ բաժինների աշխատակիցների մասնակցությամբ, իսկ բոլոր մասնակիցների համար կկազմակերպվեն վերապատրաստում դասընթացներ:

դ. Քաղցրահամ ջրային էկոհամակարգերի վիճակի մոնիթորինգ: Քաղցրահամ ջրային էկոհամակարգերի (Պարզ և Գոշ լճերը և պարկի տարածքի գետերը) որակի և կենսաբազմազանության մոնիթորինգը կարևորվում է տեղի բնակչությանը խմելու ջրի մատակարարման և էկոտորիզմի առումով: Ցուցանիշները և մոնիթորինգի ընթացակարգերը պետք է մշակվեն համապատասխան հաստատությունների և մասնագետների կողմից՝ համապատասխան աշխատակիցների հետ համատեղ, որոնք պատասխանատու կլինեն պարկում քաղցրահամ ջրերի էկոհամակարգի մոնիթորինգի համակարգման համար: ՄԳ բաժնի ղեկավարը և կադաստրի (մոնիթորինգի) մասնագետը կվերապատրաստվեն և նրանց կտրամադրվի հատուկ սարքավորումներ՝ պարտականություններն իրականացնելու նպատակով: Ընտրված անտառապահները ևս կվերապատրաստվեն՝ մոնիթորինգի դաշտային աշխատանքներն իրականացնելու համար:

ե. Զբոսաշրջության ազդեցության մոնիթորինգ: Թեև ներկայումս սակավաթիվ են ազգային պարկ այցելողները, այնուամենայնիվ ակնկալվում է, որ մի շարք ծրագրերի զարգացմանը զուգընթաց այցելուների թիվը արագորեն կաճի: Ուստի անհրաժեշտ է ներդնել զբոսաշրջության մոնիթորինգի ծրագիրը՝ առաջընթացն ու հնարավոր ազդեցությունը գնահատելու համար: ԲՊՄՄ ուղեցույցում նշվում է պահպանվող տարածքներում զբոսաշրջության մոնիթորինգի երկու հիմնական ոլորտ՝ առաջինը *Այցելուների ազդեցության մոնիթորինգ*, քանզի նրանք ունենում են բնապահպանական և սոցիալական ազդեցություն և անհրաժեշտ է հասկանալ և կառավարել այդ ազդեցությունները: Ուստի անհրաժեշտ է մշակել համապատասխան ցուցանիշներ, վերլուծել դրանք, գնահատել այցելուների ազդեցությունը և որոշել, թե ինչ գործողություններ են անհրաժեշտ՝ խնդիրները հասցեագրելու համար: Երկրորդը՝ *Ծառայությունների որակի մոնիթորինգ*, ինչը թույլ կտա պարզել ծառայությունների այն նպաստավոր տիրույթը, որը նպատակահարմար է տրամադրել այցելուին: Ցուցանիշները մշակելիս հաշվի կառնվեն հետևյալ նկատառումները, որ դրանք պետք է սահմանեն զբոսաշրջության զարգացման պայմանները և արդյունքները (օրինակ՝ մարդկային գործունեության արդյունքում ազդեցություն կրած պարկի մակերեսը կամ զբոսաշրջությունից ստացված տարեկան եկամուտը), այլ ոչ թե գործողությունները (օրինակ՝ ծրագրի վրա ծախսված գումարը), դրանք պետք է լինեն նկարագրողական, այլ ոչ թե գնահատականներ տան, դրանք պետք է չափելի լինեն ,դրանք պետք է լինեն սակավաթիվ, սակայն կարևոր: Մոնիթորինգի պլանի մշակման առաջնային փուլում կարող է օգտագործվել հարևան երկրների ազգային պարկերի փորձը և մոնիթորինգի աշխատանքներում ներգրավված անձանց ուսուցողական այցերի կազմակերպումը, որը կլինի այս ոլորտում կարողությունների զարգացմանն ուղղված կարևորագույն քայլ: Ուսուցողական այցերի համար թիրախային պահպանվող տարածքներ կարող են լինել Վրաստանի ազգայի պարկերը մասնավորապես՝ Գերմանիայի կառավարության աջակցությամբ ստեղծված Բորժոմի-Խարազաուլին և Նորվեգիայի կառավարության աջակցությամբ ստեղծված՝ Մթիրալան: Բացի այդ, ուսուցողական այցը դեպի Եվրոպա խիստ արժեքավոր կլինի ԴԱՊ-ի կարողությունների զարգացման համար: Յանկացած դեպքում ԴԱՊ-

ում զբոսաշրջության մոնիթորինգի պլանի մշակումը կպահանջի միջազգային փորձագետների աջակցությունը:

գ. Տվյալների էլեկտոնային բազայի մշակում: Ծրագրի հիմնական նպատակներից է տեղեկատվական համակարգի ստեղծումը, որը կներառի ԴԱՊ-ի կառավարման և շահագործման համար առաջնահերթ տվյալների հետևյալ բազաները՝ կլիման, այդ թվում՝ անձրևները, ջերմաստիճանը և այլն, անտառի մոնիթորինգ՝ պարկի բոլոր շահագործվող և ակտիվորեն կառավարվող տարածքներում, հազվագյուտ տեսակների կարգավիճակը և տարածվածության արեալը, GIS, որը պետք է դառնա ԴԱՊ-ի տվյալների բազայի անբաժան մասը: GIS-ի տվյալների բազան պետք է ներառի Պարկի տեղադրությունը Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի համատեքստում, ԴԱՊ-ի քարտեզը բոլոր գոտիներով, այդ թվում՝ բուֆերային գոտին, Պարկի ռելիեֆը, լանջերի տեղադրությունը, լանջերի թեքությունները, երկրաբանությունը, հողային ծածկույթը և էկոհամակարգերը, սպառնալիքի ենթակա հիմնական տեսակների տեղադրությունը, մշակութային, պատմական և բնական արժեքները (վանքերը, եկեղեցիները, հանքային աղբյուրները, ջրվեժները և այլն), անտառները, հողի օգտագործումը և տիրապետումը, ճանապարհները, բուֆերային (աջակցության) գոտու համայնքները, Պարկի դեգրադացված էկոհամակարգերի տարածքները, Պարկի պահպանության տեղամասերը (ենթատեղամասերը) և անտառապահների բաշխումը ըստ տեղամասերի (ենթատեղամասերի), Պարկի տարբեր ծրագրերին առնչվող ենթակառուցվածքները. պահպանություն (անտառապահների տնակներ, ճանապարհային, կանխարգելիչ նշաններ, ապաստարաններ եւ այլն), զբոսաշրջություն (այցելուների կենտրոն, արշավների վայրեր, հանգստի տարածքներ, արահետներ, տեղեկատվական վահանակներ, նշաններ, ապաստարաններ եւ այլն), մոնիթորինգ և գիտական աշխատանքներ (հետազոտության տարածքներ, բազմացման կենտրոն, տնկարաններ և այլն), բնապահպանական կրթություն և հանրային իրազեկում (արշավների վայրեր, բնապահպանական կրթական կենտրոններ կամ ակումբներ և այլն), զարգացման ենթակառուցվածքները, որոնք սպառնում են պարկի ամբողջականությանը (հիդրոէներգետիկա, հանքարդյունաբերություն և այլն), գյուղատնտեսական կենդանիների շարժման համար նախատեսված ճանապարհային միջանցքները, հրդեհներ: Տվյալների բազան պետք է գործի GIS-ի համապատասխան ծրագրի հետ, որպեսզի հնարավոր լինի հղում կատարել և հստակորեն քարտեզագրել տեղեկությունը: Կադաստրի և մոնիթորինգի մասնագետը պատասխանատու կլինի բազայի գործարկման համար՝ անհրաժեշտության դեպքում մոնիթորինգի ծրագրի բոլոր աշխատակիցների աջակցությամբ: Տվյալների բազային զուգահեռ, անհրաժեշտ է մշակել և արխիվացնել ԴԱՊ-ի և դրան շրջապատող տարածքի մասին տպագրված և չիրապարակված նյութերի պահպանման համակարգ:

3) Կլիմայի փոփոխության ազդեցության մոդելավորումը և ադապտացիոն պլանի մշակումը. կլիմայի փոփոխության մարտահրավերին նախապատրաստվում են ամենուր, այդ թվում մեր երկրում, ուստի խիստ կարևոր է մշակել ադապտացիոն պատշաճ մեխանիզմներ, մշակել կոնկրետ միջոցառումներ և իրականացնել դրանք: Թեև այդ միջոցառումների իրականացումը պետք է սկսվի հինգ տարի անց՝ այս կառավարման պլանի վերանայումից հետո, այնուամենայնիվ անհրաժեշտ է մինչ այդ կատարել հետազոտություն՝ հաշվի առնելով տարբեր՝ ամենահավանական սցենարները: Մոդելավորման առաջնային թիրախը կհանդիսանա ԴԱՊ-ին բնորոշ անտառային էկոհամակարգերը մասնավորապես լայնատերև կաղնու և հաճարենու անտառները և սոճուտները: Հետազոտության արդյունքների հիման վրա կմշակվեն համապատասխան ադապտացիոն մոտեցումներ (մեխանիզմներ): Այդ նպատակով կընդգրկվեն ազգային և միջազգային փորձագետներ՝ սպառնալիքների գնահատման, ինչպես նաև կենսամիջավայրերի մոդելավորման և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան

ադապտացիոն պլանի մշակման աշխատանքներում: ԴԱՊ-ի համապատասխան աշխատակիցները կաջակցեն նրանց և կմասնակցեն ադապտացիոն միջոցառումների մշակմանը: Կլիմայի փոփոխության մոդելավորումը սովորաբար շատ ծախսատար և առանց դոնորների աջակցության ԴԱՊ-ի համար իրատեսական չի լինի դրա իրագործումը: Այդ նպատակով ահրաժեշտություն կլինի դիմել միջազգային գործընկեր կազմակերպություններին՝ դոնորների աջակցության ակնկալիքով:

Աղյուսակ 4

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ և ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N	1	2	3	4	5	6
	Գործողություններ/Տարիներ	2017	2018	2019	2020	2021
1.	Սահմանել կանոններ ու ընթացակարգեր, տրամադրել համապատասխան ծրագրային գործիքներ և զարգացնել աշխատակազմի կարողությունները					
	1) Սահմանել կանոններ ու ընթացակարգեր՝ ըստ Կառավարման պլանում ներառված ուղղորդող սկզբունքների և առաջարկությունների	x				
	2) Տրամադրել ծրագրի համար անհրաժեշտ սարքավորումներ		x	x	x	x
	3) Մշակել համապատասխան դասընթացների ծրագրերը	x				
	4) Զարգացնել աշխատակազմի կարողությունները	x	x	x	x	x
2.	Մոնիթորինգի ենթարկել խոշոր կաթնասուններին (գորշ արջ, լուսան, գայլ, եղջերու, վայրի խոզ, ազնվացեղ եղջերու)					
	1) Նախաձեռնել և իրականացնել կաթնասունների մոնիթորինգը՝ ըստ ԿԲՀ-ի կողմից մշակված խոշոր կաթնասունների մոնիթորինգի ծրագրի	x				
	2) Իրականացնել նախատեսված գործողությունները	x	x	x	x	x
3.	Մոնիթորինգի ենթարկել թռչուններին (գիշատիչներ, կովկասյան կաքավ, կասայիան հնդկահավ)					
	1) Մշակել մոնիթորինգի ծրագիրը՝ ըստ ԿԲՀ -ի կողմից մշակված թռչունների մոնիթորինգի առկա ծրագրի	x				
	2) Իրականացնել նախատեսված գործողությունները	x	x	x	x	x
4.	Իրականացնել բույսերի տեսակների ինվենտարիզացիա և մշտադիտարել անտառային աճելավայրերի վիճակը					

	1) Ստեղծել գիտական հենք ունեցող հերթարիում	x	x			
	2) Մշակել անտառի մոնիթորինգի ծրագիր	x	x			
	3) Իրականացնել մոնիթորինգի ծրագիրը		x	x	x	x
5.	Մոնիթորինգի ենթարկել քաղցրահամ ջրի էկոհամակարգերի կարգավիճակը					
	1) Մշակել քաղցրահամ ջրային էկոհամակարգերի մոնիթորինգի ծրագիր (Պարզ և Գոշ լճերի և գետերի համար)				x	
	2) Իրականացնել մոնիթորինգի ծրագիրը				x	x
6.	Ստեղծել էլեկտրոնային տվյալների բազա					
	1) Մշակել կամ գնել համակարգչային ծրագիր տվյալների բազայի համար	x				
	2) Մուտքագրել առկա տվյալները և նյութերը տվյալների բազա	x	x			
	3) Կանոնավոր կերպով թարմացնել բազան	x	x	x	x	x

Մոնիտորինգի և գիտական աշխատանքների ծրագրի միջոցառումներն իրականացվելու են համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

Ազնվացեղ եղջերուների վերաբնակեցման ծրագիր

1. Նկարագրությունը և կազմակերպչական կառուցվածքը

1) «Դիլիջան» ազգային պարկը նախաձեռնել է ազնվացեղ եղջերուների վերաբնակեցման ծրագիրը, որը կշարունակվի առնվազն 7-10 տարի: Ազնվացեղ եղջերուների վերաբնակեցման ծրագիրը հանդիսանում է մոնիթորինգի և գիտական աշխատանքների ծրագրին փոխկապակցված ծրագիր, որի աշխատակիցները կհամագործակցեն մոնիթորինգի և գիտական աշխատանքների թիմի հետ: Ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոնի կազմակերպչական կառուցվածքը ներկայացված էր կառավարման պլանի 4-րդ բաժնում:

2. Նպատակները, խնդիրները և արդյունքները

N	Նպատակները	Խնդիրները	Արդյունքները
1.	Կովկասյան Ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոնի հիմնումը և այդ կենդանիների խմբի ձևավորումը	<p>ա. 10 հա տարածքի ցանկապատում և ենթակառուցվածքների ձևավորում</p> <p>բ. Բազմացման կենտրոնի սարքավորումներով ապահովումը և կահավորումը,</p> <p>գ. Բազմացման կենտրոնի անձնակազմի վերապատրաստումը,</p> <p>դ. 15 ազնվացեղ եղջերուի ձեռքբերում և բազմացում,</p> <p>ե. Բազմացված կենդանիների բնակեցումը պարկի տարածքում և մոնիթորինգի իրականացում:</p>	<p>Ցանկապատված տարածք և ձևավորված ենթակառուցվածքներ (պահակակետ, տնակ, կերի պահեստ),</p> <p>Սարքավորումներ (ամենազնաց ավտոմեքենա, GSM տեսախցիկներ, համակարգիչներ և այլն),</p> <p>վերապատրաստված աշխատակիցներ, 15 ազնվացեղ եղջերու,</p> <p>Ազատ պայմաններում եղջերուների առկայություն,</p> <p>Հաջողությամբ գործող ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոն</p>


3. Նախատեսվող միջոցառումները

1) ԲՀՀ Հայաստանը՝ ՀՀ բնապահպանության նախարարության նախարարության հետ համատեղ և ԲՀՀ Գերմանիայի, ԿԲՀ-ի, Օրանժ Հայաստանի և HSBC բանկ Հայաստանի ֆինանսական աջակցությամբ արդեն իսկ նախաձեռնել է Կովկասյան ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագիրը, Կովկասյան ազնվացեղ եղջերուն (*Cervus elaphus maral*) 19-րդ դարի վերջերին տարածված էր Հայաստանում և հանդիպում էր երկրի հյուսիսային և հարավային անտառներում, այդ թվում՝ Դիլիջանի տարածքում, Բարգուշատի և Զանգեզուրի լեռնաշղթաներում: Ազնվացեղ եղջերուն մինչև 1950-ական թվականները դեռևս հանդիպում էր Մեղրիի, Բարգուշատի եւ Զանգեզուրի լեռնաշղթաներում: Այսօր որոշ առանձնյակներ երբեմն հայտնվում են ազգային պարկի տարածքում: Այս տեսակն ընդգրկված է Հայաստանի Կարմիր

գրքում՝ որպես խիստ վտանգված (CR) տեսակ: Ծրագրի գործողությունները ներառում են ԴԱՊ-ում բազմացման կենտրոնի հիմնումը և աշխատակիցների վերապատրաստումը, ազնվացեղ եղջերուի 4 արու և 11 էգ կենդանիների ձեռքբերումը և բազմացումը, բնության մեջ տարածումը և մոնիթորինգի իրականացումը:

ա. Բազմացման կենտրոնի հիմնում: Կովկասյան ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոնի ստեղծման համար անհրաժեշտ հիմնական ենթակառուցվածքները ներառում են. ցանկապատված տարածքը (10 հա), պահակակետերը, և խոտի ու կերի պահեստարանները: Բազմացման կենտրոնի տարածքը ընտրվել է ԲՆ, ԲՀՀ և ԴԱՊ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ: Բազմացման կենտրոնի տեղադիրքը ներկայացված է 12-րդ քարտեզում:

Քարտեզ 12. Կովկասյան ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոնի տեղադիրքը



բ. Բազմացման կենտրոնը սարքավորումներով ապահովումը և կահավորումը: Բազմացման կենտրոնի կառույցները պետք է կահավորվեն և ապահովվեն անհրաժեշտ սարքավորումներով: GSM տեսախցիկներ կտեղադրվեն ցանկապատված տարածքի ներսում և դրսում՝ տարածքի և կենդանիների մշտադիտարկման նպատակով: Տեսախցիկների տեսավահանակները կտեղադրվեն պահակակետերում: Վերջիններս կապահովվեն սեղաններով, աթոռներով և գրապահարաններով: Կտեղադրվեն համակարգիչ և թվային տեսախցիկներ: Կենտրոնին կտրամադրվի ամենազնաց մեքենա:

գ. Բազմացման կենտրոնի անձնակազմի վերապատրաստումը: Բազմացման կենտրոնի աշխատանքների համար կհավաքագրվեն աշխատակիցներ, որոնք կվերապատրաստվեն:

դ. 15 ազնվացեղ եղջերուների ձեռքբերումը և բազմացումը: Կովկասյան ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոնի համար Ռուսաստանից և Վրաստանից ձեռք կբերվի 15 ազնվացեղ եղջերու (ակնկալվում է, որ Վրաստանից կենդանիները ձեռք կբերվեն անվճար): Կենդանիների հայթայթման, գնման և տեղափոխման բոլոր աշխատանքները կիրականացվեն ԲՀՀ Հայաստանի կողմից: Տեղափոխված կենդանիները 3 ամիս կխնամվեն կարանտինային

բաժնում, իսկ հետո բաց կթողնվեն հիմնական ցանկապատված տարածք: Կենդանիների խնամքն ու բազմացումը կիրականացվի ԲՀՀ Հայաստանի վերահսկողության ներքո՝ ԲՀՀ ծրագրի շրջանակներում միջազգային փորձագետի կողմից մշակված ազնվացեղ եղջերուի բազմացման ծրագրի համաձայն:

ե. Բազմացված կենդանիների բնակեցումը պարկի տարածքում և մոնիթորինգի իրականացում: Բազմացման կենտրոնում ծնված կենդանիները 5 տարեկան հասակից բաց կթողնվեն ազգային պարկ: Նախնական փուլում բաց կթողնվի առնվազն 5 կենդանիներից բաղկացած խումբը, այդ թվում՝ մեծահասակ արու եղջերու: Բաց թողնված կենդանիներին կամրացվեն ռադիո տպիչներ՝ նրանց շարժն ուսումնասիրելու և հնարավոր սպառնալիքները կանխարգելելու նպատակով: Այս նախաձեռնության հաջողությունը խիստ կախված է ԴԱՊ-ի կառավարման ծրագրերի բարեփոխումներից, ինչը թույլ կտա նվազագույնի հասցնել էկոհամակարգի ամբողջականությանը և տեսակների բազմազանությանը սպառնացող որսագողության դեպքերն ու այլ ապօրինի գործողությունները:

Աղյուսակ 5

ԱԶՆՎԱՅԵՂ ԵՂՋԵՐՈՒԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N	1	2	3	4	5	6
	Գործողություններ/Տարիներ	2017	2018	2019	2020	2021
1.	Ցանկապատել տարածք (10 հա) և կառուցել այլ ենթակառուցվածքներ բազմացման կենտրոնի համար					
	1) Կառուցել ցանկապատ	x				
	2) Կառուցել արահետներ և ճանապարհներ	x				
	3) Կառուցել պահակակետեր	x				
	4) Կառուցել կերի պահեստ	x				
2.	Սարքավորումներով ապահովել և կահավորել կենտրոնը					
	1) Սարքավորումներով ապահովել և կահավորել պահակակետերը	x				
	2) Արտաճանապարհային մեքենա (պիկաս)		x			
3.	Հավաքագրել և վերապատրաստել բազմացման կենտրոնի համապատասխան աշխատակազմ					
	1) Ընտրել, հավաքագրել և վերապատրաստել բազմացման կենտրոնի աշխատակազմին	x				
	2) Վերապատրաստել բազմացման կենտրոնի աշխատակազմին	x				
4.	Ձեռք բերել 15 կովկասյան ազնվացեղ եղջերու և					

	սկսել բազմացման ծրագիրը					
	1) Ձեռք բերել 15 եղջերու	x	x			
	2) Խնամել և բազմացնել կենդանիներ կենտրոնում	x	x	x	x	x

Ազնվացել եղջերուների վերաբնակեցման ծրագրի միջոցառումներն իրականացվելու են համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

Այցելուների ծրագիր

1. Դիլիջան ազգային պարկի այցելուների ծրագրի տեսլականը

1) ԴԱՊ-ի լեռնային գեղեցիկ լանդշաֆտները, անտառները, հարուստ կենսաբազմազանությունը և մշակութային արժեքները կհանդիսանան տեղական և միջազգային այցելուներին եզակի բնությամբ գրավող և բարձրորակ ծառայություններ առաջարկող զբոսաշրջային առաջարկի գրավականը: Զբոսաշրջությունը կլինի տեղի բնակչության աշխատանքի և եկամտի կայուն միջոց, ինչպես նաև պարկի եկամուտների էական աղբյուրը: Այցելուներին կընդունի լավ կառավարվող և պահպանվող տարածքներ տնօրինող զարգացած ենթակառուցվածքներ ունեցող ազգային պարկը, որտեղ բարձրորակ տեղեկատվություն կմատուցվի տարբեր լեզուներով, իսկ այցելուների ազդեցությունը բնության և կենսաբազմազանության վրա կհասցվի նվազագույնի: Պարկը կծառայի որպես բնության ընձեռած զբոսաշրջային հնարավորությունների տարածաշրջանային կենտրոն, և ազգային ու միջազգային մակարդակներում, համացանցում և լրատվամիջոցներում ներկայացված կլինի ծանրակշիռ մարքեթինգային ռազմավարությամբ: Ազգային պարկի գեղատեսիլ բնության գրկում կազմակերպվող զբոսաշրջությունը կնպաստի պարկի ընկալման բարելավմանը և դրա շնորհիվ՝ շահագրգիռ կողմերի կողմից աջակցության համաձայնության ձեռքբերմանը, ինչն իր հերթին թույլ կտա հասնել պահպանության նպատակներին:

2. Նկարագրությունը և կազմակերպչական կառուցվածքը

1) Այցելուների ծրագրի իրականացումը կօժանդակի պահպանության ծրագրին, քանզի այցելուների ներկայությունը պարկում ենթադրում է խախտումների հնարավոր ականատեսների առկայություն, ինչն էլ կնվազեցնի ապօրինի գործողությունների հավանականությունը: Այցելուների ծրագիրը սերտորեն կապված է նաև կրթության և հանրային իրազեկման ծրագրի հետ, քանի որ այցելուների զգալի մասը կկազմեն դպրոցականներն ու ուսանողները, իսկ տեղի բնակչությունը կարող է ծառայություններ մատուցել զբոսաշրջիկներին ու ստանալ եկամուտներ: Ավելին, այցելուների ծրագիրը ԴԱՊ-ի եկամուտներն ավելացնելու մեծ ներուժ ունի՝ մուտքավճարների և այցելուների համար տարբեր վճարովի ծառայությունների, ինչպես նաև հուշանվերների և տեղական արտադրանքի վաճառքի արդյունքում: Այցելուների ծրագրի արդյունավետությունը պայմանավորված է հետևյալ նախապայմաններով, որ ԴԱՊ-ը պետք է ունենա պատշաճ արտադրանք և ամբողջական ծառայություն տրամադրի, որի դիմաց կարող է սահմանել համապատասխան վճար: Հարկավոր է իրականացնել պարկի տեսանելի սահմանազատում՝ նշանների և տեղեկատվական վահանակների միջոցով, քանզի սահմանազատումը երաշխավորում է իրազեկություն, առանց որի այցելուներից չի կարելի ակնկալել պարկի կանոնների պահպանում, իսկ ՊՏ ղեկավարությանը այն թույլ է տալիս մշտադիտարկել այցելուի վարքագիծն ու կիրառել կանոնները: Տեսանելիությունը նաև նպաստում է ԴԱՊ-ի ռազմավարական դիրքի հաստատմանը Դիլիջանի կենտրոնում, և զբոսաշրջության զարգացման առումով կհաստատի ԴԱՊ-ի կենտրոնական դերը քաղաքում: Տեսանելիությունը պետք է ապահովվի հենց սկզբից, և պարկի տարբերանշանը անմիջապես սահմանվի և արտացոլվի ԴԱՊ-ին առնչվող բոլոր տեսանելի նյութերի վրա (նշաններ,

վահանակներ, տեղեկատվական նյութեր, վեբկայք և այլն): Զբոսաշրջությունը պետք է հիմնվի թիրախային խմբերին ուղղված ռազմավարության վրա, ինչպես նաև զուգակցի «բնությունն ու մշակույթը»՝ բնապահպանական կրթության շեշտադրմամբ: Ըստ ուսումնասիրությունների՝ բնական ռեսուրսների և եկեղեցիներ ու պատմական վայրեր այցելությունների զուգակցումը ամենամեծ ներուժն ունի: Այնուամենայնիվ, միայն գեղեցիկ լանդշաֆտները բավարար չեն այցելուներին գրավելու և զբոսաշրջության եկամուտներն ապահովելու համար: Զբոսաշրջային առաջարկների մշակման ժամանակ պետք է հատուկ շեշտադրվեն բնության վրա հիմնված, ինչպես նաև այսպես կոչված «թեթև» արկածային գործողությունները: Դիլիջան քաղաքի կարգավիճակը՝ որպես հանգստավայր, կարևորվում է տուրիստական ատրակցիոնների և գործողությունների մոտ լինելը քաղաքի կենտրոնին: Էկո-կրթության և գվարճանքների զուգակցումը պետք է համապատասխանի այցելուների մեծ մասի պահանջներին (ազգային և միջազգային): Այս առումով հնարավոր առաջարկներն կարող են հանդիսանալ «հողային արվեստի» երթուղին, պարանոց ծառից ծառ անցնելու ուղին, զիփ լայնը, երեխաների համար արկածային երթուղին, «Արկածային կենտրոնը», կենդանիների այգին, բուսաբանական երթուղին՝ տնկարանով և վաճառակետով: Կիրախուսվեն նաև բազմաբնույթ արշավները, թռչունների դիտումը, ծիավարությունը և այլն: Դիլիջան քաղաքում իրականացվող բարեփոխումները և Դիլիջանի Զարգացման Հիմնադրամի գործունեությունը նոր հեռանկարներ են ստեղծվում ազգային պարկի համար և այցելուների ծրագիրը կազմվել է զարգացման հեռանկարներին համահունչ:

3. Նպատակները, խնդիրները և արդյունքները

N	Նպատակներ	Խնդիրները	Արդյունքները
1.	Աշխատակիցների ու զբոսավարների կարողությունների զարգացում, սարքավորումներով ապահովում	Մշակել մոդուլներ, կազմակերպել դասընթացներ և տրամադրել սարքավորումներ	Վերապատրաստված աշխատակազմ առկա սարքավորումներ
2.	Նոր զբոսաշրջային արտադրանքի ստեղծում ու ծառայությունների բարելավման միջոցով ԴԱՊ-ի գրավչության բարձրացում	Ստեղծել նոր արտադրանք ու ծառայություններ և բարելավել առկա ծառայությունները (ցուցանմուշներ ու թեմատիկ երթուղիներ, բնապահպանական կրթություն, ինչպես նաև արկածային առաջարկներ (արշավներ, թռչունների դիտում, ծիարշավ, լեռնային հեծանվարշավ և այլն)	Բազմաբնույթ ծառայությունների առկայություն
3.	ԴԱՊ-ի ճանաչելիության ընդարձակում	ա. Բարելավել տեղեկատվությունը, բ. Ստեղծել տեղեկատվական կենտրոն	Տեսանելի տեղեկատվության և տեղեկատվական կենտրոնի առկայություն
4.	Զբոսաշրջիկների ու տուր օպերատորների համար տեղեկատվության և	ա. Մշակել ճանաչելիությունն ապահովող միջոցներ (եզակի բրենդավորում, որը ճանաչելի կլինի բոլոր պրոդուկտների վրա, ինչպիսիք են. տեղեկատվական կենտրոններ,	Մարքեթինգային պրոդուկտների առկայություն, մարքեթինգին

N	Նպատակներ	Խնդիրները	Արդյունքները
	մարքեթինգային ուղիների մշակում	վեբկայք, նշաններ, տեղեկատվական վահանակներ և գոտու սահմանների ֆիզիկական սահմանագծում բ. Մշակել ԴԱՊ-ի վեբկայքի զբոսաշրջության բաժինը, գ. Մշակել պատշաճ մարքեթինգային պրոդուկտներ	ուղղված միջոցառումներ
5.	Այցելուների բացասական ազդեցության կանխման արդյունքում պարկի ամբողջականության պահպանում և շրջակա համայնքների զարգացմանը նպաստող միջավայրի ստեղծում:	Բարենպաստ միջավայրի ապահովում	Կիրարկման առկա քաղաքականություն Ջարգացող համայնքներ
6.	Նոր զբոսաշրջային առաջարկությունների և առկա ծառայությունների բարելավման արդյունքում պարկի եկամուտների ավելացում	ա. Գործարկել մուտքի և այլ վճարների հավաքման թափանցիկ համակարգ, բ. բարձրակարգ ծառայությունների վրա հիմնված եկամուտների գոյացում	Մուտքի և այլ վճարների գանձման հստակ գործող համակարգ Այցելուներից ստացվող եկամտի աճ

4. Նախատեսվող միջոցառումները

1) Աշխատակիցների ու զբոսավարների կարողությունների զարգացում, սարքավորումներով ապահովում: Կարողությունների զարգացման այս բաղադրիչը կնպաստի աշխատակիցների՝ մասնագիտական գիտելիքների և զբոսավարների՝ օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացմանը: Դասընթացների համար կմշակվեն հետևյալ մոդուլները.

ա. այցելուների կենտրոնի աշխատակիցների համար դասընթացներ ազգային պարկերի մարքեթինգի ոլորտի վերաբերյալ, հատկապես այցեքարտերի, տեղեկագրերի դիզայնի և մարքեթինգային հաղորդակցության այլ տարրերի ուղղությամբ,

բ. Անգլերենի բարձրորակ կուրսեր՝ ԴԱՊ-ի աշխատակիցների, հատկապես զբոսավարների համար,

գ. Վեբկայքի կառավարման դասընթաց՝ այցելուների կենտրոնի աշխատակիցների համար,

դ. «Ընդունելության դասընթաց»՝ ԴԱՊ-ի բոլոր աշխատակիցների համար (մասնագիտական շփումներ այցելուների հետ),

ե. Այցելուների հետ հատադարձ կապի/ ուսումնասիրությունների և վերլուծության դասընթացներ,

զ. IdeA հիմնադրամի ծրագրերի և գաղափարների շուրջ համատեղ աշխատաժողով («Արկածային կենտրոնի» հայեցակարգի քննարկում, համագործակցության ամրապնդում IdeA հիմնադրամի (Դիլիջանի զարգացման հիմնադրամի) հետ),

է. Երթուղիների նշագծման ուղեցույցի մշակում (նախընտրելի են շվեդական չափանիշները), և աշխատակիցների վերապատրաստում,

ը. Բնության (բուսական/կենդանական աշխարհի) վերաբերյալ կանոնավոր դասընթացներ՝ անտառապահների, այցելուների ծրագրի աշխատակիցների և զբոսավարների համար:

թ. Այցելուների կառավարման և մարքեթինգի ոլորտում փորձառություն ձեռք բերելու նպատակով այցելություններ այլ ազգային պարկեր (միջազգային)՝ այցելուների ծրագրի աշխատակիցների համար:

ժ. Թեև այս պահին բաժնի գործունեության համար որևէ սարքավորման կարիք չկա, այնուամենայնիվ թիմի ձևավորվելուն պես կարիք կլինի ձեռք բերել լրացուցիչ գրասենյակային սարքավորումներ (համակարգիչներ, հավանաբար՝ տպիչ սարքեր և այլն):

2) Նոր զբոսաշրջային արտադրանքի ստեղծման ու ծառայությունների բարելավման միջոցով ԴԱՊ-ի գրավչության բարձրացում: Ներկայումս ԴԱՊ-ը իր այցելուներին առաջարկելու համար չունի լիարժեք զբոսաշրջային առաջարկ: Երթուղիները վատ վիճակում են, իսկ ցուցանշանները (տեղեկատվությունը) եթե նույնիսկ առկա են, գտնվում են անբավարար վիճակում: Բացի արշավային որոշ սարքավորումների և տաղավարների վարձակալությունից, ԴԱՊ-ը այլ ծառայություններ չի առաջարկում այցելուներին: Ուստի նոր զբոսաշրջային արտադրանքի ստեղծումը և առկա ծառայությունների բարելավումն ու ընդարձակումը դառնում է առաջնային խնդիր:

ա. Նոր երթուղիների ձևավորում և գոյություն ունեցող երթուղիների բարելավում. պետք է ձևավորվեն նոր երթուղիներ՝ Պարզ լճի, Գոշ լճի, Ջուխտակ վանքերի և Աղավնավանքի շուրջ: Սա կներառի բնության պատմության, հիշարժան փաստերի մեկնաբանմամբ բացատրական վահանակների տեղադրումը և այլն: Նպատակահարմար է հիմնել նոր երթուղիներ, մասնավորապես փոքր «երկաթե ճանապարհ»՝ արկածային երթուղի, որը կկառուցվի՝ լեռնագնացների ակումբի հետ համագործակցությամբ, ինչպես նաև լեռնա-հեծանվային երթուղի, որի կառուցման համար փորձագետների կողմից կմշակվի համապատասխան դիզայն և լեռնային հեծանիվների վարձակալության հայեցակարգ:

բ. Ձիավարության առաջարկ. պետք է մշակվի ձիավարության առաջարկ և դրա իրականացման հայեցակարգ: Միաժամանակ անհրաժեշտ է իրականացնել համապատասխան ուսումնասիրություններ՝ ազգային պարկում ձիավարության ենթակառուցվածք ստեղծելու հնարավորությունը պարզելու համար: Ձիավարության զարգացումը, զբոսաշրջային առաջարկ լինելուց զատ, լավ հնարավորություն է համայնքների ազգաբնակչությանը ազգային պարկի գործառույթներում ընդգրկելու համար:

գ. «Արկածային կենտրոնի» հիման վրա նոր առաջարկների մշակում. եթե ստեղծվի առաջարկվող «Արկածային կենտրոնը», ապա դրա հիման վրա կմշակվեն նոր առաջարկներ, մասնավորապես՝ կհիմնվեն երեխաների համար ինտերակտիվ արկածային երթուղի, մշտական ցուցասրահ, իսկ «Արկածային կենտրոնի» շրջակայքում կարող են առաջարկվել ծառից ծառ պարանով անցնելու ուղի, անտառային քանդակների երթուղի, զիփ լայն և այլն:

դ. Ազնվացեղ եղջերուների դիտահրապարակի ստեղծում. ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոնի հիմնումը և կենդանիների բազմացումը ազնվացեղ եղջերուների դիտահրապարակ ստեղծելու հնարավորություն է առաջարկում, որտեղ կարող են այցելուները մոտիկից դիտել եղջերուներին: Այդ նպատակով անհրաժեշտ է այցելուների համար համապատասխան ենթակառուցվածքներ կառուցել, մասնավորապես տեղեկատվական վահանակներ, տաղավարներ և դիտման հարմարանքներ (թաքստարաններ, դիտումների աշտարակ):

ե. Լեռնային տնակների կառուցում. Լեռնային պարզ տնակների հայեցակարգի մշակումը և ֆինանսական միջոցների առկայության դեպքում դրա իրականացումը հետաքրքիր կլիներ մի քանի օրով այցելող լեռնագնացների համար, սակայն դրա իրատեսական հնարավորությունները կպարզվի միայն ապագայում:


զ. Տնկարանի հիմնում և բույսերի վաճառքի կազմակերպում. ԴԱՊ-ը արդեն հիմնել է փոքր տնկարան՝ ծառերի ու դեղաբույսերի բազմացման համար և ցանկություն ունի ընդլայնել այն: Այնուամենայնիվ, նախքան ընդլայնելը և հետագա քայլերը, պետք է կազմել բիզնես պլան՝ նախագծի իրագործելիությունը գնահատելու համար:

է. Տրանսպորտային (shuttle) ծառայության տրամադրում. քանի որ չկա Դիլիջան քաղաքը պարկի տարբեր հատվածներին կապող հանրային տրանսպորտ, ապա պարկը կարող է տրանսպորտային ծառայություն մատուցել (եթե մասնավոր հատվածը չլուծի այս խնդիրը):

3) «Դիլիջան» ազգային պարկի ճանաչելիության ընդարձակում: «Դիլիջան» ազգային պարկի ճանաչելիության մակարդակի բարձրացմանն ուղղված մեկնարկային գործընթացը պետք է հանդիսանա ազգային պարկի նոր լոգոտիպի մշակումը, ինչպես նաև պարկը բնորոշող գույների և բրենդավորման տարրերի սահմանումը և ազգային պարկի վեբ կայքի ստեղծումը:

